Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԱՌԼԵՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՌԵՔՎԻԵՄ

ԱՌԼԵՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՌԵՔՎԻԵՄ

Երևան
Հեղինակային հրատարակություն
2016

ՀՏԴ 821.19-32 Շահվերդյան
ԳՄԴ 84 (5Հ)-44
Շ 241

Շահվերդյան Ա.
Շ 241 Գարնանային ռեքվիեմ/Ա. Շահվերդյան.– Եր.:
Հեղ. հրատ., 2016.– 148 էջ:

Գիրքը (գրված 2002–2016 թթ.) գրական էտյուդների, պատմվածքների հեղինակային ժողովածու է, որում ներկայացված են գրողի դիտումները, մտորումները, հուշերը կյանքի ու տարբեր երևույթների, մարդ–բնություն և մարդ–հասարակություն հարաբերությունների, մարդկային կերպարների, ճակատագրերի ու զգացողությունների, քաղաքային մշակույթի, մտահոգություններն ու հորդորները՝ շրջակա միջավայրի, բնության պահպանության մասին:

Ժողովածուն արծարծում է անձնային ու համամարդկային, բնապահպանական, հայրենասիրական, հասարակական, խոհափիլիսոփայական նշանակություն ու ընդգրկում ունեցող արդի խնդիրներ:

Գրքում ներկայացված են նաև հեղինակի գրական բլոգ-կայքից (http://arlenshah.wordpress.com) վերցված բնապահպանական նյութեր:

«Գարնանային ռեքվիեմ» գիրքը հասցեագրված է ընթերցողների լայն շրջանի:

ՀՏԴ 821.19-32 Շահվերդյան
ԳՄԴ 84 (5Հ)-44

ISBN 978-9939-0-1787-7
© Շահվերդյան Առլեն, 2016

ԱՌԼԵՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ
«ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՌԵՔՎԻԵՄ» ԳԻՐՔԸ ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՊԱԼԱՏՈՒՄ
(01.04.2016)

ՏՊԱԳԻՐ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ՝
ISBN 978-9939-0-1787-7

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ՝
ISBN 978-9939-0-1788-4

ԳՐՔԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՊԱՇՏՊԱՆՎԱԾ Է:

Սույն էջը նախատեսված է «Գարնանային ռեքվիեմ» գրքի
էլեկտրոնային տարբերակով հրապարակման համար:

ԿՅԱՆՔԻ ԶԱՐԿԵՐԱԿԻ ԲԱԲԱԽՈՒՄԸ

Օրեր առաջ զբոսնում էի այգում, հասա Մ. Նալ-բանդյանի արձանին, արդեն պատրաստվում էի անցնել փողոցը, երբ լսեցի՝ «Թը՛կ, թը՛կ, թը՛կ, թը՛կ», հետո՝ «Դը՛պ, դը՛պ, դը՛պ, դը՛պ»: Շրջվեցի, ձայնը հետաքրքրեց ինձ: «Թը՛կ, թը՛կ, թը՛կ», – լսվում էր շարունակ: Փորձում էի գտնել ձայնի աղբյուրը: Որքան մոտենում էի այն վայրին, որտեղից լսվում էր ձայնը, այնքան ավելի ուժգին էր այդ կը՞տ կըտոցը: Կանգնեցի, որպեսզի հասկանամ, թե դա ինչ ձայն էր, թեև արդեն կռահում էի: Դե պարզ էր, որ Նալբանդյանի արձանը չէր:

Եվ ահա, արձանի հետևի ծառերից մեկի բնի վրա նկատեցի մի խայտաբղետ փայտփորիկի, որը մեծ ջանա-սիրությամբ, ինչքան ուժ ուներ՝ թը՛կ թըկացնում էր բնին: Այնպես էր խփում, որ մտածեցի՝ հիմա ուղեղը կցնցվի:

Ինչքան հետաքրքիր, գեղեցիկ ու բազմազան է կյանքը. քաղաքում այն եռում է, մարդիկ այս ու այն կողմ են շտապում և գուցե չեն էլ նկատում կյանքի փոքրիկ, գեղեցիկ դրվագները, որոնք նույնպես ազդարարում են գարնան գալուստը:

Մենք այնքան ենք խրվել մեր առօրեական հոգսերի ու մեզ հուզող խնդիրների հորձանուտում, որ հաճախ չենք զգում, չենք նկատում մյուս արարածների կյանքը, մեր շրջակա միջավայրի զարկերակը: Այնքան ենք շտապում հասցնել ամեն բան, որ, մանրուքների հետևից ընկնելով, բաց ենք թողնում էական բաները: Այնքան ենք ապրում մեր իսկ ստեղծած աշխարհի հոգսերով, որ հաճախ չենք կարողանում կամ չենք հասցնում պարզապես ապրել: Այդ շտապողականության ու խառնաշփոթի մեջ չենք նկատում

ու գնահատում նաև մյուսների կյանքը, զգացմունքները, չենք զգում բաներ, որոնք մյուսներն էլ են զգում, չենք կարևորում բաներ, որոնք մյուսների համար էլ են կարևոր, երբեմն՝ ունենալով կենսական նշանակություն:

Մեր հոգսերով զբաղված լինելով և մեր նպատակներին հասնելու ճանապարհին մենք մեզ ենք երբեմն մոռանում և անտեսում ենք նաև մյուս կենդանի արարածներին՝ կորցնելով կարևոր հաղորդակցությունը հոգևոր և հուզական աշխարհի, շրջակա միջավայրում և կյանքում ընթացող երևույթների հետ, աշխարհին նայելով միայն մեր՝ մարդու դիտակետից: Ապրում ենք մեր գարունը՝ համոզված լինելով, որ այն եկել է միայն մեզ համար:

Սակայն չէ՞ որ գարունը միայն մեզ համար չէ, որ եկել է, միայն մենք չենք ոգևորվել, եռանդով լցվել, զվարթացել, չէ՞ որ միայն մեր արյունը չէ, որ ամեն գարնան գալստյան հետ եռում է, չէ՞ որ այդ փոքրիկ փայտփորիկի համար էլ է գարո՞ւն, լուսավոր ու արևաշող գարուն:

Այդ պահին հոգիս քնքշությամբ լցվեց, աշխարհն ավելի բարի ու լուսավոր թվաց…

Իսկ փայտփորիկը շարունակում էր կը՛տ կըտացնել ջանադրաբար, կրքոտ ու ինքնամոռաց: Հավանաբար թրթուր էր գտել ծառի կեղևի տակ:

Ես թողեցի փայտփորիկին իր կարևոր գործի վրա ու շարունակեցի իմ ճանապարհը՝ մտածելով, որ պետք է ուշադիր նայել մեր շուրջը. երբեմն մենք չենք նկատում մանրուք թվացող կարևոր բաներ:

15.03.2012

ԱՅՍ ՊԱՀԻՆ

Մոլորակի բնակչության թիվն անցել է վեց միլիարդից և հասնում է յոթի: Քանի՜-քանի՜ մարդ է հենց հիմա ծնվում: Հենց նոր դադարեց բաբախել ինչ-որ մեկի սիրտը կամ ծնվեց նոր սիրտ: Երբ մտածում ես այս ամենի մասին, ապա զգում ես քեզ ժամանակի ու տարածության խաչմերուկում: Մոտդ ուժեղանում է ժամանակի զգացողությունն այն աստիճան, որ ասես նոր բնակլիմայական պայմաններին ադապտացված կենդանի լինես: Ա՜յ, հենց հիմա, հենց այս վայրկյանին պատկերացրեք, որ դուք զգում եք աշխարհի բոլոր մարդկանց զարկերակները: Ա՜յ, հենց այս պահին երեխա ծնվեց, մարդ մահացավ… Հենց այս պահին, երբ մոլորակի մյուս կողմում գիշեր է, մյուսում՝ ցերեկ, քանի՜-քանի՜ զույգեր հենց հիմա անկողնում ուժգին կրքով սիրում ու վայելում են միմյանց, իսկ քանի՜-քանի՜սն էլ հենց այս պահին ձևացնում են, իբր հաճույք ապրեցին: Հե՜նց հիմա պայթյուն տեղի ունեցավ, հե՜նց հիմա քաղաքի բանուկ թաղամասերից մեկում մի քանի տասնյակ անմեղ մարդ զոհ գնաց ահաբեկչությանը, զոհ գնաց հենց այնպես. ապրեցի՛ն, ապրեցի՛ն տարիներ շարունակ ու աննպատակ զոհվեցին: Հենց այս վայրկյանին, այս պահին հուզվում են, լալիս, ծիծաղում, ժպտում, խոսում, լռում, սիրով զբաղվում, խուսափում սեքսից, հաճույքից գալարվում անկողնում ու տնքում, խոստովանում, խաբում, խաբվում, խփում, բռնաբարում, բռնաբարվում, ծեծում, ծեծվում, պայթեցնում, բուժում, փրկում, կործանում: Այս ամենը՝ հե՜նց այս պահին, աշխարհի տարբեր անկյուններում: Ասես ձեռքդ մոլորակի, կյանքի զարկերակին լինի մի պահ: Երբ մտածում ես, որ հենց հիմա մի

նորածին ճչաց ու ազդարարեց իր լույս աշխարհ գալու մասին, իսկ մեկ ուրիշն էլ փակեց աչքերն ու այլևս գոյություն չունի, ապա զգում ես, թե որքան մեծ է մոլորակը, ու որքան կյանք կա նրա մեջ, որքան եռուն է այդ կյանքը, որքան անվերահսկելի: Հենց հիմա աշխարհի մի անկյունում մի գիտնական հայտնագործեց մարդկությունը տասնյակ տարիներ առաջ տանող մի գյուտ, իսկ մեկ ուրիշը իր ռումբի պայթյունով ավերեց ու ոչնչացրեց հազարավոր տարիներ անց մեր օրերը հասած համաշխարհային մշակութային ժառանգության մի որևէ նմուշ, օրինակ, մի գեղեցիկ կոթող: Մարդիկ տարբեր են, իրադրություններն ու հանգամանքները՝ նույնպես: Փորձենք իսկապես մտովի շրջել աշխարհում: Ա՜յ, հենց հիմա մեկը համբուրեց իր սիրելիին ու շշնջաց նրան սիրո խոսքեր, մյուսը վիճում է խանութում՝ մանրադրամը չվերադարձնելու համար, երրորդը հենց այս պահին փորձում է իր հայացքով դյութել սրճարանում դիմացը նստած մեկին, չորրորդը գոռում է իր բանվորների վրա, հինգերորդը հենց նոր կորցրեց կուսությունը, վեցերորդին բժիշկը հենց նոր ասաց, որ նա անբուժելի հիվանդ է, իսկ յոթերորդի ցավացող ատամը վերջապես հեռացրեցին: Հենց հիմա մեկը հազաց, մյուսը փռշտաց, երրորդը նոր-նոր հարբուխով է հիվանդանում, իսկ չորրորդն ընդհանրապես թոքաբորբ է տանում: Ամեն վայրկյանը մենք ապրում ենք, և այդ վայրկյանը ապրում են բոլորը՝ մարդիկ, կենդանիները, բույսերը, լեռներն ու ծովերը, երկինքն ու ամպերը: Այս վայրկյանին վագրը գետնին տապալեց մի մեծ եղջերուի, խոտը ծակեց գետինը ու վեր ձգվեց, անձրևաջուրը հեղեղեց գետը: Ամեն վայրկյանը անկրկնելի է, պետք է ապրել այդ վայրկյանը:

Հիշում եմ, 2007 թվականի ապրիլի 25-ին «Ազատություն» ռադիոկայանի կայքում կարդացի այս լուրը. «Աստղագետները պատմության մեջ առաջին անգամ հայտնաբերել են մի մոլորակ, որը հար և նման է Երկրին: «CNN»-ի վկայությամբ՝ մոլորակը կարող է բնակելի լինել, այն կարող է ունենալ նույն ջերմաստիճանը, չի բացառվում ջրի առկայությունը: «Սա էական քայլ է տիեզերքում կյանքի հայտնաբերման ճանապարհին»,-ասել է Ժնևի համալսարանի աստղագետ Միշել Մեյորը, որը եվրոպացի 10 այլ գիտնականների հետ համատեղ հայտնաբերել է մոլորակը»: Սա էլ դարձյալ թեմայի շուրջ՝ մեկ ուրիշ աղբյուրից. «Առաջին անգամ Արեգակնային համակարգի սահմաններից դուրս հայտնաբերվել է մոլորակ, որը պոտենցիալ կերպով պիտանի է կյանքի համար: Այս հայտնագործությունը կատարել են մի խումբ եվրոպացի աստղագետներ Լա Սիլիեում (Չիլիական Անդեր) գտնվող Հարավային եվրոպական աստղադիտարանում: Իրենց աշխատանքի արդյունքների մասին հաշվետվությունը գիտնականները հրապարակման համար ուղարկել են «Աստղագիտություն և աստղաֆիզիկա» միջազգային շաբաթահանդեսին: Ինչպես հաղորդել են հայտնագործության հեղինակները, Ժնևի (Շվեյցարիա) աստղադիտարանից Ստեֆան Ուդրիի գլխավորությամբ, իրենց հայտնաբերած մոլորակն ստացել է «581 c» պայմանական նշանը: Այն պտտվում է «Կշեռք» համաստեղության «Գլիզ 581» աստղի շուրջը: Երկրագնդից այն բաժանում է մոտավորապես 20,5 լուսային տարի կամ 193 տրիլիոն կիլոմետր: «Գլիզ 581»-ը կարմիր թզուկ է»:

Երբ կարդացի այս լուրը, մտածեցի, թե ինչքան առաջ է ընթացել մարդկությունը. այն արդեն Մոլորակի նման կյանքի համար պիտանի երկնային մարմիններ է գտնում այդ հեռավորության վրա: Մտածեցի, որ ճիշտ եմ կանխազգում. մի օր մարդկությունը բախվելու է այն իրողությանը, որ հայտնաբերելու է անգամ այնպիսի երևույթներ, որոնք շրջադարձային կերպով կփոխեն իր կյանքը: Ի՞նչ է կյանքը, ինչպե՞ս է ծագել այն, զարգացել: Մարդկությունը կբացահայտի մինչ օրս իր համար լիովին չբացահայտված շատ բաներ ու կապշի: Կարդալով այդ լուրը՝ ես կրկին մտածեցի, թե ինչքան մեծ է աշխարհը. ես այդ պահին կարդում էի նոր հայտնագործության մասին, իսկ աշխարհի մեկ ուրիշ անկյունում, օրինակ, Մոնղոլիայում, լեռնաբնակ գյուղացիները քշում են իրենց յակերին ու իմաստուն հայացքով նայում լեռներին: Մոնղոլիա. երկիր, ուր ձմեռն է իշխում գրեթե ամբողջ տարվա ընթացքում, որտեղ մարդն ու ձին միասին կենաց ու մահու կռիվ են տալիս բնության դեմ, որտեղ երկսապատ ուղտերը կեր են հայթայթում ձյան սավանի տակ, որտեղ բրդոտ յակերը շրջում են լեռներում, և որտեղ թավամազ ձյունահովազը ժայռերում դարանում է իր զոհին: Այսպիսին է Մոնղոլիան՝ իր բնաշխարհով, իր կլիմայով, իր մարդկանցով, իր կյանքով: Մոնղոլիայից ցանկացա մտովի տեղափոխվել մեկ ուրիշ տեղ, կարևոր չէր, թե ուր, կարևորը, որ իմ մտավոր շրջայցը ներառեր աշխարհի ամբողջ ներկապնակը: Եվ դարձյալ, թե՜ այդ պահին, թե՜ հիմա սկսեցի մտածել այն մասին, որ հենց այս պահին, հենց այս վայրկյանին, օրինակ, որևէ դարբնոցում դարբինը ծեծում է շիկացած երկաթը, էկվադորում բանաներոն (բանան հավաքողը) ադամաթզի պլանտացիայում իր ու-

սին տանում է քիչ առաջ կտրած բանանների վիթխարի ողկույզը: Այս պահին ձկնորսը շարունակում է պայքարել ծովի ալիքների դեմ, կռվել ու հերթական անգամ զգալ իր անզորությունը ահեղ ծովի դեմ: Ծովի յուրաքանչյուր ալիք բազմակետեր է թողնում: Լուսինը, տեսնելով դա, շարունակում է ժպտալ, նա ծիծաղում է մարդու անզորության վրա: Գիշերը լուսինը շարունակում է լուսավորել ծով դուրս եկած յուրաքանչյուր նավաստու, ձկնորսի ճանապարհը, իսկ ալեկոծությունների ժամանակ թաքնվում է ամպերի հետևում՝ ցույց տալու համար, որ բեմադրության այդ մասում նա դերակատարում չունի: Այս պահին իսպանական մի որևէ ռեստորանում զբոսաշրջիկների մի մեծ խումբ հմայված լսում է ֆլամենկո ու դիտում կրքոտ պասադոբլ, որը իսպանացիներից բացի աշխարհում ոչ մի ուրիշ ազգ այդպես ճիշտ, այդպես անկաշկանդ ու կրքոտ, այդպես բնական ու այդպես ժառանգաբար հղկված չի պարում: Իսպանական պարերը լավագույնս զգալու ու պարելու համար պետք է իսպանացի լինես: Ամեն ազգ ունի իր ազգայինը: Ոչ մի իսպանացի չի կարող քոչարի պարել այնպիսի թափով, այնպիսի կրակով, այնպիսի ոգով, ինչպես հայը: Հենց այս պահին զբոսաշրջիկները շարունակում են կլանված լսել իսպանական երաժշտությունը: Իսպանական կրքոտ խառնվածքը լավագույնս արտացոլվում է ազգային, անդալուզյան հոգեթով երաժշտության՝ մոլեկիրք ֆլամենկոյի հնչյուններում: Ֆլամենկոյի սիրահույզ հնչյունները գերում են բոլորին, դրանք թեթև են, ինչպես գարնան զեփյուռը, նուրբ, ինչպես մանրակաթիլ անձրևը: Ֆլամենկոն հետքեր է թողնում ունկնդրողի «հոգու պատերին», ինչպես անձրևն է «արահետներ» գծում փոշեպատ ապակիների վրա: Ֆլամենկո

լսելիս, թվում է, թե անցնում ես երկնքի ափերով, իսկ անձրևն իր թանձր վարագույրով շղարշում է քեզ շրջապատող իրականությունը և յուրօրինակ պատնեշ դառնում քո ու այդ իրականության միջև: Հենց այս պահին բեդուինները կրակ են անում ու նայում անեզր հորիզոնին: Քոչվոր արաբների կամ, ինչպես նրանց անվանում են, բեդուինների համար, Քուվեյթի անապատները դարեր շարունակ բնակության վայր և կենսակերպ են եղել: Առաջին հայացքից անապատի դժվարին պայմաններում ապրելը գրեթե անհնարին է թվում: Արևը, որ շիկացնում է ոսկե ավազը, և քամին լուրջ խոչընդոտ են այդ վայրերում ապաստանած ցանկացած շնչավոր էակի համար: Սակայն՝ ոչ բեդուինների: Նրանք, մարտահրավեր նետելով բնությանը, արդեն քանի դար շարունակ ապրում են անապատում: Բեդուինների համար անապատում ապրելու ու բնական դժվարությունները հաղթահարելու ամբողջ «պոեզիան» այն է, որ մարդն իր աշխատասիրության և համառության շնորհիվ կարող է ճանապարհ հարթել անգամ լույսի ոսկեղեն շողերով պարուրված անապատում: Հենց այս պահին Վենետիկի ծովաթաթախ նեղլիկ փողոցներից մեկում, գոնդոլայի մեջ, երկու հոգի անուշ համբուրվում են: Նրանց համար այս վայրկյանին միայն իրենց սերն էր, Վենետիկը և ծովի ալիքների վրա օրորվող մակույկը:

Մի օր անցնում էի փողոցով, ամբողջ մայթով մեկ փողոցի փոշու, կեղտի ու մեքենաների ծխի մեջ վաճառում էին կարկանդակներ ու խաչապուրիներ, լահմաջո ու Ղարսի խորոված: «Տուբերկուլյոզի բուն», – մտածեցի: Մարդիկ անցնելիս թքում էին գետնին, մեքենաները ծուխ էին արտազատում ու այդ ամենի մեջ՝ այդ բոլոր ուտելիքները:

Սակայն մի՞թե փողոցային առևտուրն ու սննդի հակահիգիենիկ վաճառքը դրսում բնորոշ է միայն մեր քաղաքին: Իհարկե՝ ոչ: Եվ մտածեցի. «Չէ՞ որ հենց այս պահին Թեհրանում, օրինակ, մի խումբ անցորդներ փողոցում անլվա ձեռքերով ուտում են ոչխարի խաշած փորից պատրաստված սիրաբի: Կամ այնտեղ, օրինակ, հեռավոր Կատմանդուի փողոցներից մեկում անլվա առևտրականը հենց այս պահին գետնին դրված պարկից հանում է չորացրած բլիթը, անլվա բթամատով անցք է անում դրա մեջ, բլիթը լցոնում է խիստ կասկածելի սոուսով, այդ ամենը թրջում խիստ կասկածելի մսաջրի մեջ, որը եփվում է սանիտարահիգիենիկ առումով ուղղակի անթույլատրելի մի սևացած կաթսայի մեջ և, պատրաստելով ֆանի պուրի, հրամցնում է այն համտեսել ցանկացող տեղացիներին կամ զբոսաշրջիկներին»: Այնպես որ՝ ուտել ու թունավորվել կարելի է ոչ միայն մեզ մոտ:

Անցա այդ մայթով: Վրայիցս այնպիսի մի հոտ էր գալիս, որ թվում էր, թե ես հերթական կարկանդակն եմ, որին վառել են արդեն նստվածք տված ձիթայուղի կաթսայի մեջ: Այո, այս պահին, աշխարհի մի անկյունում կաթսայի մեջ եռում են կարկանդակները, մյուս անկյունում գաղտագողի բեռնաթափում են փղոսկրով լի բեռնատարը, երրորդ անկյունում մեկը եթերում ուրախ ասում է, թե մեքենա է շահել՝ լոտոյի տոմս գնելով, մեկ ուրիշ անկյունում բռնցքամարտիկը հենց նոր նոկաուտ ստացավ, հաշվում են՝ վեր չի կենում, լրիվ ուրիշ մի վայրում մի խումբ զարմացած զբոսաշրջիկներ բերանները բաց նայում են գետնի տակից դուրս ժայթքող գեյզերի շիթին, մի ուրիշ անկյունում էլ գեղասահորդը մի այնպիսի հիասքանչ ու հաջող պտույտներով ցատկ կատարեց, որ ամբողջ

դահլիճը ցնծաց և թնդաց ծափահարություններից: Տարբեր է աշխարհը, ամեն վայրկյան տեղի է ունենում մի ինչ-որ բան: Հենց հիմա դու կարդում ես, իսկ ինչ-որ մեկը ավարտեց ու փակեց իր նոր կարդացած գիրքը, մյուսը ոչ մի կերպ չի կարողանում համակերպվել այն մտքին, որ պիտի գիրք կարդա: Հենց այս պահին մեկը կենաց խմեց ու երջանիկ ընտանիք մաղթեց նորապսակներին, մեկ վայրկյան անց, մեկ ուրիշ տեղ վերջին հրաժեշտը տվեցին իրենց սիրելի հարազատին ու հանձնեցին նրան հողին: Հենց այս պահին երիտասարդները «տժժում են» բացօթյա ռոք համերգի ժամանակ և «դրայվ» ստանում դրանից, իսկ մեկ ուրիշ տեղ օպերատորը ժամերով համբերատար սպասում է այն պահին, թե երբ դեպի իր բույնը կվերադառնա սև կեռնեխ հազվագյուտ թռչնակը: Հենց այս պահին արևմուտքից ժամանած մի զբոսաշրջիկ զմայլված նայում է նինջայի զենք ու զրահին, «գիդն» էլ թանգարանում պատմում է, որ նինջայի սև հագուստը նրան անտեսանելի էր դարձնում գիշերվա խավարում, և կարծես սև հովազի նման, նինջան ահ ու սարսափ էր սփռում մահատեսիլ գիշերում: Սա՝ նուրբ ու խորհրդավոր Ճապոնիայում, իսկ մեկ ուրիշ անկյունում՝ Ավստրալիայում մի տեղաբնակ փորում է հողն ու դրանից հյութեղ արմատ հանում, իմաստուն հայացքով նայում հորիզոնին և պատմում իր ժառանգին, թե որքան զորեղ ու թունավոր օձ է ահազդու թայպանը՝ Ավստրալիայի տափաստանների սարսափը: Այս պահին մեկը գլխապտույտ արագությամբ դահուկներով հաշված րոպեների ընթացքում իջնում է սարի ձյունածածկ լանջից, այն պահին, երբ մեկ ուրիշն էլ համառորեն մաքառելով արդեն քանի ժամ է բարձրանում է սարն ի վեր՝ դրա գագաթին հասնելու համար:

Մենք բոլորս ապրում ենք այս մոլորակի վրա, ապրում հենց այս պահին, ապրել ենք առաջ ու ապրելու ենք հետո: Ապրենք սիրով ու մեծ հոգատարություն ցուցաբերենք մեր մոլորակի նկատմամբ, բնության նկատմամբ, միմյանց նկատմամբ: Սիրենք մարդկանց, սիրենք մարդկությունը, սիրենք ու պահպանենք բնությունը, սիրենք ու գնահատենք ամեն մի վայրկյանը, ամեն մի պահը, ամեն մի «հենց այս պահին»-ը: Երբ կուշտ ենք, երբեք չմոռանանք, որ կան քաղցած մարդիկ, մարդիկ, որոնք օգնության կարիք ունեն: Չէ՞ որ հենց այս պահին, երբ կարդում ես այս տողերը, Աֆրիկայի աղքատ երկրներից մեկի հեռավոր ու խղճուկ գյուղերից մեկում տասնյակ տեղաբնակներ քաղցած են, նիհար են, տկար: Վրաններից մեկում լղարած մայրը գրկել է իր լղարած բալիկին ու փորձում է օրորելով քնեցնել: Մի խումբ մերկ, քաղցած, հիվանդ երեխաներ վազում են բակում, մեծերից շատերն էլ են հիվանդ: Հենց հիմա մեր քաղաքում մեկը աղբանոցում է, կամ փորում է շենքին կից աղբարկղը, որպեսզի այնտեղից ուտելու բան գտնի, կամ մի օգտակար բան, ասենք՝ շիշ կամ մետաղ, որպեսզի հանձնի այն ու փոխարենը մի երկու մետաղադրամ ստանա: Կան անօթևաններ, որոնք ուտելու բան են որոնում փողոցային շների հետ: Երբեմն մարդկանց ճակատագիրն այնպես է դասավորվում, որ նրանք իրենց կյանքը ավարտում են աղբանոցում: Նրանք քնում են շենքերի շքամուտքերում, նկուղներում: Դուք գիտե՞ք նրանց մասին: Գիտե՞ք, որ կան մարդիկ, որոնք իրենց բալիկի կամ բալիկների հետ նկուղում են քնում, առնետը գալիս ու գիշերը կրծում է բալիկի մատները: Դուք գիտե՞ք, որ այն հացը, որը դուք ուտելու պիտանի չեք համարում, մեկ ուրիշի համար կա-

որող է ճոխություն լինել: Այնպես որ՝ ամեն անգամ, երբ մտածեք պահի մասին, մի մոռացեք, թե այդ պահին ինչեր են կատարվում աշխարհում, ինչեր կարող էին տեղի ունենալ, եթե շատ բաներ այլ կերպ լինեին: Մտածեք ու փորձեք գնահատել պահը, հենց այդ պահը, որը ձերն է: Ես էլ այս պահին ձերն եմ, հենց այս պահին գրում եմ այս տողերը, որոնք անպայման գտնելու են իրենց ընթերցողին, գտնելու են քեզ, գիտեմ, որ դրանք հարազատանալու են քո հոգուն: Համենայն դեպս՝ ես հույս ունեմ, որ այդպես է լինելու, իսկ դրա համար հենց այս պահին ես երազում եմ ու երազելով հասնում հեռավոր Մոնղոլիա, մակույկով նավարկում Վենետիկի փողոցներում, հետևում համբուրվող զույգերին, տեսնում, թե ինչպես է խոտի ծիլը ծակում գետինը, լսում եմ գետնին տապալվող եղջերուի ձայնը, կարծես շոշափում նինջայի սև, մետաքսե հագուստի փափկությունը, նայում, թե ինչպես է զմայլված զբոսաշրջիկը ուտում ֆանի պուրի, հասնում բեդուիններին, հետները կրակ անում, նայում անապատին, զեփյուռի միջոցով զգում ավազի ջերմությունը դեմքիս, հիացած հետևում եմ նոր մոլորակի հայտնաբերմանը, լիաթոք ուրախանում ինչ-որ հարսանիքում, կենաց խմում, տեղափոխվում Իսպանիա ու լսում ֆլամենկո, իջնում ծովի հատակը ու նայում, թե ինչպես են մարգարիտ գտնում, բարձրանում լեռներն ի վեր ու տեսնում ալպինիստների տքնաջան ընթացքը դեպի վեր, և այդ ամենից հետո գալիս ու հասնում եմ քեզ, հենց քեզ՝ իմ ընթերցողին, հասնում հենց այս պահին:

2008 թվականի մայիսի 18-ն է, ուշ, թովիչ երեկո, ժամը 23-ը չկա, նստած եմ համակարգչիս դիմաց ու գիտեմ, որ դու հենց հիմա, հենց այս պահին գուցե ծիծաղում

ես, կամ տխրում, կենաց ես խմում կամ հաց ուտում, բանան հավաքում կամ լուսանկարչական ապարատով անմահացնում թանգարանում տեսածը, մանր տալիս աղքատին կամ հացի կտոր փշրում ու լցնում պատուհանի գոգին՝ ճնճղուկների համար, աշխատանքից հոգնած տուն ես եկել, կամ գուցե այս պահին խաղում ես քո բալիկների հետ, սիրով ես զբաղվում, հենց այս պահին գուցե չես կշտանում սիրելիիդ համբուրելով կամ էլ դեռ սպասում ես քո կյանքի կեսին: Դու, որ այս պահին գուցե ճաշակեցիր քո առաջին համբույրը, կամ ծննդաբերեցիր, հագնվեցիր կամ հանվեցիր, դու, որ գուցե հիմա հեռուստացույց ես դիտում ու լսում մեկին, որ ուրախ ասում է, որ լոտոյի տոմսով շահել է մեքենա, դու, որ հիմա գուցե որևէ մեկին նամակ ես գրում, կամ նամակ ես ստացել, պարապում կամ արդեն հանձնել ես քննությունդ, հայտ ես ներկայացրել երգի ինչ-որ մրցույթի մասնակցելու համար կամ հիասթափված տուն ես վերադառնում, քանի որ ասել են, որ չես անցել, դու, որ գուցե այս պահին զանգում ես ու հեռախոսով «համբուրում» նրան, ում սիրահարվել ես, կամ էլ կոպտում ես մեկին, ով քեզ հանգիստ չի տալիս իր զգացմունքներով, դու, որ գուցե այս պահին երազում ես բարձունքների մասին ու փորձում իրականացնել քո երազները, մի օր անպայման կկարդաս այս տողերը: Կկարդաս և կընկղմվես իմ աշխարհը, այնտեղ, ուր բարձր լեռները բարձրացող յակերն ու թավամազ ձյունահովազներն են, փողոցում փքաբլիթ վաճառողներն ու բանան հավաքողները, մակույկում համբուրվողներն ու հեռուստացույց դիտողները, լոտոյով շահողներն ու լոտոյի մեքենան գնողները, գետինը ծակող խոտի ծիլերն ու առաջին համբույրից արբածները, իսպանական երաժշտության

երկրպագուներն ու բեդուինները, Ժնևի աստղադիտարանի գիտնականներն ու իրանական մանրանկարչությամբ գերվողները, հզոր առյուծն ու կաղնին, գեյզերն ու լուսանկարչական ապարատը, ծովի հատակից մարգարիտ գտնողները, սիրային նամակ գրողներն ու սերենադ երգողները, ինքնաբավարարվող առանձնյակներն ու անկողնում առողջ, կրքոտ սեքսից երջանկացած սիրահար զույգերը, մեր քաղաքի չքնաղ աղջիկներն ու նրանց գարնանային, թեթև սլացքը, աղբանոցից հաց հանողներն ու «Համմեր» վարողները: Հենց այս պահին ես եղա այսքան տեղերում ու եկա քեզ մոտ, հենց քեզ մոտ՝ տողերիս միջոցով հետդ շփվելու, զրուցելու ակնկալիքով, ինչպես նաև քեզ այս պահին դեպի աշխարհի տարբեր անկյունները տեղափոխելու նպատակով, որպեսզի մի փոքր ավելի շատ ճանաչես այն, աշխարհին նայես տարբեր դիտանկյուններից, ոչ միայն նայես, այլև կարողանաս տեսնել շատ բաներ:

Աշխարհը առաջ է գնում ոչ թե օր-օրի, այլ ժամ առ ժամ, կյանքը զարգանում է, նոր գիտություններ ու գիտաճյուղեր են ի հայտ գալիս, տասնամյակներ շարունակ հայտնի տեսություններն են հերքվում ու ապացուցվում են նորերը, տիեզերական հայտնի ճշմարտություններ են կասկածի տակ առնվում ու երևան են գալիս նոր վարկածներ, կյանքի ծագման ու զարգացման, տիեզերքի կառուցվածքի ու ապագայի վերաբերյալ նոր տեսություններ են առաջանում, կատարելագործվում են մարդու կյանքի պայմանները, տեխնոլոգիական զարգացումը նոր հորիզոններ է բացում մարդկության առջև, միջմշակութային հարաբերությունները թևակոխում են զարգացման նոր փուլ, համամարդկային արժեհամակարգում տեղի են

ունենում լուրջ տեղաշարժեր, ֆինանսատնտեսական հորիզոնները հետզհետե ընդլայնվում են, բնական պաշարների ու էներգակիրների որոնումները ստիպում են վերանայել հին մեխանիզմները, վերածնել ու արդիականացնել դրանք, շրջակա միջավայրի խնդիրները ստիպում են նորովի նայել շատ հարցերի, հետզհետե ավելի լայն թափ են ստանում նոր մոլորակներ նվաճելու նկրտումները, կյանքը եռում է, ու ամեն րոպե մի նոր բան է տեղի ունենում աշխարհում, նոր փոփոխություն, նոր զարգացում:

Եվ այս հարահոս, անընդհատ ու լայնամասշտաբ զարգացման ֆոնին իրադարձությունների գլխավոր դերակատարն ու առանցքը մնում է մարդը՝ դու:

Հուսով եմ, որ տողերս կհուզեն քեզ, կշոյեն հոգիդ, և դու վերստին կլսես քո երաժշտությունը, կփայփայես քո նվիրական երազանքը, կապրես քո զգացմունքը, կվերապրես քո հիշողությունը և կգնահատես կյանքի քո պահը, այս պահը…

2008, 2012

ՄԻ «ԲՈՒՌ» ԿՅԱՆՔ՝ ՀԵԾԱՆՎՈՐԴԻ ՄԵՋՔԻՆ…

Ասում են, որ ոսկե ձկնիկները իրականացնում են երեք ցանկություն: Արի ու տես, որ հարավարևելյան քաղաքներից մեկում հեծանվորդի մեջքի հետևում, հեծանվի նստարանին ամրացված հարմարանքից կախված տոպրակների մեջ բազմաթիվ այդպիսի ոսկե ձկնիկներ են: Նա

իր հեծանվով շրջում է և վաճառում զույգ ոսկե ձկնիկներ: Մի կողմից հեքիաթն է, առասպելն այն մասին, որ ոսկե ձկնիկները կախարդական են, մյուս կողմից՝ իրական կյանքի իրական դրվագ, երբ «երազանք իրականացնող» փոքրիկ այս արարածներին վաճառում են սովորական ապրանքի պես: Մի՞թե «երազանքը» կարելի է վաճառել, այսպես դնել տոպրակի մեջ, կապել մեջքից ու շրջել քաղաքով մեկ՝ ասես վաճառում ես գրիչ, օրացույց կամ էլ՝ կարկանդակ: Ամեն մի տոպրակում՝ մի զույգ «երազանք»: Ահա և կյանքը իր ամբողջ ներկապնակով. հեծանիվ՝ սոցիալապես անապահով իր հեծանվորդով, ապրուստը հոգալու ամենօրյա խնդիր և տոպրակի մեջ՝ ոսկե ձկնիկներ, որոնք կոչված են իրականացնելու մեր ամենանվիրական երազանքներն ու նպատակները, որպեսզի նույն այդ կյանքը լինի ավելի բարեկեցիկ ու լուսավոր, չունենանք ապրուստը հոգալու կարիք, չունենանք քաղաքում ստիպված հեծանիվով այսպես շրջելու և մեր «երազանքը» վաճառելու խնդիր: Իսկ ոսկե ձկնիկները հայտնի չէ, թե ինչ տներում կգտնեն իրենց հանգրվանը: Ափսոս, որ մենք՝ մարդիկ, մեր ապրուստը հոգալու համար երբեմն ստիպված ենք լինում վաճառելու մեր երազանքները…

02.02.2012

ՁԵՌՔԸ ԴՆԵԼ ԵՐԵՎԱՆԻ «ՍՐՏԻՆ»

– Խե՜ղճ Յորիկ:
– Քաղաքացի՛, ձեռք տալ չի՛ թույլատրվում:
– Պարդոն, մադամ, պարդոն: Ը՜, ի դեպ, ասեք, ի՞նչ է այս քաղաքի անունը:
– Ինչպե՞ս թե, Արբատով:
– Արբա՜տով, շնորհակալություն: Արբա՜տով, Արբա՜տով: Ես էլ հենց դրա համար եմ նայում... Չէ՛, սա Ռիո դե Ժանեյրոն չէ:*

Մայիսյան մի օր որոշեցի զբոսնել Երևանի կենտրոնում, ուր հաճախ եմ լինում: Շատ լավ եղանակ էր՝ զբոսնելու և քաղաքով հիանալու համար: «Բաղրամյանով» ոտքով իջա ցած:

Երևանն ինձ վրա հետաքրքիր ազդեցություն ունի: Գիտեմ, որ շատերն են «սեր խոստովանել» Երևանին ու դեռ խոստովանելու են, շատերն են երգեր ձոնել, ձոնում են ու դեռ ձոնելու են, բայց էլի, կարծես, քիչ է: Գիտե՞ք՝ ինչու: Որքան էլ փառաբանես Երևանը իր լավ կողմերով՝ խոսելով այն մասին, որ քաղաքը օր-օրի զարգանում ու նորաշունչ է դառնում, կանաչապատվում, խնամվում, մաքրվում, զարդարվում՝ ծաղիկներով, կայանում՝ ենթակառուցվածքներով, միևնույն է, այն մեզ սիրելի ու հոգեհարազատ է նաև իր ամենաանշուք ու հասարակ, երբեմն՝

* «Ոսկե հորթը» ֆիլմից («Золотой теленок»: Արտադրությունը՝ ՍՍՀՄ, 1968 թ.: Ռեժիսոր՝ Միխայիլ Շվեյցեր, սցենարի հեղինակներ՝ Իլյա Իլֆ, Եվգենի Պետրով, Մ. Շվեյցեր, օպերատոր՝ Սերգեյ Պոլույանով, կոմպոզիտոր՝ Գեորգի Ֆիրտիչ, դերերում՝ Սերգեյ Յուրսկի, Լեոնիդ Կուրավլյով, Զինովի Գերդտ, Եվգենի Եվստիգնեև, Սվետլանա Ստարիկովա, Նիկոլայ Բոյարսկի և ուրիշներ):

տգեղ կողմերով: Այո՛, սիրելի և քոնն են ոչ միայն մեր մայրաքաղաքի հուշարձանները, ճարտարապետական կոթողները, գլխավոր փողոցները, այլև առօրեական, երբեմն՝ աննշան թվացող մանրուքները, ասենք՝ ինչ-որ թաղամասի քարքարոտ մայթը, վթարային շենքը, կեղտոտ մուտքը, փողոցի փոշին, ճանապարհային երթևեկության կանոնները խախտող վարորդը կամ հետիոտնը, էկոլոգիական բազում խնդիրները՝ աղտոտված ու ծանր օդից, «աղբատար» դարձած գետերից մինչև քաղաքում և քաղաքի մերձակայքում գործող հանքեր ու համատարած մեծ ու փոքր շինարարություն և այլն: Երևանը պետք է «տեսնել» ու «զգալ» իր անգամ ամենափոքր դրվագներում, սովորական կյանքում, առօրյա հոգսերում, հասարակ երևանցիների մեջ: Երևանի հոգսերը, առայժմ առկա բոլոր խնդիրները, թվում է, թե մեր քաղաքի (թերևս՝ ցանկացած մեծ քաղաքի) անբաժանելի մասն են կազմում: Դրանք դարձել են Երևանի դեմքի սովորական կնճիռները, մինչդեռ մեր քաղաքում այդպիսի կնճիռներ չպետք է լինեն: Եվ չեն լինելու, քանի որ այդ ամենը անպայման շտկվելու է: Երևանը ամենալավն է, և այն բոլորիս համար պետք է լինի այդպիսին: Պիտի գորովանքով ու սիրով լցվենք մեր մայրաքաղաքի նկատմամբ, շենացնենք այն, մաքուր պահենք, չաղտոտենք, որպեսզի ոչ թե համեմատենք այլ «մեգապոլիսների» հետ, այլ ամենօրյա ու հետևողական աշխատանքով զարգացնենք մեր մայրաքաղաքը, հպարտանանք նրանով ու ներկայանալի լինենք աշխարհին: Զարգացնենք այնպես, որ մենք և մեր երեխաները ապահով ու երջանիկ, անվտանգ ու հպարտ ապրենք մեր քաղաքում, իսկ քաղաքի հյուրերը հիանան Երևանով:

Եթե ամեն մեկս մեր տեղում, մեր մասով շենացնենք մեր երկիրը, սիրենք մեր քաղաքը, ապա այն ավելի ու ավելի կծաղկի, կհզորանա: Եթե աղբը դուրս չնետենք, մայթեզրին ընկած քարը կամ ճյուղը վերցնենք ու մի կողմ դնենք՝ ազատելով ճանապարհը, ապա Երևանն ավելի զարդարուն ու լուսավոր կդառնա, կշնչի թեթև ու երջանիկ, մեզ կուրախացնի, կոգևորի իր կենսախինդությամբ ու էներգիայով:

Ես և, համոզված եմ, շատ-շատ հայեր խենթի պես սիրում են Երևանը: Այդպիսի մարդկանց անձամբ ճանաչում եմ, նրանք քաղաքի կենդանի շունչն են ու հենասյուները, նրանց սիրով է քաղաքն ապրում, նրանք էլ քաղաքով են ապրում ու շնչում: Եվ որքան մեծ է այդ սերը քաղաքի նկատմամբ, այնքան ավելի անհանդուրժող ես դառնում քաղաքը աղտոտողի, քաղաքի հասցեին վատ արտահայտվող, նրան բացասական որակումներ տվող յուրաքանչյուրի նկատմամբ: Միշտ էլ հեշտ է բողոքել ու մեղավոր համարել ուրիշին՝ սեփական արարքները թաքցնելով կամ չնկատելով: Մինչդեռ ուրիշի վրա պատասխանատվությունը գցելու փոխարեն նախ մտածենք, թե մենք ինչպե՞ս ենք վարվում մեր քաղաքի հետ, ի՞նչ ենք անում նրա համար:

Հիրավի, շատ բան մեզանից է կախված: Օրինակ՝ հաճախ եմ աննկատ հետևում կանգառում ծխող մարդուն՝ լինի նա մի ինչ-որ որ «քյառթու» ջահել, թե իր կյանքի «ծուխն» արդեն ծխած վերջացրած տարեց մեկը: Ծխում են ու ծխածի մնացուկը կամ ծխուկը հանգիստ գցում գետնին՝ մեր քաղաքը մոխրաման դարձնելով: Մի քանի րոպե չմարած ծխուկը դեռ ծուխ է արձակում: Այսինքն՝ ևս մի քանի րոպե ծխախոտը փչացնում է մթնոլորտը: Այդ

մարդը նստում է իրեն անհրաժեշտ տրանսպորտն ու գնում, իսկ գետնին նետված ծխուկը մնում է իր հետևից, մնում է Երևանի դեմքին: Լինում է, որ խնդրում եմ, դիմում եմ, որ ծխախոտի տուփը կամ նույն ծխուկը չգցեն ցած, սակայն ո՞ր մեկին ասես: Երբեմն ոտքով ինքս եմ հանգցնում ինչ-որ մեկի նետած ու դեռ այրվող ծխուկը: Եղբայր, մի՛ կեղտոտիր իմ քաղաքը, այն ի՛մն է, քոնը չէ՛, քանի որ եթե նրա՝ քոնը լինելու գիտակցումն ունենայիր, նրան սիրեիր այնպես, ինչպես ես ու հազարավոր երևանցիներ են սիրում, ապա երբեք այդպես չէիր վարվի: Թե՞ քեզ թվում է, որ բոլորը քեզ նման են: Ո՛չ, մեր Երևանում շատ շատերն են քաղաքը մաքուր պահում, շատերն են քաղաքավարի մարդուն վայել կերպով աղբը նետում աղբամանը, ոչ թե իրենց ոտքերի տակ կամ ներքևի հարևանի գլխին: Այդպիսի բարեկիրթ մարդիկ անգամ ծխում են կոկիկ ու «արտաշնչում չափի մեջ»:

Կարծում եմ, որ գետնին գցած ամեն մի ծխուկը նման է մեր սիրելի Երևանի դեմքին թքելուն: Դու թքո՞ւմ ես տանդ դռանը ամեն անգամ, երբ տուն ես վերադառնում: Չես թքում, չէ՞: Երևանը մեր բոլորի մայրն է, ավելի տնավարի անվանեմ՝ մեր բոլորի սիրելի ու պաշտելի մաման, որը պահում է մեզ իր գրկում ու խնամում: Երևանը, որը շուրջ 3000 տարեկան է և Հռոմից էլ է հին, մեր հոգատար ծնողն է: Մի՞թե կարելի է այդօրինակ վերաբերմունք ցուցաբերել ծնողի նկատմամբ: Ե՞րբ պիտի բոլորս ապրենք այսպիսի հինավուրց քաղաք ունենալու գիտակցումով: Այնպիսի գիտակցումով, այնպիսի սիրով, որ Երևանի տոնակատարությունների ժամանակ համատարած տոն լինի մեր բոլորի սրտերում, դուրս գանք ու շնորհավորենք մեր համաքաղաքացիներին, շնորհավո-

ռենք միմյանց: Եթե մեր քաղաքը լիներ Եվրոպայում, իսկ բնակիչներն էլ՝ եվրոպացիներ, ապա նրանց մոտ անմիջապես կզգացվեր համապատասխան հարգանք ու վերաբերմունք սեփական քաղաքի նկատմամբ, դա կերևար անգամ նրանց քայլքից: Իսկ դուք, ինչպե՞ս եք քայլում, ինչո՞ւ են ձեզանից ոմանք հպարտ քայլելու փոխարեն մի տեսակ ծռմռված քայլում, որտե՞ղ է Երևանով հպարտ լինելու ներքին մղումն ու բնավորության գիծը, որը վաղուց պիտի ձևավորված լիներ: Մի՞թե մենք անվերադարձ կորցրել ենք այդ գիծը: Իհարկե՝ ոչ: Եվ, այնուամենայնիվ, ինչո՞ւ եք կեղտոտում քաղաքը առանց խղճի խայթ զգալու: Մտածե՛ք, ձեզ եմ դիմում, նրանց, ովքեր շարունակում են գետնին աղբ թափել ու ծխախոտ նետել:

Մի պահ խոնարհվեք ու ձեռքը դրեք գետնին՝ Երևանի «սրտին», լինի դա ասֆալտապատ փողոց, մայթ, թե հողի շերտ, լինի դա բակում, թե այգում, ձեր տան դիմաց, թե կանգառում: Դրեք ձեր ձեռքը ու զգացեք մեր քաղաքի սրտի բաբախումը: Ո՛չ, դա մեր համաքաղաքացիների ոտնաձայները չեն: Այդ բաբախումն ավելի խորն է, այն բաբախում է վաղուց, արդեն քանի՞ դար: Այդ բաբախումը մեր բոլորի սրտերի բաբախումն է, մեր բոլորի հավաքական երազների թմբկահարումը, մեր բոլորի հույզերի ու նպատակների զարկերակը, հաջողությունների ու անհաջողությունների, ձեռքբերումների ու բացթողումների թկթկոցը, որը մեզ արթուն է պահում հազարամյակներ շարունակ: Երևանը յուրաքանչյուրիս սրտի անդադար բաբախումն է: Ինչպիսի տեսք էլ ստանա մեր քաղաքը, ինչքան էլ մեծանա, ինչքան էլ վեր խոյանան նոր ու բարձրահարկ շենքեր, ինչքան էլ նոր ու ժամանակակից կառույցներ, փողոցներ հայտնվեն մեր շուրջը, այն ընդա-

մենը մեկ սիրտ է, որը միշտ բաբախում է, սիրտ, որից կա քո, իմ, նրա, մեր բոլորի ներսում: Դի՛ր ձեռքդ մի պահ քաղաքի «սրտին», զգա նրա սրտի աշխատանքը, ուժ ստացիր հինավուրց քաղաքի սրտի բաբախումից, ստացիր համահայկական էներգիայի քո բաժինը: Ամեն անգամ մտքում փարվիր քո քաղաքին, սիրիր նրան անմնացորդ, իսկական, նվիրյալ սիրով, ծառայիր նրան, որպեսզի մեր քաղաքը ապրի հավերժ: Ընդ որում, պարտադիր չէ, որ անպայման լինես երևանցի, որպեսզի գնահատես ու հասկանաս Երևանի՝ քո մայրաքաղաքի նշանակությունը: Որտեղից ուզում ես եղիր՝ Հայաստանի որ անկյունից, Արցախից, Սփյուռքից, միևնույն է, սիրիր ու գնահատիր քո և մեր բոլորի մայրաքաղաքը, մաքուր պահիր այն ու միշտ հիշիր, որ ինչպես դու ցանկացած պահի կարող ես խոնարհվել, ձեռքդ դնել քաղաքի գետնին ու զգալ նրա սրտի բաբախումը, նրա հույզերն ու զգացմունքները, այնպես էլ նա ցանկացած պահին կարող է իր «ձեռքը դնել» քո կրծքավանդակին, զգալ քո սրտի բաբախումը, զգալ ու իմանալ, թե ինչքան ես սիրում իրեն, որքանով ես անկեղծ, զգալ քո խղճի չափն ու մաքրությունը: Չէ՞ որ երբ շատ ես սիրում, ապա հուզմունքի պահին սիրտդ բաբախում է ուժգին, գարնանային զարկով, երբ շատ ես սիրում՝ հեշտությամբ ու արագ ես հուզվում, իսկ երբ անտարբեր ես ու սառը, սիրտդ բաբախում է անհույզ ու միալար: Ցանկացած պահի քո քաղաքը կարող է ստուգել, թե ինչպես և ինչքան ես սիրում իրեն, ցանկացած պահի Երևանը կարող է դեմքով շրջվել դեպի քեզ ու տեսնել, թե ինչպե՞ս ես վերաբերվում իրեն, փայփայո՞ւմ ես, հոգատար ու սրտացա՞վ ես, թե՞ ծխածի մնացորդը զցում ես գետնին…

Դուք երբևէ լսե՞լ եք ձեր սրտի բաբախյունը: Ոչ թե զգացել այն՝ ձեռքը պահելով կրծքին, այլ՝ լսել: Պառկեք փորի վրա՝ կրծքավանդակն ու գլուխը սեղմելով անկողնուն: Այդ ժամանակ կլսեք սրտի ձայնը: Պատկերացրեք, որ այդպես լսում եք Երևանի սրտի բաբախյունը: Ամեն ինչ արեք, որ այն լինի զվարթ ու երջանիկ, առույգ, անհոգ ու կենսատու:

Ինձ համար մեր քաղաքում ոտքով զբոսնելը ստեղծագործելու ու մտքերիս հետ լինելու հրաշալի հնարավորություն է, որը այս անգամ էլ փորձեցի բաց չթողնել, և շարունակում էի քայլել «Բաղրամյանով», որն «ամենապաշտոնական» փողոցներից մեկն է քաղաքում, եթե ոչ՝ ամենապաշտոնականը: Քայլում և անհագ հայացքով նայում էի մայթերը զարդարող յուրաքանչյուր կաղնու: Ի դեպ, «Բաղրամյանով» իջնելիս մեքենաների աղմուկը յուրահատուկ մի սիմֆոնիա է ստեղծում, ու դու ձուլվում ես այդ նվագին:

Մոտեցա Մարշալ Բաղրամյանի արձանին, որի նկատմամբ լցված եմ մի առանձնահատուկ սիրով ու հիացմունքով: Այն այնպես ներդաշնակ է փողոցի ընդհանուր պատկերին, որ կարծես կտավի պակասող շտրիխն էր, որն արվեց ժամանակին, կառույցին պակասող աղյուսն էր, որը դրվեց: Դա դասական արձան է, իսկական դասական արձան: Դեմ չեմ արձանների նորառձ մոտեցմանը, քանդակների ստեղծման նորաշունչ ուղղություններին: Սակայն, այնուամենայնիվ, ինձ առավել գերում է դասական ոճը: Մի պահ նայելով Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Հովհաննես Բաղրամյանի փառահեղ արձանին՝ մոռանում ես՝ Երևանո՞ւմ ես, Հռոմո՞ւմ, Սանկտ-Պետերբուրգո՞ւմ, թե՞

Վիեննայում: Իսկ արձանի ձի՞ն, որքա՞ն հաջողված է այն, որքան ակնառու են կենդանու կեցվածքի ու մարմնի կառուցվածքի ճշգրիտ ու հաջող վերարտադրությունը և համամասնության պահպանումը: Ձին ներդաշնակ կերպով ներկայացված է որպես բարեկազմ կենդանի: Մի խոսքով, քանդակագործ Ն. Կարգանյանի և ճարտարապետ է. Արևշատյանի կերտած արձանը իմ կարծիքով իսկական գլուխգործոց է:

Բարձրացա Հայաստանի Ամերիկյան համալսարանի աստիճաններով: Նայում էի Բաղրամյանի վեհ արձանին, հիանում ու մտածում էի. ի՞նչ վեհ էր Մարշալը: Ապրելուց հետո իրոք որ այդօրինակ կյանքով ապրես, լինես օրինակ, ապրես այնպես, այնպիսի լավ ու բարի, կարևոր ու մնայուն գործեր անես, որ արժանանաս այդօրինակ համընդհանուր պատվի, հարգանքի, փառքի, սիրո, գնահատանքի ու մեծարանքի՝ պատմության մեջ մնալով քո բարի անունով, բարի համբավով, քո օգտակար գործունեությամբ, հետք թողնելով քո ժողովրդի ու մարդկության պատմության մեջ: Ապրես այնպես արժանավայել, որ քաղաքին ու քո երկրին նայես այնպիսի վեհությամբ, ինչպես Բաղրամյանի արձանը: Ինքս էլ զգացի այդ վեհությունը, երբ Մարշալի դիրքից նայեցի մեր սիրելի քաղաքին: Նայում էի արձանին ու համոզվում, որ Մարշալի վեհաշուք ու հպարտ կեցվածքը փոխանցվում է քաղաքին ու քաղաքից էլ՝ իրեն:

Մի որոշ ժամանակ մնացի իմ սիրելի սիրելի արձանի մոտ, քանի որ ոչ միայն ինքը՝ Բաղրամյանը, այլև իր արձանն են ինձ հպարտություն ներշնչում, ոգևորում: Այն ինձ համար մեր քաղաքի խորհրդանիշներից մեկն է:

Երևանի բոլոր արձաններն էլ գեղեցիկ են, թե՛ անգերազանցելի գլուխգործոց Սասունցի Դավթի, թե՛ երաժշտություն պարգևող և մտորումներ ծնող Կոմիտասի, թե՛ հիացմունք ու հպարտություն առաջացնող Հայկի, թե՛, կարծես, հետդ զրուցող Մարտիրոս Սարյանի, թե՛ աշնանաշունչ Վահան Տերյանի ու մտազբաղ Ավետիք Իսահակյանի, թե՛ «ծովակշիռ» Զորավար Անդրանիկի ու մտերիմ ժպտացող Հովհաննես Թումանյանի, թե՛ լրջմիտ ու խոհեմ, մի ամբողջ ժամանակաշրջան խորհրդանշող Ալեքսանդր Մյասնիկյանի, թե՛ հանճարեղ Եղիշե Չարենցի, թե «խարակտերային» Առնո Բաբաջանյանի և մյուս բոլորի արձանները: Դրանք քաղաքի «մեխերն» են, որ ամրացնում են Երևանի ընդհանուր հատակը:

«Արձաննե՞ր, հրապարակնե՞ր, այգինե՞ր, պուրակնե՞ր, շատրվաննե՞ր, սրճարաննե՞ր, թանգարաննե՞ր. անկրկնելի է Երևանը, և այն յուրաքանչյուրիս քաղաքն է»,– մտածում էի ես՝ շարունակելով քայլել «Բաղրամյան» պողոտայով ներքև: Եվ իսկապես, Երևանում «իմ»-ի ու «քո»-ի խնդիր չկա: Մեր քաղաքը մեզանից յուրաքանչյուրինն է: Ուշադիր աչքը կնկատի, որ «Երևանը» նաև այնտեղ է, որտեղ նա ամենաքիչն է նկատվում: Բացի այդ, Երևանում ապրող մարդու համար քաղաքը հաճախ շատ ավելի փոքր ու սեղմ է, սակայն՝ ոչ երբեք պակաս հոգեհարազատ: Օրինակ՝ մեկի համար «Երևանը» տանից աշխատանք ճանապարհն է, մյուսի համար՝ սառը օդով լցված առավոտյան հրապարակը, որը նա ավլում է ամեն օր, երրորդի համար «Երևանը», առաջին հերթին, ջրատար մեքենան է, որի ջրի շիթից նա ամեն անգամ մեծահոգաբար ու զգուշությամբ, կամ էլ դժկամորեն ու զայրացած, հետ է քաշվում, երբ առավոտյան աշխատանքի գնալիս

կանգնած է լինում կանգառում, չորրորդի համար «Երևանը» այն այգին է, որտեղ նա սրտի ուժգին բաբախյունով սպասում է իր սիրած աղջկան, հինգերորդի համար «Երևանն» սկսվում է աշխատավայրում առավոտյան սուրճով, վեցերորդի համար «Երևանն» սկսվում է տոնավաճառում ապրանքները դասավորելով, քանի որ քիչ հետո տոնավաճառ են գալու գնորդները, յոթերորդի համար «Երևանը» մետրոպոլիտենի շարժասանդուղքով իջնող ու աշխատանքի շտապող հարյուրավոր մարդիկ են, որոնց նա հետևում է իր աշխատախցիկից, ութերորդի համար «Երևանն» սկսվում է իր իսկ տաքսու առաջին ուղևորից, որը բացում է մեքենայի դուռն ու հարցնում. «Ազա՞տ եք», ոմանց համար «Երևանը» կինո «Մոսկվան» է, մյուսների համար՝ «Պապլավոկը» կամ «Կարապի լիճը», շատ շատերի համար «Երևանը» Օպերայի հրապարակն է, իսկ մարդիկ էլ կան, որոնց համար «Երևանն» սկսվում է Մատենադարանի բարձունքից ու ձգվում Մաշտոցի պողոտայով, ոմանց համար «Երևանը» նախկին կինո «Ռոսիայի» («Այրարատ» կինոթատրոնի) հարևանությամբ գտնվող գետնանցումի մեջ գործող քյաբաբանոցներն են, որոնց մեջտեղով անցնելիս ասես փորձություն ես հաղթահարում, յուրօրինակ «Ֆորտ Բոյար», քանի որ երկու կողմից քեզ կանչում են, գրավում, հրավիրում՝ փորձելով որսալ քո հայացքը, և դու անցնում ես՝ ասես հաղթահարելով գայթակղիչ առաջարկները, ախորժաբեր տապականերն ու խորովածները, իսկ երբ դուրս ես գալիս գետնանցումից, կարծես նվաճել ես «Ֆորտ Բոյարի» հերթական բանալին:

Մարդիկ կան, որոնց համար «Երևանը» Պետական արխիվի գրապահոցներն են, որոնց մեջ անցել է ամբողջ կյանքը, մյուսների համար «Երևանը» իր նոր տեղադրած «Բաքսին» է, և այսպես շարունակ...

Երևանը մերն է՝ իր բոլոր հաջողություններով ու դժվարություններով, իր բոլոր լույսերով ու ժպիտներով:

Բոլոր քաղաքներում էլ այդպես է. Վենետիկ այցելած զբոսաշրջիկի համար քաղաքը, առաջին հերթին, ռոմանտիկ շնչով լցված սիրառատ ու նեղլիկ փողոցներն են, որոնք թաթախված են ծովի ջրով, սիրահար զույգերին քաղաքի հիասքանչ տեսարանները բացող, նրբորեն, անաղմուկ ճոճվող գոնդոլաներն են, որոնք սահում են ջրի վրայով: Իսկ ահա վենետիկցիների համար «Վենետիկը» նաև քաղաքի որոշ մասերում արդեն ջրի տակ անցած սրճարաններն ու շուկաներն են, քարաքոսներով, մամուռով ծածկված կամուրջներն ու մայթեզրերն են, ջրի մակարդակի բարձրացումը կանխելու հիմնահարցի լուծման ուղիների որոնումներն են, խոնավությունն է, և այլն: Մոսկվա այցելած յուրաքանչյուր մարդու համար քաղաքն առաջին հերթին փառահեղ Կրեմլն է, Կարմիր հրապարակը, հիասքանչ ու գերող Արբատը, գեղեցկադեմ, շիկահեր, նրբակազմ, սպիտակամաշկ, գերող ու սլացիկ ռուս աղջիկներն ու կանայք, իսկ ահա քաղաքի բնակիչների «Մոսկվան» նաև շուկաներն են, որ հեղեղված են կովկասցի առևտրականներով, մահապարտները, Կոմկուսի գումարած հերթական համագումարն է, որն այդպես էլ, միևնույն է, չի վերադարձնում երբեմնի «սոցիալիստական միությունը», «էլեկտրիչկայով» ամենօրյա երկար ու միապաղաղ ուղևորություններն են տանից աշխատավայր ու հակառակը, ծանրաբեռնված կայարաններն են, և այլն:

Ագրա այցելած զբոսաշրջիկների համար այն, առաջին հերթին, կարևորվում է Թաջ Մահալով, իսկ տեղաբնիկների համար՝ նույն այդ զբոսաշրջիկների առկայությամբ, որոնց ամեն գնով պետք է հաջողացնել մի բան վաճառել, զբոսաշրջիկների բախտը գուշակող ձեռնասուն կապիկների պարտադիր առկայությամբ, որոնք տասը ռուփիից պակաս վճարվելու դեպքում գումարը կարող են պարզապես արհամարհական կերպով հետ շպրտել կամ դեն նետել: Հոնգկոնգ ժամանած զբոսաշրջիկի համար քաղաքն առաջին հերթին խելահեղ գերծանրաբեռնվածությունն է, փողոցներում հետիոտների հեծանիվների, կրպակների, փողոցային առևտրով զբաղվողների փոքր ու միջին շուկաների, խանութների խտությունը, Արևելքում նման զարգացածության աստիճանի նկատմամբ հաճելի զարմանքը, գիշերային գովազդային լույսերը, և իհարկե, գիշերային ակումբներում ու ստրիպտիզ բարերում աշխատող, կամ էլ ուղղակի փողոցային մարմնավաճառուհիները, որոնք անհամեմատ ցածր գներով մատուցում են «անմոռանալի ծառայություն», որոնք ցանկացած՝ մեծ կամ փոքր հյուրանոցում հանուն գումարի պատրաստ են բավարարելու հաճախորդի ամենաքմահաճ, կրքոտ, անսովոր, բռնի կամ անգամ սադիստական ցանկությունները՝ հասցնելով նրան գերագույն հաճույքի: Ոչինչ որ, հնարավոր է, վերջում հաճախորդը, օրինակ, այն աստիճան ծեծի նրան, որ վերջինս կիսամեռ վիճակում մի կերպ դուրս գա համարից: Իսկ ահա հոնգկոնգցիների համար իրենց «Հոնգկոնգը» նաև կենդանական շուկաներն են, մեծ սպանդանոցը, որտեղ մորթում են տարբեր կենդանիների ու, հատկապես՝ շների, և միսը վաճառքի հանում, որտեղ յուրաքանչյուր պահին կարող է բռնկվել մի նոր համա-

ճարակ, հարուստ զբոսաշրջիկներն են, որոնցից առավել կարևոր են իրենց դրամապանակները և փողոցային աղմուկը, որը թեև սովորական, սակայն միշտ սթրեսային է:

Քաղաքի աղմուկը մեզ համար էլ է սովորական, Երևանի աղմուկը թեև իսկապես շատ է, սակայն մյուս բոլոր մեծ քաղաքների նման կյանքի աղմուկն է, կյանքը խորհրդանշող զարկերակի կտկտոցը, որը աղմուկից կարծես բյուրեղանում ու դառնում է ձայն:

Երևանի ձայնը, ինչպես բոլոր քաղաքներինը, բազմաշերտ ու բազմաղբյուր է: Մեր քաղաքի ձայնի մեջ միահյուսված են և՛ երեխայի լացն ու ծնողի նախատինքը, և՛ բակի պապիկների նարդիների շրխկոցն ու քաղաքականության վերաբերյալ վեճերը, և՛ մեքենաների տարբեր ազդանշաններն ու մարտկոցների տարբեր տանջահար ղռռոցները, և՛ շուկաների աշխուժությունն ու միտինգներում հնչող կոչերը, և՛ անկողնում սիրելի ամուսնու հետ սպասված մերձեցման հաճույքը վայելող տնային տնտեսուհու տնքոցները, և՛ հարսանիքների ու քեֆերի նվագները, ծափերն ու ուրախ բացականչությունները, տղերքի վեճերն ու հայհոյանքներն ու շատրվանների ձայնը, ծառերի սոսափյունն ու բնակարաններում վերանորոգման «շըխկ ու դըխկ»-ը, բակում տան տերերի անտարբերությունից արդեն «հայավարի» հաչացող շան ձայնը, եկեղեցիներում աղոթքի շշունջը մարդկանց շուրթերին, պատարագների հոգեպարար շարականները, ծանրաձողը բարձրացնող մարզիկի թոքային մռունչը, հերթական հաղթանակը տոնող հայ շախմատիստի խաղաքարը շախմատային տախտակին դնելու կտտոցը, հարևանների ուրախ ծիծաղն ու զզվելի վեճերը, առաջին դասարան գնացող փոքրիկի ոտնաձայները դպրոցի աստիճաններին, լացը՝

մահացողին հողին հանձնելիս: Քաղաքի ձայն, մի քիչ ընդհանուր, մի քիչ առանձնահատուկ, սակայն շատ սովորական դարձած, շատ ամենօրյա, շատ հարազատ, շատ մերը. քոնը և իմը: Այդ ձայնը հրաշալիորեն մարմնավորում է մի չքնաղ երաժշտություն, մի չքնաղ ստեղծագործություն՝ Անդրեյ Պետրովի՝ «Զգուշացի՛ր ավտոմեքենայից» ֆիլմում* հնչող վալսը: Քաղաքի նվագ, քաղաքի սրտի բաբախումի, զարկերակի, քաղաքի բնակիչների ամենօրյա վազքի մի ուրույն մեղեդի, յուրօրինակ տրամադրություն, երբ բացվում է լույսը, արթնանում է քաղաքն ու սկսվում է ամենօրյա եռուզեռը: Եվ այդժամ իր աշխատախցիկից մետրոպոլիտենի աշխատողը դարձյալ նայում է իջնող ու բարձրացող համաքաղաքացիներին, մեքենաներն այս ու այն կողմ են շտապում ու անվերջ ազդանշաններ արձակում, բակերում պապիկներն են նարդի գլորում, նորապսակները լսում են հարազատների ուրախ բացականչությունները, իսկ բակի շունը շարունակում է հաչալ, քանի որ նրան երեկվանից չեն կերակրել, աղբանոցում էլ ոչինչ չի կարողացել հայթայթել: Պետրովի վալսի առաջին իսկ հնչյուններից ասես վառվում է լուսաֆորի կանաչ լույսը, ու քաղաքում ամեն բան սկսում է ընթանալ, շարժվել, աշխատել, տեղափոխվել, շտապել, ուշանալ, զգալ ու ձգտել, ջանալ ու հաջողել: Եվ կարծես բոլորն ու ամեն ինչ միախառնված են և միասին պարում են վալս, քաղաքի վալսը:

---

* «Берегись автомобиля»: Արտադրությունը՝ ՍՍՀՄ, 1966 թ.: Ռեժիսոր՝ էլդար Ռյազանով, սցենարի հեղինակներ՝ էմիլ Բրագինսկի, է. Ռյազանով, օպերատորներ՝ Անատոլի Մուկասեյ, Վլադիմիր Նախաբցև, կոմպոզիտոր՝ Անդրեյ Պետրով, դերերում՝ Ինոկենտի Սմակտունովսկի, Օլեգ Եֆրեմով, Լյուբով Դոբրժանսկայա, Անատոլի Պապանով, Օլգա Արոսևա, Անդրեյ Միրոնով, Եվգենի Եվստիգնեև և ուրիշներ:

Այսպես մտքերով տարված՝ ինքս էլ չնկատեցի, թե ինչպես հասա Օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի շրջակայքը: Գրեթե ոչինչ չի մնացել այդ երբեմնի գեղատեսիլ վայրից, քանի որ շուրջբոլորը բացօթյա սրճարաններ են ու գիշերային ակումբներ: Ազատության հրապարակ…

Հիշեցի մի դրվագ իմ կյանքից: Ղարաբաղյան շարժման տարիներն էին, երբ Արցախի հայ բնակչությունը արդարացի կերպով պահանջում էր չոտնահարել ազատ ինքնորոշման իր իրավունքը, ցանկանում ու պահանջում էր միանալ Հայաստանին կամ անկախանալ, փրկվել ադրբեջանական ագրեսիայից: Ես, հայրս ու մայրս անցնում էինք այդ հրապարակով: Հավաքվել էր մարդկանց հոծ բազմություն: Միտինգ էր, ինչպես այն ժամանակ էին ասում: Հնչում էր Ղարաբաղյան շարժման խորհրդանիշ «շեփորականչը»: Բոլոր ձեռքերը բռունցքվեցին ու վեր բարձրացան՝ ի նշան արդարացի պայքարի ու արդարության հաղթանակի, ի նշան միասնության: Ես, հետևելով մեծահասակների օրինակին, բռունցքել էի փոքրիկ ափս ու ձեռքս ուղղել վեր: Գիտակցո՞ւմ էի այն ժամանակ խնդրի էությունը, հասկանո՞ւմ էի, թե ինչ ասել է ադրբեջանցիների կողմից հայերի ջարդ և նման բաներ… Իհարկե՝ ոչ, չէի գիտակցում, փոքր էի, երեխա, ամբողջության մի փոքր մասնիկ, հայկական ազգանունների մի փոքրիկ, սակայն՝ արդեն խրոխտ մի «յան»:

Որքա՜ն բան են տեսել Ազատության հրապարակը, այնտեղ գտնվող Սպենդիարյանի ու Թումանյանի արձանները: Համոզված եմ, որ 1988 թվականին «Օպերայի» հրապարակում ցույցերի ժամանակ նրանց հոգիներն էլ էին ալեկոծվում ու խանդավառվում:

Ազատության հրապարակից ուղղվեցի դեպի Աբովյան փողոց: Փողոցի մայթերը զարդարող հին, ռուսական կլասիցիզմի դրոշմը կրող երկհարկանի սև տները ոմանց համար ներդաշնակվում, իսկ մյուսների համար էլ չեն ներդաշնակվում ժամանակակից շինությունների հետ, որ վեր են խոյանում նույն այդ երկհարկանիների կողքին: Եվ այնուամենայնիվ, Աբովյան փողոցը Երևանի փողոցների ու երևանցիների սրտերի օրրանն է: Այն իմ ամենասիրելի փողոցներից մեկն է, իմ հանդարտ քայլքի արահետը, իմ զբոսանքի ծառուղին, իմ մտորումների ու զննումների լաբորատորիան, Երևանի զարկերակը: Այս փողոցը ինձ վրա մոգական ազդեցություն ունի: Կար ժամանակ, երբ գրեթե ամեն օր իջնում էի Աբովյան փողոցով: Այնքան տպավորություններ եմ ստացել Աբովյանից, որ ամեն անգամ ինձ թվացել է ու թվում է, թե բացում եմ ինձ համար նոր ու անհայտ հորիզոններ: Հետաքրքիր սովորություն ունեմ. եթե մայրաքաղաքի մի կանգառից մյուսը կարող եմ, օրինակ՝ տրանսպորտով հասնել, ապա հաճախ միտումնավոր այդպես չեմ անում և, երկարացնելով ճանապարհը, տեղ եմ հասնում ոտքով՝ երկարածգելով քաղաքի կենտրոնում շրջելու հաճույքը:

Նստեցի Աբովյան 11 հասցեում տեղակայված Գեղագիտության ազգային կենտրոն «Փոքր թատրոնի» շենքի դիմացի նստարանին: Քամոտ ու զով եղանակ էր, ու հաճելի էր հանգստանալ երկար զբոսանքից հետո: Դիտում էի Աբովյան փողոցով անցնող մարդկանց, դիտում ու մտորում: Նրանցից ոմանք շտապում էին ու չէին խոսում, մյուսները զբոսնում էին՝ զրուցելով: Տարբեր մարդիկ, տարբեր պատմություններ, տարբեր ճակատագրեր: Նկատեցի ինձ ճանաչող մի քանի հայացք: Սակայն լավ է,

որ մարդկանց մեծ մասը չէր նկատում ինձ՝ շարունակելով իրենց քայլքը: Ես նայում էի նրանց ու մտածում, թե որքան եմ սիրում իմ քաղաքն ու իմ հայրենակիցներին… Երևանը աշխարհի ամենագեղեցիկ, խաղաղ ու ներշնչող քաղաքներից մեկն է, և ես պատիվ ունեմ ծնված լինելու այս հրաշալի քաղաքում…

Շարունակեցի զբոսանքս ու քայլելով հասա Հանրապետության հրապարակ: Յուրաքանչյուր երևանցի առանձնահատուկ գորովանքով, պարծանքով ու սիրով, իսկ յուրաքանչյուր զբոսաշրջիկ՝ առանձնակի հիացմունքով է խոսում մեր կյանքի, մեր քաղաքի զարկերակի՝ Հանրապետության հրապարակի մասին: Նրա հետ կապված որքան հուշեր կան, և որքան իրադարձությունների ականատեսը, վկան և, կարելի է ասել, մասնակիցն է եղել ու դեռ կլինի այդ հրապարակը: Մի պահ պատկերացնենք, թե Հանրապետության հրապարակը Սևանա հիասքանչ լիճն է, իսկ հանճարեղ Ալեքսանդր Թամանյանի հրաշագեղ կամարազարդ շինությունները՝ Սևանը երիզող Գեղամա լեռները: Այդժամ կհասկանաք, որ հրապարակը մեզ համար նույնքան թանկ է, որքան մեր կենսատու Սևանը, մեր պանծալի Արարատը, մյուս բոլոր խորհրդանիշները, արժեքները, հարստությունները:

Քայլերս ուղղեցի դեպի Օղակաձև այգի, ուսանողական տարիներին գրեթե ամեն օր լինում էի այնտեղ: Օղակաձև այգու սրճարանների, «Լունապարկի» կարուսելների միջև սալահատակ արահետները երիզված են խոտածածկ հողակտորներով, որոնք տարվա այդ հատվածում արդեն գրեթե վառ կանաչ էին: Նայում էի մե՛րթ արահետին, մե՛րթ կանաչ խոտին ու մտածում, թե որքա՜ն է մարդն անջատվել բնությունից, այնտեղից, որտեղից սե-

րում է: Մտածում էի, թե ինչպես է մարդը հենց թեկուզ սալահատակ արահետն ու խոտածածկ հողատարածքն իրարից բաժանող նեղ եզրաքարերի տեսքով տարանջատող սահման գծել իր և բնության միջև...

Երբ ուշադիր նայում ես զբոսայգիներին, տեսնում ես, որ դրա զարդը ո՛չ միայն սրճարաններն են, ո՛չ միայն գեղանի ծառերն ու թփերն են, այլև սիրահար զույգերը, որոնք գրկախառնված զբոսնում են կամ նստած են նստարաններին ու իրար անուշ խոսքեր են շշնջում, համբուրվում: Նրանք աչք են շոյում ու բերկրանք պատճառում թե՛ անցորդներին, և թե՛ ծառերին, որոնք անխոս վկաներն են նրանց սիրո խոստովանությունների, անուշ փսփսոցների, մեղմ համբույրների: Սիրտս մի տեսակ լցվում է երջանկության ու բերկրանքի զգացումով, որ ամեն օր իմ քաղաքում տեսնում եմ այդ ամենը, ապրում ու զգում եմ, ուրախանում ու վրդովվում եմ, խանդավառվում ու տխրում եմ: Տեսնում եմ, թե ինչպես է ջուրը հոսում ցայտաղբյուրներից՝ Երևանի «պուլպուլակներից», ինչպես են մարդիկ նստում Հրապարակի շատրվանի սալաքարերին, ինչպես են լուսանկարվում շատրվանի կամ եկեղեցու ֆոնին, ինչպես են իրար գրկած քայլում ու վայելում պահը, կյանքի պարգևած այդ անկրկնելի պահը, երբ կողքիդ սիրելիդ է, ինչպես են էլի ուժեղ փակում երթուղային տաքսու դուռը, թեև գրեթե ամեն անկյունում գրված է «Դուռը կամաց փակել», ինչպես են փողոցով անցնում տարբեր բարբառներով խոսող հայեր, մեկը՝ Իրանից, մյուսը՝ Սիրիայից, երրորդը՝ Հայաստանի որևէ մարզից:

Բարբառներ, ձայներ, աղմուկ, հույզեր ու զգացմունքներ, հանդիպումներ ու հիասթափություններ, կարոտ ու բաժանումներ, հինավուրց քաղաք, որը իր մեջ կրում է

այս ամենը, քաղաք, որը իմ, քո, մեր բոլորի առաջին ճիչի, առաջին լացի, կարոտի, երազների, հույզերի, առաջին զանգի, առաջին սիրո, բուհական առաջին քննության, առաջին աշխատանքի, առաջին համբույրի, իմ, քո և մեր բոլորի ուրախությունների ու տխրությունների, հաջողությունների ու ձեռքբերումների, վերելքների ու վայրէջքների, դժգոհությունների ու խնդությունների վկան է, մասնակիցը, հովանավորողը, հանգրվանը:

Ամեն անգամ, երբ քայլում եմ Երևանով, ուշադիր նայում ու նկատում եմ բաներ, որոնք սովորական աչքով չես նկատում: Գարնանը, օրինակ, Երևանում առանձնահատուկ հմայիչ են ոչ միայն ծաղկած ծիրանենիները, այլև բալենիները, ավելի ուշ՝ նաև փշատենիները: Նրանց բույրից ու տեսքից փողոցը մի տեսակ քնքշանքով է լցվում: Այս ամենը շոյում է սիրտդ, ուզում ես մնալ դրսում, կամ նստել մի որևէ բացօթյա սրճարանում ու հիանալ անցնող աղջիկների գեղեցկությամբ, ծառերի փարթամ սաղարթով:

Վերադարձա տուն՝ շարունակելով մտածել այն ամենի մասին, ինչ տեսել էի զբոսանքի ժամանակ: Երևանը միշտ էլ ոգեշնչման աղբյուր է եղել ինձ համար, և յուրաքանչյուր զբոսանք իր արտահայտությունն է գտնում բանաստեղծության, արձակ տողերի կամ էլ հեղինակային երգի տեսքով:

2002, 2008, 2011, 2013

ՊԱՐԶ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Երթուղային տաքսու մեջ նստել էր մի երիտասարդ մայրիկ իր փոքրիկ աղջկա հետ, որը ուրախ զրուցում էր իր մայրիկի հետ ու հանկարծ հարցրեց.

– Մա՛մ, ինչպե՞ս են երկինք բարձրանում:

Մայրը մի պահ մտածեց՝ փորձելով պատասխան գտնել: Այնպիսի տպավորություն էր, ասես նա բարդ ու տրամաբանված մի պատասխան է որոնում, որպեսզի երեխային հանգամանորեն բացատրի, թե ինչպես կարելի է բարձրանալ երկինք: Բայց երեխան, չսպասելով մոր պատասխանին, ինքն էլ պատասխանեց իր հարցին.

– Երկինք բարձրանում են ինքնաթիռով ու տիեզերանավով: Իսկ տիեզերանավը կարող ա թռչի ու ամպերի միջից հասնի երկնքի խորքերը…

Ես լսեցի փոքրիկի խոսքերն ու մտածեցի, թե ինչքան չքնաղ է այդ պարզ ճշմարտությունը հնչում երեխայի բերանով, ինչքան անմիջական է ու ջինջ, և թե ինչքան ենք մենք՝ մեծահասակներս, հեռացել այդ ճշմարտություններից, ինչքան ենք երբեմն ավելորդ անգամ ու արհեստականորեն բարդացնում մեր կյանքը, ուռճացնում ամեն բան ու դարձնում խնդիր, խնդիրներից ստեղծում հիմնախնդիրներ և որոնում դրանց լուծման եղանակներ, դրանք բացատրելու տրամաբանական ուղիներ և, ի վերջո, խճճվում ենք մեր իսկ ստեղծած խնդիրների սարդոստայնում: Մինչդեռ շատ բաներ շատ ավելի պարզ են, և երկնքին էլ հասնելու համար պետք է ընդամենը ինքնաթիռ կամ տիեզերանավ, իսկ, ա՛յ, տիեզերանավն էլ ամպերի միջով կարող է հասնել անգամ երկնքի խորքերը…

31.01.2011

ԾԱՂԿԱԾ ԾԻՐԱՆԵՆՈՒ ՃՅՈՒՂԵՐԻ ԱՐԱՆՔԻՑ

Գարնան գագաթնակետը մայիս ամիսն է, երբ շուրջդ կանաչ են հագնում թփերը, քաղաքի երկարամյա ծառերը, երբ ընդամենը մի քանի րոպե առաջ ավարտված մանրակաթիլ, պաղ անձրևից հետո քաղաքի պուրակներում և բացօթյա սրճարանների մերձակայքում դեպի վեր են ձգվում ու բուրում արքայապսակ, պերճագեղ, մեղմ մանուշակագույն երանգով հիրիկները, իսկ խոտածածկ արահետների եզրերին իրենց գեղեցկությամբ աչք են շոյում դաշտային կարմիր կակաչները, որոնք ասես աչուկներ լինեն գետնի կանաչ «դեմքին»: Շուրջդ, կարծես, ամեն բան ծաղկում է:

Մայիս ամսին է, երբ արևը շողում է առանձնապես ջերմ ու եռանդուն, օդը կարծես լցված է սիրով, սիրելու ու սիրվելու անդիմադրելի ցանկությամբ: Մայիսին է, երբ ամեն բան թվում է թեթև, սովորականն՝ արտասովոր, դժվարը՝ հեշտ, տխուրը՝ ուրախ: Մայիսին ցողաթաթախ խոտի բուրմունքը տարածվում է օդում, իսկ հոյակազմ բարդիներն ու զմրուխտե թավ կաղնիները յուրօրինակ շքեղություն են հաղորդում մեր հինավուրց քաղաքին: Ծառերի մատղաշ, սակայն արդեն վառ կանաչ տերևները, որոնք ամռանն ավելի են մեծանում ու մուգ գույն ստանում, այնպիսի շքեղություն են հաղորդում ճյուղերին, որ ծառերն ասես կտավին վրձնած բնապատկերի պատառիկներ լինեն, որոնք աչք են շոյում գարնանային շողշողացող արևի ներքո: Կանաչի բույրը, որով լցված է օդը, պարուրում է հոգիդ ու շոյում այն:

2009 թվականի մարտի 21-ն էր, մի արտասովոր պայծառ եղանակ: Մի քանի օր ամպամած էր ու անձրևոտ, սակայն այդ և հաջորդ օրը արևոտ, լավ եղանակ էր: Բողբոջներն արդեն հայտնվել էին ու զգացնել էին տալիս, որ գարունը եկել է: Մեղմ քամին այնքան հաճելի էր, որ կարծես շոյեր մաշկդ: Նա բերում էր հեռվից եկող գարնան բույրը: Այդ բույրը նման էր ծովի կամ էլ լվացքի պարանին կախված ու արևի տակ չորացող թարմ սպիտակեղենի բույրին:

Եվ ահա այդ պահին մի բան նկատեցի, ինչը հիշարժան դարձրեց այդ օրը: Երբևէ նայե՞լ եք կապույտ, գարնանային երկնքին ծաղկած ծիրանենու ճյուղերի արանքից: Սպիտակ, ձյունաթույր ծաղիկները ասես ամպեր լինեն, իսկ երկինքն էլ՝ ավելի լազուր ու շոյիչ է թվում: Մինչև հոգուդ խորքը ներթափանցող երկնքի կապույտը կարծես պարուրում է քեզ, շոյում աչքերդ, շոյում այնպես, ինչպես լուսաշող օրիորդն է շոյում իր նուրբ մատներով: Երբ երկնքին նայում ես ծիրանենու ծաղկած ճյուղերի արանքից, հոգիդ ասես փառավորվում է, հանգստանում, բարձրանում երկինք, միաձուլվում բնությանը, հավերժականին, անբասիրին, անկրկնելիին: Մի անսահման քնքշություն է պատում հոգուդ, ուզում ես սիրել, համբուրել սիրելի էակին, շուրթերդ մեղմիկ հպել նրա շուրթերին ու ասել, թե որքա՜ն քնքուշ է նա: Եվ այդ բոլոր զգացողությունները ինձ հաղորդեց պարզ ու մաքուր, լազուր երկինքը՝ ծաղկած ծիրանենու ճյուղերի արանքից:

Գարուն է, ու ասես ինքնաբուխ կերպով ներսումդ հնչում է իտալացի կոմպոզիտոր, ջութակահար, դիրիժոր Անտոնիո Վիվալդիի՝ ամենահայտնի ստեղծագործություններից մեկը՝ «Գարունը» (ջութակի համերգների չորս ամ-

բողջական շարքերից կազմված «Տարվա եղանակներ» շարքից): Այդ հանճարեղ ստեղծագործությունն ասես պարուրում է քեզ իր զվարթ, զիլ, անսահման քնքուշ, գարնանային ու թեթև հնչյուններով: Շուրջդ ասես սկսում են դայլայլել երգեցիկ, անտառային թռչունները, սկսում է կարկաչել զուլալ գետը: Այդ ստեղծագործության առաջին իսկ հնչյուններից զգում ես քեզ դեպի անվերջությունը տանող լուսավոր, գողտրիկ մի պուրակում, որտեղ ծաղկած կամ արդեն կանաչ տերևներ հագած ծառեր են, հրաշագեղ ծաղիկներ: Հնչյունները պարուրում են քեզ, օրորում հոգիդ: Կախարդական է այդ ստեղծագործությունը, այն քեզ տեղափոխում է ազնվական, պալատական կյանք, երբ, օրինակ, Ֆրանսիայում ազնվականները պարծենում էին իրենց ծագումով, տղամարդիկ կեղծամ էին կրում, կանայք՝ պերճագեղ զգեստներ, հրացանակիրների սխրանքների մասին լեգենդներ էին պտտվում, սիրահարված դեռատի աղջիկները նամակներ էին ստանում իրենց սիրեցյալներից ու երկրպագուներից, վերջիններս չէին վարանում անգամ իրենց սրտի դիցուհու պատշգամբ մագլցել, իսկ ահա երեկոյան տոնահանդեսները պալատական կենցաղի անբաժանելի մասն էին կազմում: Լսելով Վիվալդիի «Գարունը»՝ քեզ զգում ես որպես մի ազնվական, որը դուրս է եկել մեծ պալատի այգի ու հիանում է կյանքով: Այնտեղ՝ այգում խորը շնչում ես պալատը շրջապատող ծառերի անուշ բույրն ու թարմ օդը, հիանում այգում անհոգ զբոսնող կամ զվարճացող նրբագեղ, ազնվական օրիորդներով: Նրանք անհոգ խաղում են, զվարճանում, կատակում ու ծիծաղում: Աղջիկների շիկագույն կամ շագանակագույն վարսերի խոպոպները զարդարում են նրանց սպիտակաթույր պարանոցները: Խաղի

ու զվարճանքի ժամանակ դեռատի օրիորդների զգեստների տակից նկատելիորեն ուրվագծվում է նրանց վարդակոկոն կուրծքը: Աղջիկների մաշկից, որը աստիճանաբար վարդաթույր է դառնում բացատում վազվզելիս, մի առանձնակի առողջություն է ճառագում, նրանց մաշկը շողում է արևի ճառագայթներից: Օրիորդների անուշ ծիծաղը տարածվում է ամենուր ու խառնվում թռչունների դայլայլին՝ լրացնելով բնության գարնանային զվարթ համանվագը: Վիվալդիի «Գարնան» հնչյունները մի տեսակ թռիչք են հաղորդում, դու սավառնում ես ազատության մեջ: Երկինքը դառնում է է՛լ ավելի կապույտ և անսահման՝ շարունակելով քեզ համար մնալ որպես երազների ու իղձերի դրախտավայր: Վիվալդիի «Գարունը» թեթևասահ ու անուշաբույր գարնան լավագույն արտացոլումն է:

Մարտ, ապրիլ և մայիս: Մարտը նոր զգացումների ու հույզերի, նոր երազանքների ու ծրագրերի ամիս է: Ու կարծես շուրջդ ամեն բան շնչում է գարնանային թարմությամբ: Ծառերը, որ զարդարուն ճյուղերով սպասում են կանաչ հագնելուն, ասես մոտենում են իրար ու շշնջում գարնանային այն հեքիաթի մասին, որն ամեն տարի սկսվում է մարտ ամսվա հետ: Դեռ փետրվարի կեսերին, երբ արդեն զգացվում է գարնան մոտալուտ գալուստը, երբ օդում զգացվում է գարնան բույրը և շունչը, մի տեսակ կենդանանում ես, ավելի թեթևանում: Տարվա բոլոր եղանակները գեղեցիկ են, սակայն գարունը առանձնահատուկ է նրանով, որ նրա գալստյան հետ դու էլ ես ծնվում նորից, արթնանում ձմռան նիրհից: Փետրվարի վերջին, մարտի սկզբին, երբ տեղ-տեղ դեռ ձյան հետքեր են, սակայն օրերն արևոտ են արդեն ու եղանակն էլ՝ տաք, այնպիսի չքնաղ բույր կա օդում, որ ամբողջ թոքերով, քիմքով, քթով

զգում ես գարնան գալուստը: Բացում ես պատուհանը, մեղմ զեփյուռ է ներս թափանցում, որը սառն է, սենյակը սառեցնում է, սակայն այնքան հաճելի է, որ զովանում ես, ոչ թե սառչում: Օդը մի տեսակ անուշ ու թեթև բույր ունի, բույր, որում միախառնվում են ձնհալից հետո հողի, շուտով բողբոջել պատրաստվող ճյուղերի ու կոկոնների, տրորված տերևների, հազիվ ծլած աննշան խոտի բույրերը: Այնքան թեթև ու հաճելի է այն, այնքան մեղմ, որ հոգիդ ասես սավառնում է: Տարվա ընթացքում ոչ մի ուրիշ ժամանակ այդպիսի կենդանություն, զարթոնք, ակտիվություն չես զգում: Աշխատունակությունդ մեծանում է, ընդգծված կենսուրախ, կենսազգաց ու զգայական ես դառնում, զգում ես, որ ուժեղ ես ու էներգիայով լեցուն, համարձակ ու հմայիչ, գրավիչ ու ծաղկող: Մեղմ, գարնանաբույր զեփյուռը լցվում է սենյակ՝ օրորելով շերտավարագույրը, հաճելի զովությունից դեմքդ սառչում է: Յուրանչյուր բջիջով զգում ես գարնան գալուստը: Գարունը միակ եղանակն է, երբ կյանքը այդքան եռուն է ու հիասքանչ: Գարունը դուրեհաճ ու քնքուշ է գարնանային ձնծաղիկների պես, որոնք լցնում են տունդ իրենց անուշ բույրով, որը չսիրել ուղղակի հնարավոր չէ: Ուզում ես, որ նրանց բույրը միշտ քեզ հետ լինի: Գարնանը թոքերդ ուզում են թթվածին ներքաշել իրենց ամբողջ տարողությամբ, սիրտդ բաբախում է թմբուկի պես: Թարմաբույր գարնանը գեղեցիկ է ամեն բան, գեղեցիկ են խոսքերը, գեղեցիկ է քաղաքը, որ կամաց-կամաց թոթափում է ձմեռվա բեռը, գեղեցիկ են անգամ խանութների ցուցափեղկերն ու գովազդային վահանակները:

Սակայն, գարնանը, լինի դա ձնծաղկաբույր մարտ թե ծիրանածաղիկ ապրիլ, ոչինչ այդքան գեղեցիկ չէր լինի, եթե չլինեին մեր կյանքին առանձնահատուկ շուք հաղորդող, մեր կողքին ու մեզանից հեռու, մեզ ծանոթ ու անծանոթ, մեզ սիրելի ու մտերիմ, մեզ գրավող ու ցանկալի կանայք: Գարունը սկսվում է կանանց հետ, նրանց կենսուրախ ներկայությամբ ու հմայքով: Յուրաքանչյուր կին մի առանձին պոեզիա է, մի առանձին պատմություն, խորհուրդ: Կինը, ըստ իս, բնության արարչագործության պսակն է, կյանքի իմաստն ու սկզբնաղբյուրը, կինը պատճառն է ու նպատակը, մեզ կյանք պարգևողն է ու ոգեշնչողը, իր նազանքով ու քնքշությամբ մեզ արբեցնողը:

Ապրիլին ծառերը ծաղկում են, ու շուրջբոլորը լցվում է ծաղիկների անուշ բույրով: Եվ հատկապես ապրիլին է, որ կնոջ գալուստը տղամարդու կյանք ասես ազդարարում է վերջինիս կյանքի նոր գարուն, նոր սկիզբ՝ նույնքան նոր իմաստ հաղորդելով դրան: Ապրիլին կինը չքնաղ է ու սիրելի: Նա հայտնվում է ծառի նորաբաց բողբոջի պես մեղմորեն ու գեղեցիկ, հայտնվում է ժպիտով: Ապրիլյան կինը իր արևային լուսաշող հայացքով ջերմացնում է և հիացնում լուսնափայլ գիշերվան հատուկ խորհրդավորությամբ: Նա իր կանացի հմայքով գերում է, ինչպես ծաղկափոշի որոնող մեղվին գերում է գարնանաբույր ծաղիկը: Գարնանային բնության անուշահոտությամբ արբեցնող նրա նուրբ ու թավշյա մաշկը շոյելիս, նրա կանացի ու բարեկազմ մարմինը սիրելիս, տաք ու անուշ գրկում անսահման երանություն վայելելիս ապրիլը թվում է ավելի քնքուշ, ապրիլյան զգացողությունները՝ ավելի հոգեպարար: Կինը ապրիլին մի հեքիաթ է, որը ձգվում է մի ամբողջ կյանք…

…Իսկ այս ընթացքում ծաղկած ծառերը, որոնց ճյուղերի արանքից այնքա՜ն գեղեցիկ է գարնանային երկինքը, արդեն հասցրին իրար կամացուկ պատմել գարնանային պատմությունները: Ականջ դրեք ծառերին, նրանք երբեմն այնքա՜ն գեղեցիկ են խոսում…

2009

ԿԵՂՏՈՏ «ԿՐԻՄԻՆԱԼԻՑ» ՄԻՆՉԵՎ ՄԱՔՈՒՐ ՁՅՈՒՆ

Այն, ինչ տեղի ունեցավ այսօր առավոտյան, ինձ ստիպեց անպայման գրել ու կիսվել ձեզ հետ:

Առավոտյան գնում էի աշխատանքի: Ժամը 8-ն անց կես կլիներ արդեն: Շատ առատ ձյուն էր տեղում:

Շտապում էի կանգառ: Շուրջս բազմաթիվ մարդիկ էին, որոնք նույնպես շտապում էին աշխատանքի, երեխաներ, որոնք գնում էին դպրոց, մեքենաներ, որոնք փորձում էին առաջ շարժվել ձյունածածկ փողոցում:

Եվ ահա, երբ մեր շենքի բակից դուրս եկա փողոց, իմ դիմացից քայլում էին երեք-չորս դպրոցական աղջիկներ: Երևի մի 12-14 տարեկան կլինեին: Մեջքներին իրենց պայուսակներն էին, տաք հագնված շտապում էին դպրոց և զրուցում: Ձյունն այնքան շատ էր, որ դժվարացնում էր քայլելը, այնպես որ, մինչև ես անցա այդ երեխաների կողքով, լսեցի նրանց զրույցը: Երեխաներից մեկը, մի շատ ժիր ու կայտառ աղջիկ, ընկերուհիներին պատմում էր.

– Բա իմացել ե՞ք, ներքևի կանգառում «ավարիյա» է եղել: Մի քանի մեքենա խփել են իրար:

Երեխաներից մեկը հարցրեց, թե ի՞նչ մեքենաներ էին, և աղջիկը պատասխանեց.

– Մեկը «ժիգուլի տաքսի էր», մյուսը՝ լավ մեքենա:

«Լավ մեքենա», – լսեցի ես, «ժիգուլի տաքսի» և «լավ մեքենա»: Այդ պահին մտածեցի, – է՛յ գիտի ժամանակներ, անցան ձեր ժամանակները, ժիգուլիներ: Այսօր խորհրդային ժամանակների այդ մեքենան երեխայի մոտ ասոցիացվում է չես հասկանում, թե ինչի հետ, ու նա հստակ տարբերակում է՝ «ժիգուլի» և «լավ մեքենա»: Պարզ է, որ այդ փոքրիկ երեխան «լավ մեքենա» ասելով հաստատ նկատի ուներ մի որևէ արտասահմանյան մակնիշի մեքենա: Իսկապես, փոխվել են ժամանակները:

Նստեցի մեքենա, որ հասնեմ գործի: Վարորդը սկսեց խոսել տեղացող ձյան պատճառով ստեղծված անհարմարություններից, որ «սաղ քշեր ձունա եկել, աղ չեն ցանում, նոր-նոր էսօր առավոտ ցանեցին, էրեգ քշեր էնքան սառած էր, որ աղ ցանող մեքենաները չէին կարողանում աշխատել», հետո պատմեց, որ. «վարորդները «կալոսները» չեն փոխում, կապռոն են դնում, ձմեռային «պակռիշկա» չեն դնում ու «պռոպկա» սարքում»: Հետո պատմեց, թե ինչպես մի «Երազ» մակնիշի մեքենա վաղ առավոտյան սղացել ու խփել է «ստոլբին» ու «գառմոշկա» դարձել: Խեղճ Երազ: Մի խոսքով՝ ամբողջ ճանապարհին նա խոսեց միայն խնդիրների մասին, չմոռացավ պատմել նաև իր նոր «բանտաժների» ու մեկ էլ այն մասին, թե ինչպես է ինքը աշխատել «Ռուսաստան տեղ» (դա իր խոսքերն են, ինձ թվում է՝ արդեն երկու Ռուսաստան կա, մեկը Ռուսաստան, մյուսն էլ ինչ-որ տեղ է, որտեղ

Ռուսաստանն է): Ահա այս մտքերով տարված՝ ես հասա աշխատանքի վայր: Ամբողջ ճանապարհին մտքիցս դուրս չէր գալիս երեխաների առավոտյան զրույցը: Ձյունը շարունակում էր առատորեն տեղալ (հիմա էլ է դեռ նույն առատությամբ գալիս): Հրաշք է, որ այսքան տարիների ընդմիջումից հետո մի կարգին ձմեռ է անում: Գալով աշխատանքի՝ ես երեխաների զրույցի մասին պատմեցի գործընկերներիցս մեկին: Պատմեցի, թե ինչպես այդ երեխայի համար մեքենաներն այսօր բաժանվում են երկու խմբի՝ «լավ» և «ժիգուլի»: Զրույցի ընթացքում գործընկերս ասաց. «Ինչ հետաքրքիր է, երեխաները այս առատ ձյունը թողած՝ զրուցում են ավտոպատահարից»: Եվ ես, խորապես շնորհակալ լինելով նրան այդ մտքի համար, ուզում եմ շարունակել ու զարգացնել այն: Տեսեք, դրսում առատ ձյուն է, հեքիաթային ձմեռ, իսկ մեր երեխաները խոսում են պատահարներից: Փոխանակ ուրախանան տեղացող ձյան գեղեցկությամբ, փոխանակ խոսեն գեղեցիկ բաներից, խոսում են այն ամենից, ինչ տեսնում են ամեն օր եթերում՝ վթարներ, զոհեր: Ես վաղուց չեմ նկատել, որ երեխաները առաջվա ուրախությամբ ու աշխուժությամբ դրսում խաղան, երբ ձյուն է գալիս, ձնագնդիկ գրեթե չեն խաղում: Գործընկերս ճիշտ նշեց, որ ձնեմարդուկ գրեթե չի տեսնում բակերում, և երեխաներն էլ, երևի, ամեն մեկը մի համակարգչի դիմած նստած հափշտակված ինչ-որ խաղ է խաղում: Ասեմ, որ մեծահասակներն էլ ընենց ոչինչ՝ ոչ մի ռոմանտիկա չկա, մենակ խոսում են դժվարություններից, վատ ճանապարհներից, վթարներից, գների բարձրացումից և այլն: Եվ ես իսկապես տխրեցի: Ինքներդ մտածեք՝ մեր կյանքը, ցավոք, այսօր այնքան հեքիաթազուրկ է, այնքան հոգսառատ, որ մեր շուրջը այսպիսի

հրաշք, առատ, գեղեցիկ ծյուն է տեղում և գրեթե ոչ մեկն այդ մասին չի խոսում, ոչ մեկը դա չի նկատում: Ափսո՜ս: Որքան են փոխվել ժամանակները: Հիշում եմ, որ նույն այդ «ժիգուլիների տարիներին» կամ ինչո՞ւ այդքան վաղ, բոլորովին վերջերս էլ, երեխաները բակ էին վազում, երբ ծյուն էր տեղում, խաղում էին, հրճվում, «ձնագնդիկա-հարվում», ձնեմարդուկներ սարքում, զվարթ խաղեր խաղում, մեծահասակները սահնակներով ման էին տալիս իրենց բալիկներին, անգամ իրենք էին պահի տակ ձնագնդիկ խաղում: Ո՞ւր են այդ ժամանակները: Ինչպես Ֆորշի հայտնի երգում. «Ո՞ւր են մեր բակի բիծեքը...»:

Մի՞թե կյանքն այսօր այնքան գորշ ու հոգսառատ է, որ կորցրել ենք գեղեցիկը ընկալելու, առատ ծյունը նկատելու ունակությունը, այն էլ այսօր, որ ծյունից գրեթե զուրկ այսքան տարիներից հետո վերջապես այսպիսի ծյուն է գալիս: Հենց հիմա նայեք ու տեսեք, թե ինչ գեղեցիկ է ծյունը: Այնքան ենք հեռացել բնությունից, որ ծյունը «դիտում ենք» միայն պատուհանից:

Հասկանում եմ՝ լավ օրից չէ, արդեն չենք էլ նկատում բնության գեղեցկությունը: Ինչպես «Չի կարող պատահել» սիրված ֆիլմում Գեորգի Վիցինի հերոսն է ափսոսանքով ասում. «Կոպիտ դար է, կոպիտ բարքեր, ռոմանտիզմ չկա...»: Հասկանում եմ, որ այո, այսօր ռոմանտիզմի պակաս կա մեզանում, սակայն երիցս ցավալի է, որ այդ ռոմանտիզմի, գեղեցիկի ընկալման պակասն այդքան նկատելի է մեր երեխաների մեջ, այն է՝ մեր վաղվա օրվա, մեր ապագայի մեջ: Երեխաներն այսօր այնքան զրկված են կյանքի հեքիաթից, որ ուշք ու միտքները մեծահասակների աշխարհի իրադարձություններն են՝ մեքենաներ, համակարգիչներ ու բջջայիններ, պատահար-

ներ ու սպանություններ, սերիալներ ու կեղտոտ «կրիմինալ», սա սրան սպանեց, նա նրան բռնաբարեց, սա սրանից «քցեց», նա նրան խաբեց և այլն:

Իսկ ձյունն այնքան գեղեցիկ է…

Մի տեսեք, թե ինչ մաքուր ու թավ սավանով է այն ծածկել շուրջբոլորը: Ծառերի ու, հատկապես՝ եղևնիների ճյուղերը ճկվել են ձյան ծանրության տակ: Փաթիլները մեկը մյուսի հետևից իրենց հետքն են թողնում ձյան սավանին ու ևս մի միլիմետրով ավելացնում այդ փափուկ ու գեղեցիկ գորգը: Շուրջը մաքուր օդ է ու սառը, թարմ եղանակ: Մի տեսակ անուշ բույր է երկնքում՝ առատ տեղացող ձյան բույրն է դա: Փաթիլները շարունակում են իջնել և ասես երգում են, պատմում մի կախարդական հեքիաթ՝ մեր աչքերում դառնալով լուսավոր երազ: Այս ձյունը նվեր եղավ մեզ: Այսքան երկար տարիների դադարից հետո վերջապես նորից իսկական ձմեռ է: Հոգ չէ, որ ճանապարհները փակ են, դրանք վաղ թե ուշ կբացվեն, զգույշ լինենք, որ մեր հոգու ճանապարհները հանկարծ չփակվեն: Հարկավոր է նկատել մեր շուրջը տիրող այս գեղեցկությունը և մեր երեխաներին էլ անպայման փոխանցել, սովորեցնել, նրանց մեջ ձևավորել աշխարհը ավելի զգայական կերպով ընկալելու, ավելի գեղեցիկ տեսնելու կարողությունը, ձգտումը, այլապես մեր կյանքը կլինի միայն հոգսերի, դժգոհությունների, վթարների, պատահարների ու սերիալների մի ամբողջություն, տխուր ամբողջություն: Այնպես որ, պետք չէ տխրել՝ նայելով ձյանը, այն այնքա՜ն գեղեցիկ է, պետք է հիանալ նրանով, գնահատել բնության այս հրաշքը, նկատել ու գնահատել կյանքի ամեն մի գեղեցիկ դրվագը, երևույթը:

Հիմա կասեք, այս մարդը անվերադարձ ու անդառնալի ռոմանտիկ է: Բայց, հաստատ գիտեմ, որ դուք էլ, ձեր տան կամ աշխատավայրի պատուհանից նայելով ձյանը, հոգու խորքում մանկան հափշտակությամբ հիանում եք ձյան աչք շոյող սպիտակ գորգով, դանդաղ ու մեղմորեն ցած իջնող անուշ փաթիլներով, և այս պահին հաստատ մտածում եք ոչ թե «բանտաժների» կամ «փողոցները աղ ցանված լինելու մասին», այլ այն մասին, թե որքան գեղեցիկ է ձմեռը, որքան մաքուր ու դյութիչ է ձմռան հեքիաթը, որքան գեղեցիկ է բնությունը, կյանքը և, իհարկե, որքան լուսավոր ու ձյան պես մաքուր է լինելու մեր ապագան:

10.02.2012

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՌԵՔՎԻԵՄ

Պապիկս հաճախ էր կրկնում. «Էսպես էլ չի մնա»… Հովհաննես Թումանյանի «Էսպես չի մնա» ստեղծագործությունից էր (1908 թ.), որը նա սիրում էր ինձ պատմել՝ մե՛րթ բանաստեղծության տեսքով, մե՛րթ հեքիաթի: Փորձելով ինձ՝ իր թոռնիկին, փոխանցել կյանքի փիլիսոփայությանը վերաբերող մտքեր՝ նա միշտ կանգ էր առնում այն մտքի վրա, որ այս աշխարհում ոչ մի բան հավերժ չէ, այդպես չի մնում, փոխվում է, անցնում-գնում, և որ ամենակարևոր բանն այս կյանքում բարի համբավ թողնելն է: Սիրում էի լսել իմ պաշտելի պապիկին և իրականում շատ բան եմ սովորել նրանից: Դե իսկ ահա այդ արտահայ-

տությունը և ինքը՝ բալլադը անջնջելի հետք թողեցին իմ հոգում: Եվ ես որոշեցի գրել մի այդպիսի «բալլադ»՝ նվիրված գարնանը:

«Գարնանային ռեքվիեմ» վերնագիրը, որը վաղուց էի մտահղացել, հրաշալիորեն արտացոլում է այն, ինչ ուզում եմ գրել այդ արձակ «բալլադում»: Ինչու «գարնանային», և ինչու «ռեքվիեմ», և ինչ կապ ունի այս ամենը «էսպես չի մնա» բալլադի ու դրա իմաստավորման հետ…

Յուրաքանչյուր գարնան մեջ կա տխրության որոշակի տարր: Ինքը՝ գարունը, կյանքի ու վերածննդի խորհրդանիշն է, երբ կյանք է առնում ամեն բան, երբ ձմռան քնից արթնանում ու զվարթանում է ամեն ինչ: Սակայն ամեն մի նոր բացված ծաղիկ կամ բողբոջ չունի հավերժ կյանք: Փաստորեն, թեև գարնան հետ կյանք է առնում ամեն բան, սակայն դա էլի ժամանակավոր է. մինչև որ հաջորդ տարի նույն այդ ծաղկին փոխարինելու է գալիս մեկ ուրիշը, երբեմնի բացատի կամ հողակտորի փոխարեն հայտնվում է բետոնի ծածկ, իսկ հին ավտոմեքենաները աղբանոցներում ժանգոտում են որպես «մետալալոմ»՝ տխուր հայացքով հետևելով ժամանակի շքեղ մեքենաների ընթացքին: Հետևապես «էսպես չի մնա»-ն վերաբերում է ամեն ինչին՝ ծաղկին ու բողբոջին, առատորեն եկած ձյանը, որը հալչում է գարնան հետ ու անհետ կորչում, անձրևից խոնավացած հողին, որը ծածկվում է ասֆալտի տակ, փտող մեքենային կամ իր դարն ապրած համակարգչին, և այլն: Կենդանի բնության ամեն մի արարած ապրում է իր կյանքն ու մահանում՝ սկիզբ դնելով կամ տեղը զիջելով նոր կյանքի, հաջորդ սերնդին: «էսպես չի մնա»… և նույնիսկ զգացմունքն ու միտքը, հույզն ու ապրումն են երբեմն կերպափոխվում

մեկ այլ մատերիայի՝ իրենց արտացոլումը գտնելով այդ նոր մատերիայում: «Էսպես չի մնա»-ն միայն կենդանի բնությանը, մարդու հուզազգացմունքային դաշտին ու գիտակցությանը չի վերաբերում: Անգամ անկենդան բնության մեջ է փոփոխությունն անընդհատ. բնակլիմայական, աշխարհագրական անդադար փոփոխությունների հետևանքով ոչ մի լանդշաֆտ անփոփոխ չի մնում՝ ժամանակի հետ ենթարկվելով ակնհայտ կամ անգամ անտեսանելի, սակայն՝ փոփոխությունների: Նույնը կարելի է ասել այն ամենի մասին, ինչ ստեղծել ու ստեղծում է մարդը: Համամարդկային հոգևոր-մշակութային արժեքներ ներկայացնող բազմադարյա կոթողներն անգամ ժամանակի հետ հետզհետե զիջում են իրենց դիրքերը: Օրինակ՝ եգիպտական բուրգերը, որ կանգուն են արդեն քանի հազարամյակ ու ժամանակին չենթարկվող մարդկային մտքի՝ ճարտարապետական ու ինժեներական գլուխգործոցներ են, ժամանակի հետ նույնպես կապրեն իրենց կյանքը. մի քանի հազար տարին մեզ համար է անվերջություն, մինչդեռ Երկիր մոլորակի կյանքի տևողության, մոլորակի ծագման ու զարգացման ամբողջ պատմության մեջ ընդամենը մի ակնթարթ է: Հետևաբար «Էսպես չի մնա» կարելի է «ասել» ամեն ինչի վերաբերյալ: Սակայն դրա մեջ տխրություն կա: Այո՛, այո՛, տխրություն: Իսկ տխրությունը ինձ համար միշտ ասոցացվում է ռեքվիեմի հետ, մոցարտյան ռեքվիեմի՝ նույնքան տխուր ու մելամաղձոտ, մտորումների տեղիք տվող, ինչ-որ տեղ՝ ահազդու ու հոգեցունց: Միևնույն ժամանակ, ամեն բանի ծագումն ու առաջացումը ուղղակիորեն կապվում են գարնան հետ, ավելի ճիշտ՝ «գարուն» երևույթի հետ. այն է՝ նոր սկիզբ, նոր մեկնարկ, նոր արարում, նոր կյանք, ձյան շերտի տա-

կից դուրս եկած ձնծաղիկ: Ուստի և՝ կյանքի յուրաքանչյուր ձև կամ ստեղծված ցանկացած արժեք ունի սկիզբ («գարուն») և ավարտ («ռեքվիեմ»), իսկ «գարնան»՝ որպես կենսատու արարման և «ռեքվիեմի»՝ որպես տխրածոր ավարտի համադրությունը ծնում է «Գարնանային ռեքվիեմ»: Ասել կուզի՝ ամեն ինչ ու ամեն բան, ամեն արարած ու ամեն միտք ստեղծումով գարուն է, ավարտով՝ ռեքվիեմ, հետևաբար ամբողջ կյանքն է մի ուրույն «Գարնանային ռեքվիեմ», որում կա և՛ ուրախություն, կյանքի զարթոնք, և՛ տխրություն ու մայրամուտ: Ամբողջ կյանքն է մի յուրահատուկ շրջաբերական, երբ իրերն ու երևույթները, կենդանի ու անկենդան ամեն բան փոխարինում են իրար: Ամեն մեկս մի ուրույն և անկրկնելի «Գարնանային ռեքվիեմ» ենք մեր սկզբով և ավարտով, ամեն մեկս հետք ենք թողնում այս կյանքում, սակայն չենք ապրում հավերժ, մեզ փոխարինում են մյուսները, այս արևի տակ իրենց տեղը զբաղեցնում ու կյանքը յուրովի վերափոխելու են գալիս՝ իրենք էլ ենթարկվելով փոփոխության: Համոզված եմ, որ յուրաքանչյուրը ներքին խաղաղություն ու երջանկություն է գտնում այն ժամանակ, երբ կարողանում է գիտակցել կյանքի այդ փոփոխականությունն ու փուլայնությունը, ընդունել դա, կարողանում է հաղորդակցվել կրտսեր սերնդի հետ, տեսնել նրա մեջ հենց այն հաջորդականության մարմնավորումը, որը կյանքի հիմքում է, զարգացման շարունակականության առանցքում: Եթե կենտրոնանում ես միայն քո ու քո սերնդի վրա՝ համարելով, որ միայն ու միայն դու ես փրկելու «իրավիճակը», միայն դու ես ամբողջ «իրավիճակի», անցյալի, ներկայի ու ապագայի տերն ու կերտողը, ապա կորցնում ես երջանկություն պարգևող այն ներքին վիճակը, երբ կյանքի փոփոխա-

կանության, ոչ մի բանի հավերժ չլինելու, այն է՝ «էսպես չի մնա»-ի նկատմամբ մարդն ունենում է համարժեք ընկալում ու այդ ընկալումը գնահատելու, վերլուծելու ու արժեքավորելու բարձրագույն գիտակցություն: Եթե չես հավատում կամ՝ համոզված չես, որ նոր, քեզ հաջորդող սերունդը կյանքի առաջընթացի ու զարգացման մարմնավորումն է և առհավատչյան, ապա կորցնում ես կյանքի ճիշտ ընկալումը և քո տեղն ու դերն այդ կյանքում, ինչ-որ առումով՝ կորցնում ես նաև քո «Գարնանային ռեքվիեմը»: Քեզ այլևս չես տեսնում ու դիտում այդ անվերջ շրջաբերականի մեջ: Արհամարհելով սպասվող ու անպայման փոփոխության փաստը, չտեսնելով ու չգնահատելով եկող սերնդի «գարունը», որը անպայման գալիս է ու մշտապես «հետապնդում է» քեզ՝ դու կորցնում ես քո իսկ «գարունը», ինչը շատ ավելի տխուր է, քան ինքը՝ ռեքվիեմը:

«Գարնանային ռեքվիեմ»-ը ամենուր է, ամեն ինչում: Սակայն մի՞թե իսկապես չկա ոչ մի մնայուն բան, մնայուն արժեք, մնայուն երևույթ, որը ենթակա չէ ժամանակի փոփոխությանը, որին չի սպառնում սերնդափոխությունը, որը չի ստեղծվում, չի ծնվում մի սերնդի և մեռնում՝ մեկ այլ սերնդի հետ, չի ծնվում մի ծաղկի մեջ ու մահանում, երբ դաշտը ծածկվում է նոր ծաղիկներով: Ո՛չ, այդպես չէ, կա մի բան, որը ենթակա չէ «էսպես չի մնա» ձևակերպմանը: Կա մի բան, որը մնայուն և հավերժ է: Դա սերն է: Այն ամենուր է: Սերը՝ Աստծո խոսքում ու արարքներում է, ամենափրկիչ հավատքի հիմքում է, այն մարդկանց սրտերում է, մարդիկ իրենք սիրո արարման արդյունք են: Սերը՝ օվկիանոսի ու ավազահատիկի արանքում է, հող–ցողուն–արև եռամիասնության մեջ, ծաղկի թերթիկի ու ցողունի շփման կետում, մարդ–բնություն դարավոր ու

փխրուն հարաբերության առանցքում, երաժշտական գործիքի ու երաժշտության համատեղ աշխատանքում, հավատքի ու հույսի՝ որպես՝ «գումարելիների տեղափոխությունից գումարը չի փոխվում» բանաձևման մեջ, տիեզերքի անհունի ու յուրաքանչյուր մոլորակի ու աստղի ուղեծիրում, ամեն համբույրի մեջ և կիսվող ամեն բջիջի ներսում, արևի ճառագայթներից ֆոտոսինթեզի շնորհիվ թթվածին արտադրելիս և կամ միտոքոնդրիումների կողմից՝ ՌՆԹ և ԴՆԹ սինթեզելիս, տապանաքարին կաթացած արցունքի գոլորշիացող կաթիլի մեջ և եկեղեցու սրբապատկերին հավատքով նայող աչքերում, երկինք հառած հայացքում և իր ծագին կեր բերել շտապող էգի ջանքերում, մոր արգանդում թաթիկները շարժող պտղի սրտի աշխատանքում և անկողնում իրար սիրող երկու արարածների հոգիներում ու մարմինների միաձուլման մեջ: Սերն ամենուր է, և միայն սերն է, որ չի ենթարկվում ժամանակին, միայն սերն է, որ ծնունդ է տալիս նոր գաղափարին, նոր մտքին, նոր հույզին ու նոր ապրումին, նոր բալիկին ու անգամ՝ նոր հավատքին, նոր սիրուն ու նոր գարնանը: Սերն է, որ հնարավորություն է տալիս ապրելու գարուն ու գրելու «ռեքվիեմ»: Սերն է, որ մեզանից յուրաքանչյուրի մեջ է ու մեզանից յուրաքանչյուրին տիեզերքին, անսահմանին կապողն է: Սերն է, որ փոփոխում է կյանքը՝ ինքը երբեք չփոփոխվելով: Սերը միակ բանն է, որ «էսպես չի մնա» չի ճանաչում, քանի որ յուրաքանչյուր «էսպես չի մնա» նույնպես սիրո հետևանք է, նոր սիրո հետևանք, յուրաքանչյուր «էսպես չի մնա» մի «Գարնանային ռեքվիեմ է»:

05.04.2013

ՃՈՌՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ԱՊՐԵՆՔ...

Գիշերը շատ քնքուշ ու անձնական ժամանակ է, երբ հնարավորություն կա աշխարհից առանձնանալու, կտրվելու առօրյա վազքից, հոգսերից, կտրվելու ու խորհելու: Ամեն անգամ, երբ անքուն գիշեր է լինում, ես այն բաց չեմ թողնում ու փորձում եմ հնարավորինս շատ բան՝ շատ մտքեր, զգացողություններ քաղել գիշերվանից: Լինում են գիշերներ, որոնք նոր ու հզոր մտքեր են ծնում, նոր ծրագրերի հիմքեր դնում: Գիշերը, հիրավի, հրաշալի ժամանակ է: Այն կտրում է քեզ աշխարհից, ու դու մնում ես քո զգացողությունների ու խոհերի հետ: Գիշերը խորհրդավոր ժամանակ է, մտովի կարծես վերադառնում ես մանկություն՝ վերապրելով այն ամենը, ինչը հեռավոր անցյալում է: Այդ պահին, կարծես, ավելի մոտ ես քո մանկական ամենանվիրական երազներին ու զգացողություններին: Դրանցից շատերը իրականություն են դարձել, մյուսներն սպասում են իրենց հերթին:

Յաննին մի հրաշալի ստեղծագործություն ունի՝ «One Man's Dream» վերնագրով: Ահա այդ երաժշտական ստեղծագործությունը լսելիս իմ հոգին, ասես, պարուրում է գիշերվա խորհրդավոր խաղաղությունը:

Հաճախ է պատահել, որ անքուն գիշերվա ընթացքում վերցրել եմ թուղթ ու գրիչ, կամ նստել եմ համակարգչի դիմաց ու գրել: Հաճախ ստացվում է իսկապես հետաքրքիր, հաճելի ու խիստ անձնական գրվածք, մտքերի անկեղծ շարադրանք, գրական բոհեմին չհավակնող, սակայն հեղինակի համար ոչ պակաս թանկ արձակ մի ստեղծագործություն:

Ահա այդպիսիներից մեկը, որը գրել եմ հերթական անքուն գիշերվա ընթացքում. «Հետաքրքիր պահ է… հետաքրքիր այն առումով, որ սկսում ես գրել՝ առանց իմանալու, թե հաջորդ տողն ինչ ես գրելու: Հրաշալի պահ է, քանի որ լիովին ազատ ես: Այո՜, գրելու ժամանակ մարդ լիովին ազատ է միայն այն պահին, երբ չգիտի, թե ինչ է գրելու մյուս տողում, երբ նստում է թղթի դիմաց առանց կանխամտածված մտքերի, մտավոր «մշակումների»: Ու ձեռքդ սահո՜ւմ է… Ճիշտ է, երբեմն դադար ես տալիս ու ականջ դնում ճռիկի ձայնին: Ես, օրինակ, այդ ձայնի համար ուղղակի խենթանում եմ: Դա կարծես գիշերվա ձայնը լինի: Գրում ես՝ առանց իմանալու, կռահելու հաջորդ տողիդ բովանդակությունը: Գրում ես ու լսում ճռիկին՝ առանց հասկանալու նրա անդադար ճռռոցի էությունը: Այդժամ ցանկանում ես ի մի բերել մտքերդ ու զգացողություններդ: Ճռիկի ձայնն էլ, կարծես, օգնում է մտքերդ հավաքելուն ու մեկտեղելուն: Ահա այդպիսի մոգական ազդեցություն ունի այդ գիշերային «երաժշտությունը», գիշերային այդ «One Man’s Dream»-ը:

2004 թ. օգոստոսի 21-ի, լույս 22-ի գիշերն է, ժամը 4 անց է 15 րոպե: Գրում եմ ժամը, ֆիքսում եմ այն, որպեսզի վերջում տեսնեմ, թե ինչքան դիմացա անքնությանը և ինչքան դիմացավ ճռիկը: Ուզում եմ ճշտել էլի, թե մեզանից ով է ավելի դիմացկուն, ով ավելի շուտ կճռռա:

Միայնակ մարդը, որը ծանրացել է իր իսկ մտքերի բեռից, կարիք ունի արտահայտվելու: Ո՛չ, ես չեմ պատրաստվում ճռիկի պես բարձր ճռռալ իմ մտքերի մասին: Հակառակը, աշխարհից կտրված պոետի պես անձայն նստել եմ մեր «բալկոնում» ու գրում եմ: Ի՞նչ եմ զգում այս պահին: Դժվար է մեկ բառով ասել, թե ինչպիսի զգացո-

ղություններ են պատել ինձ: Ես այնքան նպատակներ ու երազանքներ ունեմ, որ երբեմն մտածում եմ, թե իսկապես մեկ հոգու մեջ դժվար է պահել այդքանը: Աստված, բնությունն ինձ այդպես են ստեղծել, ծնողներս ինձ այդպես են դաստիարակել: Ամեն մարդ բազմաթիվ երազանքներ ունի, որոնց իրականացման ճանապարհին տքնում է, ջանում, ձգտում, հաճախ՝ «ճռռում»: Շատ նպատակների իրականացումը, ցավոք, կապված է ֆինանսների հետ: Սենյակի լույսը վառել եմ ու արթնացրել եմ սենյակի միջատներին, հատկապես՝ ճանճերին: Մեկի գլուխն արդեն քոր է գալիս, սակայն ես ներում եմ նրան: Գիշերվա 4 անց 35 րոպեին կարելի է ներել ճանճին, որին իր կամքին հակառակ, հանել են քնից: Ճռիկն էլ իր հերթին է ավելի ու ավելի ուժգին ճռռում: Մի ճռիկ, երկու ճանճ, անվերջ ձգվող մի գիշեր ու մի ամբողջ աշխարհ…

Հիմա մենակ եմ: Մտածում եմ, սակայն ոչ թե ուղեղս «բռնաբարելու» նպատակով, այլ հասկանալու համար: Ընդ որում, մտածում եմ բազմաժանր ու բազմաֆրոնտ, համացանցում հավանածս աղջկան գրածս նամակի բովանդակությունից մինչև ծնողներիս ամենօրյա քրտնաջան աշխատանքը… մտածում եմ իմ բոլոր նպատակների իրականացման համար անհրաժեշտ միջոցներից մինչև ձախ ականջիս չորսօրյա ցավի մասին (երևի ջուր է լցվել): Թվում է, թե սովորական մտքեր են, մտահոգություններ, ծրագրեր ու նպատակներ, ամենօրյա անելիքներ, որոնցով լի է յուրաքանչյուր մարդու ուղեղը: Այդ մտքերին առանձնապես կարևորություն չես էլ տա, որ ասենք, նստես ու գրես դրանց մասին: Սակայն անքնությունը առօրեական այդ մտքերին առանձնահատուկ հմայք է հաղորդում, և այդ է պատճառը, որ մի յուրօրինակ գրավ-

չություն ես փորձում գտնել այն մտքերի մեջ, որոնց ուրիշ ժամանակ կվերաբերվեիր շատ սովորական կերպով: Միգուցե անքնության պատճառով մարդ շատ ավելի զգայուն է դառնում: Հասկանում ես, որ արտաքուստ իրարից շատ տարբեր այդ մտքերը սերտորեն կապված են և հաճախ, ցավոք, դրանց միավորում է մեկ ընդհանուր բան՝ փողը, երբեմն էլ՝ փողի պակասը: Ա՛խ, այդ փողը: Հայ ժողովրդի մեջ վերջերս մի բան եմ նկատել: Մեզանից շատերը դառնում են կամ արդեն դարձել են լրիվ փողապաշտ, նյութապաշտ: Հոգևորը մի կողմ են թողել: Ուշադիր որ լինես, ապա կնկատես, որ հիմա արդեն մաղթանքներում էլ հաճախ կարելի է լսել, օրինակ, «Քեզ ցանկանում եմ լիքը փող», կամ «Թող այնքան փող ունենաս, որ քո նպատակներին հասնես» նախադասությունները: Եվ ահա այդ «այնքան փող ունենաս»-ին հասնելու համար շատերը, ցավոք, ծախում են մարմինը, իսկ ավելի սարսափելին էլ այն է, որ ծախում են նաև հոգին: Ես միշտ ասել եմ, որ եթե փողը դառնում է նպատակ, ապա մարդը կործանվում է: Փողը պետք է լինի միջոց՝ նպատակին հասնելու համար: Մեզանից շատերի համար փող դիզելը դարձել է կենսակերպ: Փող դիզեն, դիզե՛ն, հավաքե՛ն, ունենա՛ն, շա՛տ ունենան, հետո՝ ավելի՛ շատ ունենան: Իսկ աղքատներն էլ սկսել են փողի ձգտել ու պաշտել փողը՝ գոյությունը պահպանելու, ընտանիքին, երեխաներին կերակրելու, ուսման տալու համար: Փողամոլությունը անտանելի է ու շատ վտանգավոր: Զարհուրելին այն է, որ փողամոլությունը հետզհետե ավելի լայն տարածում է գտնում: Վատ կյանքից է, լավ օրից չէ: Այնպիսի ժամանակներում ենք ապրում, որ շատ-շատերի համար ամեն ինչից վեր, ամեն ինչից կարևոր է փողը: Աշխատա-

սիրությունը, շնորհքը, տաղանդը, կուլտուրան, կրթությունը հետին պլանում են: Այդպես չպետք է լինի: Կրթության, գիտելիքի նկատմամբ հիմա նորից պատշաճ վերաբերմունք կա, սակայն հասարակության գիտակցությունը պետք է զգալիորեն փոխվի: Մատաղ սերնդի շրջանում ժամանակին օրինակ, «էտալոն» դարձած «ապերոյին», ուսևորին, շքեղ մեքենա ու բջջային ունեցողին, օլիգարխին փոխարինելու է գալիս համեստ, բարի, պարկեշտ, կիրթ, գրագետ, քաղաքավարի, ինտելիգենտ, տաղանդավոր ու աշխատասեր մարդու կերպարը, որը փողը վաստակում է իր արդար քրտինքով, որը աննպատակ ու անօգուտ չի վատնում կյանքը, այլ ապրում է ի նպաստ իր երկրի, ժողովրդի, հայրենիքի, որը բարձր է պահում իր երկրի պատիվը: Գալիս է այն ժամանակը, երբ փողն ու բիրտ իշխանությունը հետին պլան են մղվում, խելքը, գիտելիքը, տաղանդը, ունակությունները, աշխատասիրությունը առաջին պլանում են, ու միայն դրանցով մարդը կարող է իր ճանապարհը հարթել: Շնորհքով, բարեկիրթ ու աշխատասեր մարդը, տաղանդավոր անձնավորությունը պետք է միշտ իմանա, որ «տաշած քարը գետնին չի մնա»: Այդպիսի մարդը պետք է համոզված լինի, որ իր տաղանդը մի օր երևալու է, աշխատանքում ունեցած իր ջիղն ու եռանդը, ստեղծագործական իր ձիրքը միշտ ու անպայման առանձնացնելու են իրեն անբաններից ու ծույլերից, հանելու են վեր, նա վայելելու է հարգանք ու գնահատանք, ունենալու է հաջողություններ ու ապրելու է արժանապատիվ ու բարեկեցիկ կյանքով: «Բարեկիրթ», «քաղաքավարի», «բարեշնորհ», «տաղանդավոր» – ինչոր տարօրինակ բառեր եմ չէ՞ ասում: Հիմա կասեք՝ էս դարում ի՞նչ տաղանդ, ի՞նչ շնորհք, ի՞նչ քաղաքավարութ-

յուն, բարեշնորհություն. եղունգ ունես, գլուխդ քորի ու զոռ-բայությամբ, բիրտ ուժի գործադրմամբ քոնը առաջ տար, սաղի հերն էլ անիծած: Այո, ցավոք, այսօր «Տաշած քարը գետնին չի մնա» ժողովրդական խոսքը հաճախ բախվում է հայկական իրականությանը, երբ տաշած քար չէ, ուզում ես՝ խաչքար եղիր, մեկ է, եթե ծանոթ կամ փող չունեցար, ապա առաջ չես գնա կամ կգնաս, սակայն մեծ դժվարությամբ: Բայց, միևնույն է, դա լիովին այդպես չէ, չի կարելի տուրք տալ այդ մոտեցմանը ու ընկճվել, հուսահատվել, թե ամեն ինչ կորած է: Ես խղճում եմ հարուստ, սակայն հոգով աղքատ մարդկանց: Այ, հիմա լիովին հասկանում եմ Հեմինգուեյին: Փողն է պատճառը, որ շատերը կորցնում կամ կորցրել են արդեն խիղճը, հոգևորը, բարոյականը, բարին, լավը, ճիշտը: Հանուն փողի մարդիկ փոխում են կյանքը, ընտանիքը, հայրենիքը, դեմքը, էությունը, երբեմն անգամ՝ սեռական կողմնորոշումը: Ո՞ւր ենք գլորվում:

Երբ տուն եմ գալիս աշխատանքից, առաջին բանը որ անում եմ՝ դրամապանակը գրպանիցս հանելն ու սեղանին շպրտելն է: Չեմ սիրում, որ դրամապանակը մոտս է մնում: Զզվում եմ փողից հենց թեկուզ նրա համար, որ ժամը 5 անց 10 րոպե է արդեն, իսկ ես անքուն նստել ու մի ամբողջ մենախոսություն նվիրել եմ դրան: Գիտեմ, որ փողով շատ բաների կարելի է հասնել, գիտեմ, որ առանց փողի ապրել չի կարելի, ընդունում եմ, այո, սակայն մի դարձրեք փողը նպատակ, թող այն լինի միայն միջոց նպատակին հասնելու համար: Եվ, որ ամենակարևորն է, լավ նպատակի: Երբեք չեմ համարել, որ պետք է ապրել, որպեսզի փող վաստակես: Միշտ համոզված եմ եղել, որ պետք է փող վաստակես, որ ապրես:

Ճռիկը շարունակում է ճռռալ: Հետաքրքիր է. վաղը եթե ծառաշատ այն կանաչը, որի թավ ծածկույթի մեջ նա հիմա ճռռում է, վաճառեն և տեղը մի «օբյեկտ» կառուցեն, ապա նա ինչպե՞ս կճռռա: Հաստատ ոչ այնպես անհոգ, ինչպես այժմ: Սակայն մի՞թե վերջն է, մի՞թե ամեն բան կործանված է, մի՞թե ամեն ինչ կյանքում հետայսու որոշելու է միայն փողը: Ո՜չ, այդպես չի՛ լինի, չի՛ կարելի թույլ տալ… Ինչո՞ւ: Հենց թեկուզ նրա համար, որ արդեն ժամը 5 անց 20 րոպե է և այդ ամբողջ ընթացքում դրսում, մթության մեջ անվերջ, միալար ու քաղցրալուր ճռռացող ճռիկը չէր ճռռում փողով, հանուն փողի կամ էլ ինչ-որ մեկի պատվերով: Դա կաշառված ճռիկ չէ: Նա ծախված չէ ու ճռռո՜ւմ է, որովհետև ճռռո՜ւմ է: Նա ճռռում է հենց այնպես, ուղղակի կամ էլ բնազդային ինչ-որ մղումով, ասենք՝ զույգի ուշադրությունը գրավելու համար: Ավելի ռոմանտիկ ճռիկները ճռռում են գիշերվա խաղաղությունը իրենց անուշ ճռռոցով հարստացնելու նպատակով: Այսօր շատերը կան, որոնք «ճռռում են» ու իրենց ուսերին կրում են կյանքի բեռն ու փիլիսոփայությունը, մտորելու ծանր լուծը: Նրանք էլ մեր կյանքի «ճռիկներն» են: Սակայն որքան հրաշալի է կյանքը, որ դեռ կան այդ մարդիկ, կան այդ «ճռիկները», մարդիկ, որոնք իրենց լուսեղեն էությամբ ու հարուստ բովանդակությամբ լցնում են կյանքը, հարստացնում այն ու արժեքավորում: Ու թեև այդպիսի մարդիկ հաճախ իրենք ճռռում են, որ ապրեն, սակայն իրենց այդ ճռռոցով ապրեցնում են շատերին ու լույս սփռում նրանց հոգիներին:

…Իսկ ճռիկը շարունակում է ճռռալ ու ճռռում է աշխարհի ամենամաքուր, անմեղ ու անկաշառ ձայնով»:

Այս ստեղծագործությունը գրել եմ 2004 թվականին: Բոլոր այս մտահոգությունները ես այն ժամանակ հանձնեցի թղթին, սակայն առաջին անգամ հրապարակեցի, փաստորեն, տարիներ անց: Հետևություններն այն մասին, թե իմ այս մտորումներից տարիներ անց ի՞նչն է փոխվել, թողնում եմ ձեզ: Կանցնի էլի ժամանակ, և կգա այն օրը, երբ ճռիկի ձայնը կխորհրդանշի միայն խաղաղ ու անհոգ գիշերվա հմայքը, ոչ թե նաև հոգսաշատ կյանքը: Այդ օրն անպայման կգա…

2004, 2008, 19.03.2012

ԳՈՒՆԱՎՈՐԵՆՔ ԿՅԱՆՔԸ

Աշխարհը, որտեղ մենք ապրում ենք, այն ամենը, ինչը մենք ստեղծել ենք, անհրապույր, մռայլ ու անհետաքրքիր է առանց բնության, առանց կանաչ ծառերի, բուրավետ ու գեղեցիկ ծաղիկների, թռչունների դայլայլի ու գետերի կարկաչի: Մեր ստեղծած աշխարհը հարուստ, բազմազան, գունեղ ու վառ է լինում, եթե այն գտնվում է բնության հետ ներդաշնակության մեջ, եթե այն չի զատվում բնությունից: Ճիշտ է, մենք մեր կյանքը դարձրել ենք առավել հարմարավետ, կրճատել ենք միմյանց միջև տարածությունն ու ժամանակը, մեքենայացրել ենք շատ բաներ՝ առօրյան դնելով հարահոս ընթացքի մեջ: Սակայն այդ անվերջ եռուզեռի ու մշտական վազքի մեջ մի պահ պետք է կարողանանք տեսնել ու գնահատել այն, ինչի մի մասնիկն էլ մենք ենք: Որքան էլ մեր կյանքը տեխնիկա-

պես հագեցած ու հարմարավետ է, որքան էլ քաղաքը լի է վայելքներով՝ ամենահարմարավետ, խաղաղ ու ներշնչանքով լի անկյունը մեզ համար, միևնույն է, շարունակում են մնալ մաքուր, կանաչ այգին կամ գողտրիկ պուրակը, որտեղ մի պահ կտրվում ենք կյանքի հորձանուտից, շնչում գործարանների արտազատումից զերծ մաքուր թթվածին, որտեղ մեր հոգիները խաղաղվում են ու լիցքավորվում ծառերի կանաչ սաղարթի ներքո: Այնպես որ, մի պահ կա՜նգ առնենք ու մտածենք: Ամեն անգամ բնությանը վնաս հասցնելիս պետք է գիտակցել, որ դրանով մենք ավելի գորշ ու մռայլ ենք դարձնում այն աշխարհը, որտեղ ապրում ենք, գիտակցել, որ վնասելով բնությունը՝ մենք ևս մեկ քայլ ենք անում դեպի մեր իսկ ստեղծած գեղեցիկ աշխարհի գունազրկումն ու իմաստազրկումը:

Գունավորենք մեր կյանքը. այն հաճախ ներկվում է գորշ, տխուր երանգներով: Կյանքի դժվարություններից, բողոքներից ելնելով՝ հաճախ տխրում ենք հիմնավորապես, իսկ ամենօրյա, կենցաղային մեծ ու փոքր սրտնեղություններից էլ փչանում է մեր տրամադրությունը, նյարդայնանում ենք, կորցնում տեսնելու կարողությունը՝ սկսելով միայն նայել: Հաճախ մենք կյանքը ընկալում ենք խիստ պրագմատիկ կերպով, զննում ու գնահատում միայն առօրեական հոգսերի ու մտահոգությունների դիտանկյունից: Սակայն կյանքը հաշվարկ չէ, այն տրվում է մեկ անգամ, և մենք այն ապրում ենք՝ մեր ուրույն գույնը տալով կյանքին: Որքան վառ ու ինքնատիպ է մեր գույնը, այնքան գունեղ ու հետաքրքիր է դառնում մեզ շրջապատող աշխարհը: Բոլոր դժվարությունները հաշվի առնելով հանդերձ, եթե մենք կյանքին, միևնույն է, նայենք դրական ու բարի տրամադրվածությամբ, ապա կյանքը կպատկե-

րանա մեզ ավելի հեշտ ու հետաքրքիր: Անհնար է անտեսել կամ հաշվի չառնել դժվարությունները, դրանք կան ու կլինեն, դրանք երբեմն թվում են անհաղթահարելի, սակայն, որպես կանոն՝ հաղթահարելի են: Պարզապես պետք չէ մտածել, որ կյանքը միայն դժվարությունների համախումբ է, դժվարությունների առկայությունն ընդամենը կյանքի առանձնահատկություններից մեկն է: Ավելին. կյանքը հետաքրքիր ու հարուստ է դրանում առկա դժվարությունների հաղթահարմամբ նաև: Այլապես կապրեինք անհոգի, անհետաքրքիր մի կյանք: Երբ մեզանից յուրաքանչյուրը գունավորում է իր կյանքը, լցնում այն դրական լիցքերով, զգացմունքներով, բնության գույներով, բարությամբ, ապա դրանով իսկ նա իր չափով գունավորում է նաև ամբողջ աշխարհը՝ դարձնելով այն վառ ու կենսատու գույների զվարթ հանդես: Հիմա պատկերացրեք, որ դա լինի ոչ թե մեկ հոգի կամ երկուսը, կամ էլ երեքը, այլ բոլորը, այո՜, բոլորը գունավորեն իրենց կյանքը՝ դրանով իսկ գունավորելով աշխարհը: Ահա այդ ժամանակ աշխարհը կդառնա այն բարի ու լուսավոր կեցավայրը, որտեղ մենք ծնվում ենք, ապրում, սիրում, արարում:

Ես համոզված եմ, որ դժվարությունները անցողիկ են, իսկ դրանց հաստատակամ ու հետևողական հաղթահարման ճանապարհին ի հայտ եկող ձեռքբերումները՝ մնայուն ու հավերժ: Ես հավատում եմ մարդկային հոգու ու սրտի անեզրությանը, մտածողության թռիչքի անսահմանությանն ու հարատևությանը, մարդկային ուժին ու համառությանը, նպատակասլացությանն ու ոգու արիությանը: Ես հավատում եմ մարդկային մաքուր էմոցիաներին, որոնք շարժիչ ուժ են ու խթան: Ես հավատում եմ մարդուն, որը պատասխանատուն է աշխարհի, այն աշխարհի,

որտեղ իրենից բացի բնության մեջ ապրում են բազմաթիվ այլ կենդանի արարածներ, որոնք իրենց ուրույն գույնն են բերում կյանք ու աշխարհ: Պահպանելով այդ արարածներին՝ մենք ավելի ենք զարդարում ու հարստացնում աշխարհը: Ամեն ինչ մեր ձեռքերում է, սիրելիներս, մեզանից է կախված և՛ դժվարությունների հաղթահարումը, և՛ պարտությունը պատվով ընդունելն ու նոր ջերմեռանդությամբ դեպի նորանոր հաղթանակներ մղվելը, և՛ անհրապույր միջավայրը ավելի գունագեղ դարձնելը: Սիրենք ու գնահատենք կյանքը և այն մեզ կփոխադարձի իր գույների ամբողջ ներկապնակով, իր բազմերանգ գունագեղությամբ: Միշտ սիրահարված մնանք կյանքին, մեր սիրելիներին, բնությանը, աշխարհին:

02.04.2016

ԳԱՐՈՒՆ, ՈՐԸ ՄԻՇՏ ՔԵԶ ՀԵՏ Է

Նրանք գեղեցկացնում են մեր կյանքը, նրանք Ամենաբարձրյալի և բնության արարչագործության պսակն են, արարման կատարյալ արդյունքը, առանց նրանց քնքշանքի ու հմայքի անհնար է կյանքը: Ավելին. կյանքը առհասարակ անհնար է առանց նրանց, քանի որ հենց նրանք են մեզ կյանք պարգևում, նրանց շնորհիվ լույս աշխարհ ենք գալիս, հանուն նրանց սիրո ու հիացմունքի ենք ապրում, արարում, պայքարում, պատերազմում ու մրցակցում միմյանց հետ, հանուն նրանց պատվի ու պաշտպանության կռվում ու մարտնչում ենք, հանուն

նրանց էլ՝ մեռնում: Առանց նրանց գարնանային ու թեթև, զեփյուռի պես մեղմ ու անուշ գոյության կյանքը կլիներ անհիրապույր մի «զբաղմունք», ավելի ճիշտ՝ կյանք ընդհանրապես չէր լինի:

Կարծում եմ, որ յուրաքանչյուր տղամարդ հասկացավ, որ խոսքը, իհարկե, կանանց մասին է, այն արարածների, որոնք մեզ ապրեցնում են, հիացնում, գերում, հմայում, որոնց սիրում ենք ու պաշտում, տենչում ու ցանկանում, որոնք մեր կողակիցն ու ուղեկիցն են ամբողջ կյանքում: Ինչպե՞ս կարելի է չսիրել ու չհմայվել աղջիկներով ու կանանցով, մեր՝ տղամարդկանց կյանքում նրանց անկրկնելի բույրով, մեծագույն կարևորությամբ, բացառիկ ու գերագույն դերակատարմամբ: Միշտ ասել եմ, որ կինն է ամենակատարյալ արարածը, այն արարածը, որը անգերազանցելի է իր հմայքով ու նազանքով:

Մեզանից յուրաքանչյուրի կյանքում միշտ լինում է կին կամ լինում են կանայք, որոնք մեզ պարգևում են անհուն սեր, անսպառ էներգիա, որոնք մեզ վեհացնում են ու սիրում անմնացորդ: Պետք է սիրենք, փայփայենք մեր կանանց, պաշտպանենք նրանց, նվիրվենք լիովին և ուշադիր լինենք նրանց նկատմամբ, գնահատենք և հաշվի առնենք նրանց կարծիքը, վեհացնենք նրանց, պաշտենք ու մեծարենք, հավատարիմ լինենք: Կինը խորհրդավոր, անկրկնելի և չքնաղ էակ է, ու եթե նա զգում է, որ իսկապես սիրված է, եթե նա զգում է, որ իր միակ տղամարդը իրեն սիրում է անկեղծ ու անմնացորդ, նվիրված սիրով, եթե նա զգում է, որ տղամարդը մշտապես ջանում է պահպանել նրան ու ապահովել նրա երջանիկ կյանքը, ապա կինը անսահման նվիրվում է իր սիրելի տղամարդուն՝ սիրելով նրան անմնացորդ: Սիրենք մեր կյանքի

կանանց շունչը կտրվելու չափ, գուրգուրենք նրանց ու վայելենք նրանց անգնահատելի ու անպայման գոյությունը մեր կյանքում: Միայն նրանց գոյությամբ է կյանքը գեղեցիկ ու լի, ներդաշնակ ու հարուստ, սիրառատ ու թանկ: Յուրաքանչյուր տղամարդու կյանքում հայտնվում է մի կին, որը նրան ջերմացնում է ձմռան եղանակին ամպերից դուրս եկած արևի տաք ու սպասված շողերի պես և վեհացնում՝ հասցնելով երկինք: Այդպիսի կինը կենսատու է, նա գարուն է, նա գեղեցիկ է, ինչպես ձմռան սավանի տակից իր թերթիկները բացած քնքուշ ձնծաղիկը և սիրելի ու երանելի է, ինչպես երկար անապատից հետո գտնված անեզր օվկիանոսի թարմությունն ու փրփրուն ալիքները: Յուրաքանչյուրիս կյանքում կա այդ ձնծաղիկ կինը:

Կանացի ձայնը, նազանքը, ժպիտը, կանացի մարմինը, բույրը, քայլվածքը, շարժուձևը մոգական ազդեցություն ունեն մեր՝ տղամարդկանց վրա ու պարգևում են մեզ կյանք, էներգիա, ուժ և ինքնավստահություն: Տղամարդուն սիրահարված ու սիրող կինը իր ամբողջ քնքշությունը, սերը, ջերմությունը, իր ամբողջ նազանքը, անուշ ժպիտը, բույրը պարգևում է իր միակին: Տղամարդու համար երջանկություն է կյանքում ունենալ այդպիսի կին, երջանկություն է սիրվել քեզ մինչև վերջին բջիջը սիրող կնոջ կողմից, երջանկություն է զգալ նրա անսահման, անձնազոհ հավատարմությունը, նվիրվածությունը, կիրքը, շնչահեղձության աստիճանի հասնող սերը քո նկատմամբ: Երջանկություն է վեհանալ քեզ այդպես սիրող կնոջ զգացմունքից: Այդպիսի սիրող կնոջ հետ հաղթահարելի է ամեն բան. կյանքի բոլոր դժվարությունները, բոլոր սրտնեղությունները: Այդպիսի կնոջ հետ ընտանիք կազմելը գերագույն ու վերընծա երջանկություն է: Այդպիսի կնոջ

հետ համատեղ կյանքը, նրան սիրելն ու սրտով ու հոգով նվիրվելը, նրանից երեխաներ ունենալը, նրա հետ թոռնիկների ծնունդը տեսնելը, նրա հետ խոր ծերության հասնելը կատարյալ երջանկություն է:

Կյանքն անհրապույր ու անհետաքրքիր կլիներ, եթե չլինեին նրանք՝ կանայք: Այնպես որ մենք՝ տղամարդիկ, կյանքը արժեքավորենք ոչ միայն մեր ձեռքբերումներով ու հաջողություններով, հաղթանակներով ու հավակնոտ ծրագրերի իրականացումից ստացված բերկրանքով, այլև ամենակարևորը՝ մեզ սեր ու քնքշանք պարգևող կանանց կողմից այդ ամենի գնահատմամբ ու մեծարմամբ, այն կանանց կողմից, որոնց շնորհիվ ամեն տարի մենք գրանցում ենք մեր նոր ձեռքբերումներն ու հաջողությունները: Ինչո՞ւ նրանց շնորհիվ: Քանի որ մեր՝ տղամարդկանց բոլոր ջանքերը, ձեռքբերումներն ու հաջողություններն ունեն մի նպատակ՝ մեզանից յուրաքանչյուրի կյանքում ապրող կնոջ գնահատանքին, սիրուն, ուշադրությանն ու հիացմունքին արժանանալը: Միայն այդ դեպքում է տղամարդն իրեն զգում լիարժեք, զգում առնական, միայն կնոջ կողմից հիացմունքի արժանանալու դեպքում է տղամարդը թևեր առնում, ոգևորվում, լցվում էներգիայով ու նետվում առաջ՝ փորձելով գրավել նոր հորիզոններ և գրանցել նոր ձեռքբերումներ ու հաջողություններ: Կինը գարուն է, որը միշտ քեզ հետ է:

31.12.2011

ՊԼԱՍՏԻԼԻՆԵ ԱՇԽԱՐՀԻ ԲԱՐԻ «ՏԻՐԱԿԱԼԸ»

Ասել, թե նա շփվող չէր, չի կարելի, քանի որ պետք եղած ժամանակ լավ էլ շփվում էր: Սակայն մի ինչ-որ խորհրդավոր ու մեկուսացնող բան կար նրա մեջ, որը աներևույթ պատնեշ էր ստեղծում իր ու շրջապատողների, հատկապես՝ գործընկերների միջև: Իսկ աշխատում էր նա պետական հիմնարկում: Հիմա այդ արտահայտությունը երբեմն հնացել է նույնքան, որքան վերաբերմունքը այդ-օրինակ հիմնարկների նկատմամբ, սակայն և՛ հիմնարկը դեռ կար, և՛ աշխատողներ ուներ, և՛ մեր հերոսն էլ այնտեղ ոչ վերջին տեղն էր զբաղեցնում: Մի բան ակնհայտ էր. ունենալով այդպիսի դիրք ու պաշտոն, նա պիտի որ շատ ավելի ուրախ լիներ, սակայն միշտ մի անհասկանալի տխրություն կար նրա աչքերում, որ զգացվում էր ամեն անգամ, երբ նա իր խորունկ հայացքն ուղղում էր գործ-ընկերներին: Նրանք, կարծես, ընկղմվում էին նրա վշտի մեջ: Գործընկերների շրջանում նա խաղաղ ու ժողովրդա-կան լեզվով ասած «անշառ» մարդու համբավ ուներ, ա-ռանձնապես թշնամիներ չուներ: Ինչու եմ ասում ա-ռանձնապես, քանի որ միշտ էլ գտնվում է մեկը, ով, չգիտես ինչու, քեզ չի սիրում, ավելին՝ այդ չսիրելը այնքան խորքային է լինում, որ խանգարում է հենց իրեն: Չէ՛, մեր հերոսը այդպիսի թշնամիներ չուներ, թեպետ եթե ունենար, ապա երևի դա կօգներ իրեն պայքարի մեջ մտնելու, իսկ յուրաքանչյուր պայքար, ինչպես հայտնի է, ուղեկցվում է ահռելի էներգիայի ու ուժերի ծախսումով, ինչը շատ անհրաժեշտ էր նրան: Բայց, «ցավոք», ո՛չ թշնամիներ կային, ո՛չ էլ առանձնապես աչքի ընկնող ու կուտակված

էներգիա և ուժ, որոնք պետք լիներ սպառել: Հիմա կմտածեք, որ լավ, եթե հերոսն այդքան, կարելի է ասել, անհրապույր ու անհետաքրքիր էր (չհաշված իր խորհրդավոր տխրությունը, որից կարելի է պատմության զարգացում «ստեղծել»), ապա ի՞նչն էր նրա նկատմամբ այդ հետաքրքրության, խոստովանենք՝ նաև հեղինակի հիացմունքի պատճառը:

Բանն այն է, որ մեր հերոսը խեցեգործ էր, այո՛, այո՛ իր առաջին մասնագիտությամբ նա խեցեգործ էր, կյանքի բերումով՝ հիմնարկի բաժնի պետ, սակայն հոգու խորքում «խեցեգործում» էր ամենքին ու ամեն ինչ: Դա էլ հենց հմայել էր հեղինակին. մարդ, որն արտաքինից թվում էր սովորական, սակայն հոգու խորքում արվեստագետ է, ռոմանտիկ: Զարմանալի է, սակայն իր ամենօրյա «պորտֆելի» մեջ նա ամեն օր թաքուն բերում էր մի փոքր կտոր պլաստիլին (կավ բերել հնարավոր չէր ու հարմար էլ չէր հիմնարկում աշխատելը, և հետո արած աշխատանքը տուն տանելը նույնպես հարմար չէր) և օրվա ընթացքում հասցնում «քանդակել» ինչ-որ բան, հետո խնամքով դնում էր այն իր դարակի մեջ, որպեսզի ոչ մեկը չտեսնի: Պարզապես չէր ուզում, որ իմանային իր նախասիրության մասին: Նա բոլորից աննկատ հանում էր իր պլաստիլինը և սկսում ինչ-որ բան «արարել»: Ամեն անգամ նոր ու հետաքրքիր «արձանիկ» էր ստացվում, որին, իհարկե, պետք էր լինում հետևել, որ չծռվի, չփչանա: Կային աշխատանքներ, որոնք նա մի կերպ տուն էր տանում, կային և այնպիսիք, որոնք մի որոշ ժամանակ մնում էին մեր համեստ ու տխուր պետական աշխատողի, իսկ հոգու խորքում՝ արվեստագետի աշխատասենյակում:

Աշխատանքի ժամանակ մարդիկ տարբեր կերպ են իրենց պահում: Մեկն աշխատանքի ժամանակ երաժշտություն է լսում, մյուսը բամբասում է գործընկերների հետ, երրորդը ինչքան կարող է՝ հաց է ուտում, հետո էլ հացը վերջանում է, ու նա սկսում է եղունգները ուտել, չորրորդը սիրում է սուրճ խմել ու «սրճահարել» իր ստամոքսը, հինգերորդը քնում է (այդպես էլ է լինում, ուտելուց ու սուրճից ավելի գերադասում է «փափուկ» աշխատասեղանը, որին թիկնում է ինչպես հոգնած ու տանջված բևեռային սպիտակ արջը արևի կիզիչ ճառագայթների տակ), վեցերորդը մի գլուխ զանգում է, այնքան է զանգում, որ արդեն չի էլ հիշում, թե ում էր զանգել ու ինչի համար, յոթերորդը օգտվում է ինտերնետ ունենալու հնարավորությունից ու քաշո՜ւմ է ու քաշո՜ւմ (իսկ հիմնարկը քաշվո՜ւմ է ու քաշվո՜ւմ), ութերորդը գոհ թիկնում է իր աթոռին ու ինքնաբավ, հիացած նայում է իր շուրջը՝ մտքում ասելով. ի՜նչ լավն եմ ես, ի՜նչ արժանի եմ ես, ի՜նչ գեղեցիկ ու գրավիչ եմ ես, իններորդն էլ ուղղակի թաքուն հանում է պլաստիլինն ու կերտում ինչ-որ բան: Ավելին. հաճախ մեր հերոսը «քանդակում» էր սենյակ մտած մարդկանց: Հեղինակը դրանում համոզվեց, երբ հանդիպման էր գնացել այդ մարդու հետ: Գործի բերումով նրանց ճանապարհները խաչվել էին երկաթբետոնե այս հսկա քաղաքում: Հեղինակը որպես պատվիրատու այցելել էր հիմնարկ, նրան ուղեկցել էին մեր հերոսի աշխատասենյակ: Նրանք հանդիպել էին, զրուցել, պայմանավորվել գործարքի վերաբերյալ, և երբ հեղինակը սենյակից դուրս գալիս զգացել էր, թե ինչպես հերոսը կամաց ձեռքը տարել էր դարակի մեջ ու հանել պլաստիլինի կտոր: «Տեսնես,

ի՞նչ էր անում», – մտածել էր հեղինակը՝ իջնելով պետական հիմնարկի նույնքան «պետական» աստիճաններով:

Ինչևէ, չկենտրոնանանք հեղինակի վրա, քանի որ մեր հերոսը սենյակում է ու կերտում է իր հերթական քանդակը: Ասեմ, որ այդ քանդակները նրա համար թանկ ու հարազատ էին, ամեն մի գործ նրա համար ուներ երևի թե գլուխգործոցի արժեք, թեև անկեղծորեն ասեմ, որ հեռու էր գլուխգործոց համարվելու պատվից: Ինչևէ, նա համառորեն, խնամքով, մատների արդեն վարժ շարժումներով տրորո՛ւմ ու տրորո՛ւմ էր պլաստիլինի հերթական «խեղճ» կտորը, ու ստացվում էր նոր արձանիկ:

Մենք կարող էինք թողնել մեր հերոսին անգամ այս պահին՝ որոշելով, որ նրա հավաքական կերպարն արդեն պարզ է ընթերցողին. նա տաղտկալի հիմնարկի երևի թե միակ արվեստագետն էր, որը թաքցնում էր իր իրական էությունը, թաքուն զբաղվում էր իր սիրելի գործով՝ քանդակով, և ամեն օր գալիս էր գործի ու նույնպիսի «ժրաջանությամբ» էլ գնում տուն:

Սակայն այստեղ էլ կա մի հանգամանք, որի վրա կցանկանայի սևեռել ձեր ուշադրությունը: Ավելին. սա թերևս մեր պատմության ամենաուշագրավ ու հետաքրքիր մասն է, մեր առանձնահատուկ հերոսի պատմության երևի թե ամենաառանձնահատուկ և անչափ տխուր պահը: Բանն այն է, որ նա այդ օրը մահանալու էր: Աշխատանքային օրվա ավարտին դուրս էր գալու իր աշխատասենյակից, հասնելու էր մայթեզր ու փողոցն անցնելիս ընկնելու էր մեքենայի տակ՝ իր հետ տանելով այն գաղտնիքը, որ թաքցնում էր տարիներ շարունակ:

Աշխատանքային օրն ավարտվեց, նա դանդաղ, կարծես կանխազգալով վերահաս ողբերգությունը, ձեռքը

վերցրեց իր պայուսակը, որի մեջ օրվա ընթացքում պատրաստած միակ արձանիկն էր և դուրս եկավ: Նրա հոգում ուրախություն էր, քանի որ այդ օրն էլ իզուր չէր անցել, այդ օրն էլ արժեքավորվել էր մի նոր «քանդակով»: 72-ամյա ծերունու հոգում այդպիսի վառ ու շատերի համար նախանձելի ռոմանտիկա կար, լիրիկա, գարուն, նա երիտասարդի ավյունով թաքուն կերտում էր իր պլաստիլինե հերոսներին, կերտում ու փորձում այդ կերպ արտացոլել աշխարհը, այն աշխարհը, որը դրսում էր ու իր սենյակի՝ արտաքինից անհրապույր, սակայն շատ բան տեսած ու թաքցնող պատերի ներսում, պլաստիլինե այն աշխարհը, որի տերն ու տիրակալը ինքն էր, այն աշխարհը, որտեղ նա երջանիկ էր, երջանկության ու երանության պատառիկ, որը փայփայում էր հոգու խորքում:

Մեքենայի հարվածից ծերունին տեղում մահացավ, սլացող մեքենան այնպես էր հարվածել, որ նա անգամ չհասցրեց հասկանալ, թե ինչ կատարվեց, ուժեղ հարվա՛ծ, ու վայրկյաններ անց խեցեգործի, կարելի է ասել՝ քանդակագործի ծերացած, սակայն ամեն անգամ երիտասարդի ուժով գեղեցիկը տեսնող ու պատկերող հոգին հեռացավ այս երկաթբետոնե քաղաքից: Նրա համար հերթական օր, որը, սակայն, ավարտվեց ողբերգությամբ:

Հաջորդ օրը, երբ հիմնարկի տնօրինության հանձնարարությամբ աշխատակիցները մտան ծերունու սենյակը, որպեսզի հավաքեն նրա իրերը, քար կտրեցին, երբ նրա դարակում տեսան բազմաթիվ ու բազմազան պլաստիլինե արձանիկներ. մեկը կատու էր, մյուսը՝ մեքենա, երրորդը՝ գիրք, չորրորդը՝ հիմնարկի առաջին հարկում նստող հաշվապահի ծաղրաքանդակը, հինգերորդը՝ տնօրենը՝ իր մեծ ու կլոր ականջներով, հետո՝ ծաղիկ,

սուրճի բաժակ, կողքի սենյակի շատախոս քարտուղարուհին, ժամացույց, ձի և այլն, և այլն: Պատկերացնո՞ւմ եք աշխատակիցների զարմանքը. ուրեմն այդքան ժամանակ նրանց կողքին, նրանց հետ միասին աշխատել էր մի նրբազգաց, գեղեցիկը գնահատող, բարի ու տաղանդավոր մարդ, որին նրանք ճանաչում էին միայն որպես համեստ, քչախոս ու խորհրդավոր աշխատակցի: Ահա նրա խորհրդավորության ու տխրության գաղտնիքը, նա սիրում էր կյանքը ու փորձում էր պատկերել այն յուրովի, անում էր դա, քանի որ չանել չէր կարող, քանի որ խեցեգործի հոգին ավելի զորեղ էր, քան պետական հիմնարկի աշխատակցի հոգին: Մի՛ ակնթարթ, և նա հեռացավ՝ իր հետ տանելով իր բոլոր հույզերը, աշխարհը, հիմնարկը, գործընկերներին՝ իրերն ու հանգամանքները յուրովի պատկերող քանդակները թողնելով դարակում: Դրանք մեկիկ-մեկիկ հանվեցին, շարվեցին սեղանին, և մի պահ տպավորություն ստեղծվեց, թե սեղանին է մեր հերոսի խորն ու բարի հոգին: Արձանիկները խոսուն վկաներն էին ծերունու տաղանդի ու թաքուն նախասիրության:

Որքան տարբեր են մարդիկ, որքան տարբեր նախասիրություններ ունեն: Մեկն իր հոգու գաղտնարաններն ու հույզերը արտացոլում է պլաստիլինե քանդակներով, մյուսը չբավարարված հույզերի ու իղձերի արտացոլումը գտնում է ավերելով, չարություն ու դառնություն տարածելով: Երանի թե յուրաքանչյուր մարդ իր կյանքում, իր փոքրիկ ներքին աշխարհում լինի ոչ թե դաժան ու կոպիտ, բիրտ ու բարեկրթությունից հեռու մի բռնակալ, այլ բարի ու սիրված «տիրակալ», թեկուզ՝ պլաստիլինե աշխարհի:

07.07.2009

ԵՐԳԻ ԹՈՎԻՉ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔՈ

Աշնան մելամաղձոտ տրամադրությունը ստիպում էր խորհել այնպիսի բաների մասին, որոնց վրա երբեմն ուշադրություն չես դարձնում:

Բոլոր տարիներին աշունը մեր քաղաքում առանձնահատուկ գեղեցիկ է, ու դա երևի նրանից է, որ քաղաքն էլ է շատ գեղեցիկ: Իսկապես, աշնանը մեր սիրելի քաղաքը շատ առանձնահատուկ է: Ինչպե՞ս եմ սիրում Երևանը, ինչպես եմ սիրում նոյեմբերյան Երևանը: Նոյեմբերի երկրորդ կեսին աշունը Երևանում ուղղակի գերում է իր գեղեցկությամբ, իր գույների առատությամբ, լիքը ու բազմագույն տերևներով, ջինջ, լազուր երկնքով: Եղանակը մե՛րթ տաք է, մե՛րթ ցուրտ: Քայլում ես, ու տերևները խշշում են ոտքերիդ տակ: Երբեմն մեղմ քամի է փչում՝ տերևները քշելով այս ու այն կողմ, կամ էլ դրանք վեր հանելով: Յուրաքանչյուր ծառ իրեն հատուկ աշնանային գույն է ստանում՝ բարդին դառնում է դեղնավուն, կաղնու տերևները՝ հողագույն, բաց կամ մուգ շագանակագույն, բալենու տերևները՝ դեղնակարմրավունից մինչև մուգ գորշ կարմրավուն: Աշնանը, խոնավ ու տաք եղանակին երևանյան օդն անչափ հաճելի ու փափուկ է, անչափ դուրեկան: Մի արտասովոր բույր ունի օդը՝ մեղմ ու տաք, տերևային խոնավության բույր: Երեկոյան այդ բույրը առանձնատների վառարանների, չորացած ու գետնին թափված կամ մայթերին վառվող տերևների, հողի, մեքենաների ծխի, անձրևի, փողոցի ջրափոսերի հոտերի միախառնումն է: Հոգիս շոյող այդ բույրը գերում է ինձ: Մի քայլ անգամ չեմ ուզում անել իմ հարազատ քաղաքից, որովհետև ինձ թվում է՝ կկտրվեմ այդ բույրից,

քամուց բարձրացրած փոշուց, մայթերը լուսավորող դեղնավուն լույսերից, ծուռ ու մուռ սալաքարերից, լայն փողոցներից, նեղլիկ մայթերից և այդ բույրի՜ց: Աստված իմ, ո՜նց եմ սիրում նոյեմբերյան Երևանի բույրը: Իսկ արև՜ը, ի՜նչ հաճելի ու տաք է արևը նոյեմբերին, երբ ցուրտ եղանակին արևի ամեն մի շող ասես մեղմիկ շոյում է քեզ:

Նոյեմբերյան մի գիշեր անձրև տեղաց, և առավոտյան արդեն աշուն էր: Բանն այն է, որ բակի, փողոցի ծառերի շատ տերևներ դեղնել էին արդեն, սակայն դեռ չէին ընկնում, և այդ պատճառով աշնան ներկայությունը կարծես չէր զգացվում: Սակայն երբ անձրև տեղաց և դեղնած տերևները ցած թափվեցին, գեղեցիկ մի տերևաթափ սկսվեց, գեղեցիկ աշուն: Մեկ անձրև՝ և ահա աշունն այնքա՜ն շոշափելի դարձավ, այնքան ակնհայտ, մոտ, տեսանելի: Գեղեցիկ է աշնանային Երևանը: Պարզապես պետք է ուշադիր աչքով նայել՝ նկատելու համար մեր հարազատ քաղաքի աշնանային էսքիզները, հասկանալու համար նրա աշնանային լեզուն, ասելիքը:

Տերևները թափվում էին, և ես ուշադիր զննում էի մեր բակի ծառերը: Բակի բետոնե ավտոտնակների ֆոնի վրա նույն բակում տերևաթափ լինող մեկ-երկու ծառեր անչափ քնքուշ էին: Եվ հասկանում ես, որ ամպամած օրերին աստիճանաբար տերևաթափ լինող ծառի պատկերն ավելի հարատև է, կասեի՝ հավերժ, քան բոլոր այդ բետոնե կառույցներն ու երեխաների խաղահրապարակների հաշվին կառուցված անճոռնի ավտոտնակները: Վերջիններս անցողիկ են, այսօր կան, վաղը՝ ոչ, իսկ այդ քնքուշ տեսարանը եղել է ու միշտ է լինելու: Պարզապես ուշադիր պետք է լինել և կնկատես, թե ինչքան խորհրդավոր, բարի, անկրկնելի տեսարաններ կան աշնանային

Երևանում: Հավաքարարը ցախավելով սրբում էր մայթը տերևներից և հավաքում կույտերով: Ցավոք, միայն տերևներ չէին, որ մաքրում էր նա: Դրանց մեջ կարելի էր տեսնել ծխախոտի տուփ, ինչ-որ մի հիմարի կողմից գետնին նետված հյութի դատարկ շիշ: Հյութը նա խմել է, իսկ դատարկ շիշը նետել է մեր Երևանի փողոցում, կարծես նետել է մեր ողջ հայրենիքի դեմքին: Կարելի է ասել, որ առանձնակի ջանք էլ չի թափել՝ նետելու համար, ուղղակի անուղեղի պես բաց է թողնում ձեռքից շիշը, ծխախոտի տուփը՝ ուր պատահի: Քամի է փչում, ու տերևների կույտը շուտով ծածկում է աղբը. կարծես բնությունն ինքն է ամաչում իր զավակի՝ մարդու փնթիության համար և փորձում է սրբել նրա թողած աղբը:

Եվ այնուամենայնիվ, այնքան լավատեսական, այնքան քնքուշ, լիրիկական է աշունը Երևանում: Օրերն ամպամած են, մի տեսակ թեթև մթություն է տիրում: Ամեն բան ասես թույլ մառախուղի քողի տակ լինի: Այդ բարի, խաղաղ ու խորհրդավոր քողի տակ են մնում և՛ ծառերը, և՛ շենքերը, և՛ մարդիկ, և՛ խանութները, և՛ ամեն տարի թեժ աշուն խոստացող քաղաքական կուսակցությունները, և՛ ֆուտբոլի խաղադաշտի ցողաթաթախ խոտը, և՛ ավտոբուսներն ու երթուղային տաքսիները: Ու այդժամ նկատում ես, թե որքան գեղեցիկ են Երևանի աշնանային այգիները, թե որքան քնքուշ ու անձեռակերտ է անձրևի ժամանակ անձրևանոցի տակ քայլող նրբակազմ ու սլացիկ աղջիկը, այդժամ է, որ հասկանում ես, թե որքան բառեր կարելի է ասել այս պահին սիրելի մարդուն, թե ինչքան հաճելի կլինի մի գեղեցիկ բացիկ գրել ու ուղարկել հեռավոր երկրում ապրող բարեկամին, զանգել մեկին, ում երկար ժամանակ չես զանգել ու հարցնել, թե ինչպես է:

Այնպես որ, աշունը Երևանում շատ անձնական եղանակ է, տարվա ժամանակահատված, երբ ամեն բան և՛ շատ ընդհանուր է, և՛, միևնույն ժամանակ, խիստ անձնական:

Քայլում էի մայթով: Բարդիների տերևները դեղնել էին, և մերթ ընդ մերթ տերևներից մեկը պոկվում և օրորվելով իջնում էր ցած: Մայթեզրին չորացած տերևների կույտերը կրակ էին արել ու այրել, ծուխը լցվել էր փողոցով մեկ: Այնքան հաճելի է այրվող տերևների ծխի բույրը: Ծուխը մի տեսակ թանձրություն էր հաղորդել աշնանային այդ պատկերին՝ այն դարձնելով ավելի խորը, նստվածքային:

Մեկ ուրիշ դրվագ հիշեցի, աշնանային մեկ ուրիշ զբոսանք: 2002-ից տեղափոխվեմ 2007 թվականը: 2007-ի աշունն էր: Անգամ օրն եմ հիշում՝ հոկտեմբերի 28-ն էր: Քայլում էի Բաղրամյան փողոցով դեպի ներքև: Խոնավ ու ամպամած եղանակ էր, ու ամբողջ փողոցով տարածվել էր ծառերի անուշ բույրը: Խենթի պես սիրում եմ աշնանային տերևների բույրը: Խորը շունչ էի քաշում՝ բավականություն ստանալով այդ բույրից, որը ասես աշնանային օծանելիք լինի: Մի օծանելիք, որը բնությունը պատրաստում ու նվիրում է քեզ: Տերևները դասավորվում են մայթին, իջնում ու իրենց տեղը զբաղեցնում գետնի ընդհանուր պատկերի մեջ:

Աշնանը ծառերի բույրն ասես հոգիդ է շոյում: Ոչ մի ուրիշ եղանակ չի պարգևում այդպիսի բույր: Ծառերը տարբեր գույների են, բոլորն էլ խոսուն ու բոլորն էլ մի տեսակ տխուր, սակայն մի ընդհանուր ուրախություն էլ կա. նրանք հագնում են աշնան հագուստը: Ճիշտ է, վայելում են այդ հագուստը կարճ ժամանակով, սակայն որքա՜ն են գեղեցկանում: Անձրևային ամպամած եղանակը

օդում ստեղծում է մի այնպիսի բույր, որը կարելի է առնել միայն աշնանը: Եվ ահա այդ ամենը ասես մի խորհրդավոր ու հեռավոր հեքիաթից լինի, այն հեքիաթից, որը մնում է քեզ հետ ամբողջ կյանքում, մնում մանկությունից:

Օդը սառն էր մի քիչ, հաճելի կերպով շոյում էր դեմքս: Մտքումս մերթ ընդ մերթ ինչ-որ մեղեդի էր հնչում: Հետո այդ մեղեդին ավելի պարզորոշ դարձավ. մտքում սկսեցի երգել Սայմոն Վեբի (Simon Webbe) «After all this time» իմ սիրելի երգը, որը ես օրը մի քանի անգամ պատրաստ էի լսել: Մի օր որոշեցի գրել լսելիս, գրել այն ամենը, ինչ զգում էի, համակարգչով «թղթին հանձնել» այն բոլոր տպավորություններն ու ապրումները, որ զգում էի այդ երգը լսելիս: Գրում էի ու թվում էր, թե քայլում եմ Երևանի կենտրոնական փողոցներով: Ի՜նչ թեթև էի քայլում, գարնանային թեթևությամբ, ոգևորված հոգով: Երգի ռիթմը ասես սրտիս բաբախումը լիներ, ես քայլում էի ու գնում առաջ, կյանքը հրաշալի էր, մարդիկ՝ սիրելի ու լավը, աշխարհն իմն էր: Քաղաքային խենթ անցուդարձը գրավում էր ինձ, քայլում էի ու հիանում այն ամենով, ինչ տեսնում էի՝ կոկիկ, ծաղկազարդ մայթեզրեր, դեպի շենքերի բակերը տանող կամարաձև նկարազարդ անցումներ, խանութների ցուցափեղկեր, գովազդային վահանակներ և այլն: Մտորումներ, ներքին խինդ, ոգևորություն, մի տեսակ աննկատ ժպիտ, աչքերիս մեջ՝ խորհրդավոր փայլ: Զմայլվում էի քնքուշ ու թեթևասահ աղջիկներով, վայելում նրանց անուշ հայացքները: Մոլորակն ասես պտտվում էր ինձ համար. այդ պահին մոլորակն ասես իմն էր:

2007

«ՍՈՒԶԱՆԱՎՈՎ»՝ ՍԻՐԵԼԻ ՓՈՂՈՑՈՎ

– Եթե տաքսի չկա՝ ստիպված ենք բավարարվել տրամվայով:*

Փողոցում տրանսպորտով և, հատկապես՝ ավտոբուսով «զբոսնելն» ինձ համար մի յուրատիպ ռոմանտիկա է: Սիրում եմ նստել տրանսպորտ, որում լիքը մարդիկ կան՝ լինի ավտոբուս, թե երթուղային տաքսի, մարդատար մեծ մեքենա, թե գնացք, նավ, թե ինքնաթիռ: Ինչպես ասում էր Օստապ Բենդերը. «Օգտվենք հասարակական տրանսպորտի՛ց, Շուրա»: Ավտոբուսը մարդկանց զննելու, ուսումնասիրելու հրաշալի հնարավորություն է ընձեռում:

Նստեցի ավտոբուս ու որսացի ինձ այն մտքի վրա, որ գրեթե ամեն առավոտ ես ավտոբուս եմ նստում ու ամեն առավոտ ասես մի յուրահատուկ ճանապարհորդություն է սկսվում: Այդ ճանապարհորդության ժամանակ ինձ համար բացահայտում եմ նորն ու արտասովորը մարդկանց մեջ: Նայում եմ նրանց, մարդիկ, որ շտապում են իրենց գործին: Նրանք թվում են մտախոհ ու լուռ, սակայն նրանցից յուրաքանչյուրի մեջ մի զրույց է, նրանցից յուրաքանչյուրը մի առանձին պատմություն է:

Կես ժամ, և այդ կես ժամվա ընթացքում ասես շփվում եմ միանգամից մի քանի պատմության հետ: Աննկատ կերպով զննում եմ մարդկանց, փորձում կարդալ այն զրույցը, որը նրանք ունեն իրենց մեջ, փորձում հասկանալ այդ «պատմությունները», որոնք ամեն առավոտ շտապում են իրենց աշխատանքին:

---

* «Ոսկե հորթը» գեղարվեստական կինոնկարից («Золотой теленок»: Արտադրությունը՝ ՍՍՀՄ, 1968 թ.):

Ավտոբուսը սլանում է. նոր կանգառ ու նոր մարդիկ: Մի մասը իջնում է, մյուսները՝ բարձրանում ու թվում է, թե մի բան, արդեն՝ մի ինչ-որ հարազատ բան կտրվեց ու գնաց: Կանգառում լուսաֆորը (լուսացույցը) կամաց փոխում էր իր լույսերը, մերթ կարմիր, մերթ դեղին, մերթ կանաչ: Երբևէ ուշադիր նայե՞լ եք լուսաֆորին: Այն կարծես քաղաքի զարկերակը լինի, մարդկանց շարժման ռիթմն ազդարարող սարքը, որը առաջին հայացքից շատ սովորական է, սակայն իրականում մեծ փիլիսոփայություն ունի իր մեջ, քանի որ այն արտացոլում է քաղաքի կյանքի ընթացքը, ամեն օրվա ընթացը, դադարները, սպասումներն ու նորից ընթացքը: Ես նայում էի լուսաֆորին ու մտածում, որ մարդը ստեղծել է այդ սարքը, որ կարգավորի երթևեկությունը, և այդ սարքի միջոցով կարգավորում է ոչ միայն մեքենաների շարժը փողոցում, հետիոտների ընթացքը, այլև այդ ամենի՝ որպես մեկ ամբողջության, շարժը: Լուսաֆորը իրականում շատ մեծ դեր ունի մեր կյանքում, ավելի մեծ, քան նրան վերապահված է:

Հետո շարունակեցի նայել մե՛րթ մարդկանց, մե՛րթ պատուհանին: Այն տպավորությունն է, որ ամեն մարդ ունի իր պատուհանը: Նայում ես սլացող փողոցներին, հետիոտներին, ավտոմեքենաներին ու զգում կյանքի, աշխարհի զարկերակը, որը մի պահ ասես քոնը լինի: Նայում ես ու զգում, որ դու այդ կյանքի, այդ ժամանակի, այդ ընթացքի մի մասնիկն ես, մի տարրը, մի պատմությունը: Եվ այդժամ է, որ քո պատմությունը ձուլվում է մյուսների պատմություններին, դառնում մեկ ընդհանուր պատմություն:

Անցնում են շենքերը մեկը մյուսի հետևից, իսկ ես, մի ամբողջ խումբ «պատմությունների» հետ, շարունակում եմ սլանալ Երևանի փողոցներով: Այդպես՝ ամեն առավոտ: Ավտոբուսը մի յուրահատուկ հանգրվան է քաղաքի բնակիչների պատմությունների համար: Մեկը լավ աշխատող է, մյուսը ուշանում է գործից, երրորդը աշակերտ է ու մտածում է, թե այսօր ինչպե՞ս պիտի պատասխանի դասը, չորրորդը ուշադիր նայում է իր դիմաց նստած գեղեցիկ աղջկան, հինգերորդը տարեց մի պապիկ է, որը կյանքի մայրամուտին է, սակայն շտապում է իր թոռնիկների մոտ: Այո, ավտոբուսը լի է պատմություններով, նրանցից յուրաքանչյուրն էլ յուրահատուկ է ու հետաքրքիր: Ես էլ, ավտոբուսի պատուհանի մոտ նստած, մի պատմություն եմ, մի յուրահատուկ պատմություն, որ գալիս է լրացնելու ավտոբուսի լեգենդը: Եվ այսպես՝ կես ժամ: Երեսուն րոպե հետո, այդքան է տևում տանից աշխատավայր ճանապարհը, ես կիջնեմ ու կխառնվեմ կյանքի ընթացքին, այն ընթացքին, որը դրսում է, փողոցների ու հետիոտների հետ, շենքերի ստվերում ու շքամուտքերի կողքին: Որպեներ անց իմ հետևում կթողնեմ ավտոբուսը, նրա մեջ եղած մարդկանց, նրանց պատմությունները: Այսօր կանցնի օրը, կավարտվի, և վաղը առավոտյան իմ ավտոբուսը նորից ուրախ կժպտա ինձ, ուրախ կժպտան ինձ նաև նրա ուղևորները, և ես նորից կմիանամ նրանց, կնստեմ ավտոբուսի պատուհանի մոտ ու կնայեմ աշխարհին:

Սիրում եմ ավտոբուսով շրջել նաև գիշերային Երևանում, ավտոբուսի լույսերով, թույլ, դեղնավուն, քնեցնող, անուշ ու հեքիաթային լույսերով պարուրված Երևանում: Փոքր ժամանակ շատ էի սիրում, երբ ավտոբուսով կամ տրոլեյբուսով տուն էինք գալիս, խենթի պես

սիրում էի Կոմիտասի պողոտայով տրամվայով իջնելը կամ բարձրանալը... Սիրում եմ ուշ երեկոյան նստել ավտոբուս ու շրջել քաղաքով մեկ: Նայում եմ պատուհանից ու զմայլվում գիշերային Երևանով: Ասես հեքիաթում լինեմ, մանկության գրկում: Երևանյան գիշերային օդը, բույրերը, տրամադրությունը, լույսերը պարուրում են հոգիս: Ավտոբուսի թույլ, աղոտ լույսը մի տեսակ կիսաքուն վիճակ է բերում, հաճելի նանրություն, քնքուշ, բարի տրամադրություն: Սիրում եմ նայել լապտերներին, որոնք վառվում ու լուսավորում են մայթերը: Սիրում եմ մեքենաների լույսերը, որոնք ասես շարժվող լապտերներ լինեն փողոցում:

2009 թ. հոկտեմբերի 28-ին երեկոյան տուն էի վերադառնում երթուղային տաքսիով, որն իջնում էր Կոմիտասով: Երեկոյան Կոմիտասը արթնացրեց իմ մեջ մանկության հուշեր: Նայում էի մեքենաների լույսերին, փողոցին ու զմայլվում: Երթուղային տաքսին ասես մի սուզանավ լիներ ավտոմեքենաների ծովում: Ես վարորդի դիմային ապակուց նայում էի փողոցի եռուզեռին, մեքենաների ընթացքին ու թվաց, թե մի խորհրդանշական սուզանավում եմ, Բիթլների «Դեղին սուզանավում», որը լողում էր Կոմիտասով: Այդ ճռճռացող, չըխկչըխկացող երթուղային տաքսին սուզանավի նման սուզվել էր Կոմիտասի եռուզեռի մեջ, ընկղմվել մեքենաների ծովի հատակն ու առաջ էր սլանում իր «դըխկ ու շըխկով»: Այնքան հետաքրքիր էր այդ պահը. բոլորի համար այդ մեքենան պարզապես երթուղային տաքսի էր, իսկ ինձ համար՝ մանկության հուշերը տանող մի կախարդական մեքենա, սուզանավ, որով լողում էի երևանյան այն փողոցով, որտեղ այնքան սիրել եմ և սիրում եմ լինել...

2009

ՓՐԿԵՑ ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԵՎ ՍՊԱՆՎԵՑ ՔԱՌԱՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴԻ ՁԵՌՔՈՎ

Այս պատմությունը ես կարդացել եմ ռուս անվանի գրող և մեծ բնասեր Յուրի Դմիտրիևի «Մարդը և կենդանիները» գրքում, որը մինչև այսօր իմ սեղանի գրքերից մեկն է: Գրքի ռուսերեն բնօրինակը լույս է տեսել ավելի քան քառասուն տարի առաջ՝ 1973 թվականին: Գիրքը հայերեն թարգմանվել և հրատարակվել է 1981 թվականին: Բացի այն, որ այս գրքի հայերեն տարբերակը իմ հասակակիցն է, այն նաև իմ բնապահպանական հետաքրքրությունների շրջանակում մշտապես առկա անբաժան ընկերներիցս է, քանի որ բովանդակային զարմանալի ընդգրկունությամբ մինչև այսօր մնում է արդիական, հետաքրքիր, նոր: Իմ անձնական գրադարանի այս ամենասիրելի գրքերիցս մեկում ներառված վիթխարի տեղեկույթը վերաբերում է ոչ միայն կենդանիներին, այլև մարդ–բնություն փխրուն հարաբերությանը, կապին, ինչը և գրքի հարցադրման առանցքում է:

Պատմությունը, որը կներկայացնեմ, այդ գրքի բազմաթիվ հետաքրքիր ու հուզիչ պատմություններից մեկն է: Ես բավական երկար ուսումնասիրեցի դրա վերաբերյալ բազմաթիվ այլ աղբյուրներ՝ անհրաժեշտ ճշգրտումներ և հավելումներ անելու համար: Այնպես որ՝ այս նյութը, հիմքում ունենալով Դմիտրիևի գիրքը, իմ հետազոտությունն է, որն արել եմ ոչ միայն մեծ հետաքրքրությամբ ու հաճույքով, այլև պահանջկոտությամբ և պատասխանատու կերպով, որպեսզի ընթերցողին ներկայացնեմ միայն ճշգրտված տվյալներ:

Հայտնի է, որ աշխարհի շատ քաղաքներում կան հուշարձաններ, որոնք կանգնեցվել են այս կամ այն հերոս կենդանու պատվին: Այդ հուշարձանները խորհրդանշում են տվյալ կենդանու որևէ սխրանքը, պատմական իրադարձությունների (հիմնականում՝ համաշխարհային պատերազմների) թոհուբոհի մեջ նրա ունեցած դերը: Կան նաև հավաքական կերպարներ խորհրդանշող հուշարձաններ, կան անգամ այդպիսի հուշարձաններով լի կենդանիների հատուկ գերեզմաններ:

Հերոս կենդանիների շարքում են շները, որոնք պատերազմում թե խաղաղ պայմաններում հաճախ են ցուցաբերել հերոսություն, արիություն: Նրանց արժանիորեն մեծարել են և անմահացրել՝ որպես օրինակ սերունդների համար:

Շան պատվին կանգնեցված հայտնի հուշարձաններից մեկը գտնվում է Փարիզի Շների գերեզմանոցում և կառուցվել է շուրջ երկու դար առաջ: Պատվանդանին մի մեծ շուն է և հավատով լի հայացքով նրա մեջքին նստած ու շանը փաթաթված երեխա: Պատվանդանին ֆրանսերեն մակագրություն կա. «Բարրին, որ փրկեց քառասուն մարդու և սպանվեց քառասունմեկերորդի ձեռքով» (Il sauva la vie à 40 personnes. Il fut tué par le 41ème):

Ահա հուշարձանի պատմությունը: Ալպերում կա մի լեռնանցք, որ կոչվում է Մեծ Սեն-Բերնար: Մի ժամանակ այստեղով ճանապարհ էր անցնում, որը Իտալիան կապում էր Կենտրոնական Եվրոպայի երկրների հետ: Ճանապարհը բավական դժվարին էր, ձգվում էր 2,5 կիլոմետր բարձրության վրա, եղանակն էլ այս կողմերում փոփոխական է. հանկարծակի սկսվում է քամի, բուք. ճամփորդները հաճախ կորցնում են ճանապարհը, մոլորվում:

10-րդ դարում լեռնանցքում հիմնադրվեց Սեն-Բերնարի (Սուրբ Բերնարի) վանքը: Ցանկանալով հնարավորինս մեծ թվով մարդկանց ենթարկել իրեն, եկեղեցին օգտագործեց նաև այս վայրը, որպեսզի ընդարձակի իր ազդեցության սահմանները: Վանականները գիտեին բոլոր նրանց, ովքեր անցնում էին լեռնանցքով. վանքի հյուրանոցում ապաստան էին տալիս նրանց, օգնում դժբախտության մեջ ընկածին:

13-րդ դարում վանականները ձեռք բերեցին ուժեղ ու խելացի շներ, որոնց սենբերնար կոչեցին: Այդ շները չէին վախենում սառնամանիքից ու քամուց, նրանց համար սարսափելի չէր ձյան հաստ շերտը: Թավամազ այս հսկա շները հիրավի ցրտադիմացկուն էին ու ամրակազմ: Շնորհիվ իրենց գերզարգացած զգայարանների ու դիմացկունության, նրանք կարողանում էին երկար ժամանակով շրջել ձյունածածկ տարածքում և փնտրել ձյան տակ մնացածներին, ճանապարհը կորցրած կամ լեռների ծերպերն ընկած անցորդներին: Այս շները իսկական գանձ էին վանականների համար: Երկար տարիների ընթացքում սենբերնարները փրկեցին հազարավոր մարդկանց:

Սենբերնարների մեջ կային իրենց չեմպիոնները, իրենց հռչակավորները: Ամենահայտնի փրկարարների մեջ կար մի շուն՝ Առյուծ անունով: Նա փրկել էր 35 մարդու: Առյուծային ուժով օժտված այս հսկան մեծ համբավ էր վայելում լեռներում:

Սակայն ավելի հայտնի էր Բարրին (1800-1814 թթ.), նույն այն շունը, որը փրկել էր քառասուն մարդու և սպանվել քառասունմեկերորդի ձեռքով:

Ահա թե դա ինչպես է տեղի ունեցել: 1814 թվականն էր, ցրտաշունչ մի ձմեռ: Օրերից մի օր շատ ուժեղ բուք սկսվեց: Փորձանքի մեջ ընկած մարդկանց օգնելու ելած շները մեկը մյուսի հետևից ուժասպառ վերադառնում էին վանք: Եվ միայն Բարրին էր ձնամրրիկի միջով առաջ գնում: Ըստ երևույթին՝ բնազդը նրան հուշում էր, թե ինչ-որ մեկը օգնության կարիք ունի: Եվ այն չխաբեց Բարրին: Ի վերջո նա հայտնաբերեց ձյան մեջ կորած մի մարդու: Ձյունը փորելով ու նրան դուրս հանելով՝ շունը սկսեց քաշքշել սառած մարդուն, լիզել նրա դեմքը: Մարդը ուշքի եկավ: Սակայն, բացելով աչքերը ու կողքին տեսնելով շան մռութը, մարդը կարծեց, թե իր առջև գայլ է և երկարափող հրացանի սվինով (մեկ այլ վարկածի համաձայն՝ ատրճանակով) մահացու վիրավորեց շանը: Դա էլ հենց Բարրիի փրկած քառասունմեկերորդ մարդն էր… Բարրիի դիակը հանդիսավորությամբ տեղափոխեցին Փարիզ և ամենայն մեծարանքով թաղեցին շների գերեզմանոցում:

Կան վկայություններ, որ այդ զինվորը եղել է շվեյցարացի: Այդ ժամանակ վանքի շրջակայքում լուրեր էին տարածվել, թե լեռներում մարդ է մահացել: 48 ժամ որոնելով նրան՝ Բարրին վերջապես գտել էր զորքից հետ մնացած ու լեռներում կորած զինվորին, որը և սպանել էր շանը:

Սակայն պետք է նշել, որ այս վարկածը ավելի շատ լեգենդ է, քան իրականություն: Կա ևս մի հետաքրքիր և ավելի արժանահավատ վարկած, համաձայն որի՝ Բարրին իրոք փրկել է քառասունմեկ մարդու: Քառասունմեկերորդը մի երեխա է եղել: Ոչ ոք չգիտեր, որ երեխան փորձանքի մեջ է ընկել: Հայտնի չէ, թե ինչպես է նա

հայտնվել լեռնանցքում՝ բնակավայրերից այդքան հեռու: Եվ միայն ծեր Բարրին էր զգում, որ ինքը պետք է շտապի՝ փրկելու երեխային: Նա ժամանակին հասավ. երեխան թեև կորցրել էր գիտակցությունը, բայց դեռ ողջ էր: Բարրին պառկեց նրա կողքին՝ փորձելով տաքացնել նրան և երկար ու համառորեն լիզում էր դեմքը: Տղան ուշքի եկավ: Նա այնքան թույլ էր, որ չէր կարողանում ոտքի կանգնել և միայն կարողացավ գրկել շան պարանոցը: Այդ ժամանակ Բարրին սկսեց դանդաղ ու զգուշորեն քարշ տալ նրան: Ծեր Բարրիի վիճակը շատ ծանր էր: Տղան ասես հասկացավ դա ու բարձրացավ շան մեջքին: Այսպես էլ շունը նրան հասցրեց մարդկանց մոտ: Իսկ Բարրին, քսան տարի ծառայելով մարդկանց, մահացավ՝ կյանքի վերջին տարիներն անցկացնելով Շվեյցարիայի Բեռն քաղաքում:

Այս վարկածի վառ ապացույցն է նաև այն, որ մահից հետո Բարրիի մարմինը տեղափոխվել է Բեռնի բնության պատմության թանգարան: Այնտեղ պատրաստել են շան խրտվիլակը: 1923 թվականին փոխեցին շան գանգը՝ դարձնելով այն ժամանակակից սենբերնարների գանգին համապատասխան: Բացի այդ, ինչպես արդեն նշվեց, Բարրիի արձանը՝ երեխան մեջքին, նույնպես ակնառու կերպով վկայում է այս վարկածի օգտին:

Հավելեմ, որ Բարրի անունով այս բարի շան պատմությունը բազմիցս հիշատակվում է եվրոպական գեղարվեստական և փաստավավերագրական գրականության մեջ և կինեմատոգրաֆիայում: Ասեմ նաև, որ 19-րդ դարից ի վեր Սեն-Բերնարի վանքի շներից մեկին ավանդաբար անվանակոչում են Բարրի, իսկ 2004 թվականից առ այսօր գործում է Բարրիի անվան հիմնադրամը, որն ստեղծվել է

վանքին կից գործող շնաբուծարանում սենբերնար ցեղատեսակի շների բուծման ծախսերը հոգալու նպատակով:

Ահա և մի հերոս շան պատմություն, որը փառքով ապրել է՝ դժվարամատչելի ու ձյունածածկ լեռներում երկար տարիներ փրկելով մարդկանց:

Պետք է նշեմ, որ կան մարդիկ, որոնք, այնուամենայնիվ, հակված են հավատալու, որ Բարրիի հուշարձանի պատվանդանին գրված մակագրությունն է ճիշտը, և որ շունը իսկապես դժբախտ վախճան է ունեցել, երբ զինվորականը թյուրիմացաբար սպանել է նրան: Կան և մարդիկ, որոնք ավելի հակված են հավատալու, որ իրականում երկու դեպքերն էլ եղել են՝ կազմելով Բարրիի փառավոր կենսագրության տարբեր էջերը: Թե ո՛ր վարկածն է առավել համապատասխանում իրականությանը թողնում եմ ընթերցողին: 200 տարվա վաղեմության այս դեպքերն այսօր մեզ հազիվ թե օգնեն լիարժեքորեն հասկանալու, թե ի վերջո ո՞ր վարկածն է լիովին համապատասխանում իրականությանը: Սակայն, մի՞թե դա է կարևորը: Կարևորն այն է, որ Բարրին փրկել է մարդկանց, ծառայել նրանց մեծ նվիրումով ու հավատարմորեն, և մարդիկ, ի նշան երախտագիտության, նրան հուշարձան են կանգնեցրել:

Բարրիի հուշարձանը հուշարձան է իրենց պարտքին և մարդուն հավատարիմ բոլոր շներին (լինեն դրանք ցեղական թե փողոցի): Կարելի է անվերջ պատմել հազարավոր շների մասին, որոնք անձնուրացաբար ծառայել են մարդուն՝ իրենց կարևոր ներբերումն ունենալով մարդկության պատմության մեջ և նպաստելով մարդ–բնություն անխախտ և փխրուն հարաբերության հարատևմանը և հարստացմանը:

24.02.2012

ԼՈՒՍԱԲԱՑԸ՝ ԻՆՔՆԱԹԻՌԻ ՊԱՏՈՒՀԱՆԻՑ

Ստեղծագործական մտորումներ ծնվում են տարբեր ժամանակ և տարբեր հանգամանքներում: Հաճախ է պատահում, որ ձեռքս վերցնում եմ գրիչն ու սկսում գրել՝ թղթին հանձնելու համար այս կամ այն տպավորությունը: Հետո այդ ամենը շարում եմ համակարգչով ու ավելի հարստացնում, զարգացնում տեքստը: Հաճախ էլ հենց միանգամից համակարգչով եմ գրում. բացում եմ էլեկտրոնային սպիտակ էջը և սկսում գրել: Մի քանի վայրկյան հետո արդեն սպիտակ էջին «դրոշմվում են» սև-սև նիշերը: Դրանք տառերն են, որ այդ պահին մեկիկ-մեկիկ ու շատ արագ հավաքվում և բառերի, արտահայտությունների, նախադասությունների ու պարբերությունների տեսքով փոխանցում են այն ամենը, ինչը մինչև այդ գլխումս էր, եռում էր, բովվում, մշակվում՝ սպասելով ելքին: Մտորումները թղթին հանձնելու պրոցեսը մի առանձնակի հաճույք է պատճառում: Դու ակնառու կերպով տեսնում ես այն մտքերը, որոնք քիչ առաջ միայն քո գլխում էին: Սակայն գրել միայն սեղանի դիմաց նստած՝ հետաքրքիր չէ: Դա հիմնական ձևն է, իհարկե, սակայն կան զգացողություններ, որոնք անմիջապես պետք է գրի առնել, ապրել ու հենց այդ պահին էլ անմահացնել առաջին տպավորությունը: Օրինակ՝ գտնվում ես մի արտասովոր կամ շատ գեղեցիկ վայրում, կամ էլ այնպիսի իրադրության մեջ, որ նախընտրելի է այդ պահին գրի առնել տեսածդ: Չէ՞ որ, մի բան է՝ տեղում նայել ու անմիջապես թղթին հանձնել տպավորություններդ, և մեկ այլ բան է՝ վերադառնալ տուն, գործի դնել երևակայությունդ ու թղթին հանձնել արդեն հիշողությունը, թեկուզ՝ ոչ այնքան վաղուցվա: Անկեղծ ա-

սած՝ ես սիրում եմ աշխատել երկու ձևով էլ, քանի որ ստեղծագործող մարդու համար, լինի տեղում նկարագրություն, թե հետահայաց շարադրանք, միևնույն է, դա հաճելի պրոցես է: Պատահում է նաև, որ մտքով տեղափոխվում եմ հեռուներ: Սակայն բաց չեմ թողնում նաև այն առիթը, երբ հնարավոր է տեղում նկարագրել, տեղում «թղթին հանձնել» այն մտքերը, որոնք ծնվում են տպավորությունից: Այդպիսի մտքերը, կարելի է ասել, «առաջին ձեռքից» են, և այդպիսի մտքերից ծնվում են ահա այսպիսի պատմվածքներ…

2009 թվականի հոկտեմբերի 21-ի լույս 22-ի գիշերը, իսկ ավելի ստույգ՝ արդեն շատ վաղ առավոտյան ես գտնվում էի Վիեննայից Մյունխեն թռչող ինքնաթիռում: Ուղևորներից շատերը քնած էին, սակայն ես քնել չկարողացա, անկեղծ ասած՝ չէի էլ ուզում: Նստել էի իմ սիրած տեղում՝ պատուհանի մոտ ու դիտում էի երկինքը, երկիրը, քաղաքների, գյուղերի ու մշակովի հողերի՝ ամպերի ու մշուշի միջից հազիվ նշմարելի ուրվագծերը: Ես նայում էի հորիզոնին: Կապույտ երկինքը հորիզոնից դեպի վեր ավելի ու ավելի էր մգանում: Նայում էի ներքև ու մտածում, թե ինչքա՛ն կյանք կա այնտեղ՝ ներքևում: Մտածում էի. «Ես հիմա գտնվում եմ այսպիսի բարձրության վրա, ինձ հետ է մի քանի տասնյակ մարդ, մինչդեռ այնտեղ՝ երկրի վրա ինչպե՛ս է եռում կյանքը: Հիմա, կտրված լինելով երկրից, ես էլի մտածում եմ երկրային եռուզեռի մասին»:

Իսկ հորիզոնը պարուրված էր ամպերով: Երկինքն այնքան դյութիչ ու կախարդող էր, որ անհնար էր աչք կտրել նրանից: Ես մի պահ պատկերացրի, որ ինքնաթիռում ուրիշ ոչ մեկը չկա, միայն ես եմ: Այդ ժամանակ

այնպիսի զգացողություն է լինում, ասես ինքնաթիռի թևերը քո թևերն են, կտրվել ես երկրից, պոկվել նրանից, պոկվել հողից, մոլորակից և գտնվում ես վերևում, ուրիշ հարթության ու ուրիշ իրականության մեջ: Ներքևում ամպերը հետզհետե թանձրանում են, և դու ավելի ու ավելի ես հեռանում մայր հողից: Դու քեզ զգում ես սավառնող արծվի պես: Այդ պահին այդ ամենը նկարագրելու մի անդիմադրելի ցանկություն առաջացավ մեջս: Ուղևորությունների ժամանակ իմ ձեռքի ուղեբեռում, ավելի ճիշտ, իմ պորտֆելում ես միշտ «զինված» եմ լինում գրենական բոլոր պարագաներով, որպեսզի գրելու առումով ինձ ազատ ու ապահովված զգամ ցանկացած վայրում: Եվ եթե մի արժանի, ուշագրավ բան եմ նկատում, որի մասին արժե գրել, ապա պահը բաց չեմ թողնում՝ գոնե ապագա մեծ տեքստի ինչ-որ գրառումներ, նշումներ անելու համար: Այդ նշումները, այդ առանցքային կամ «բանալի» բառերը, արտահայտությունները, ապագա նյութի իմաստը փոխանցող մի քանի կարևոր, հուշող նախադասությունները հետո դառնում են տեքստի հիմքը: Եվ բացի այդ, կարծում եմ ու համոզված եմ, որ ցանկացած գրող պետք է միշտ ձեռքի տակ ունենա թուղթ և գրիչ. մտքերը երբեմն գալիս են ոչ հարմար, ոչ աշխատանքային պահին և անհրաժեշտ է անպայման ֆիքսել դրանք: Ես, իհարկե, կարող եմ մտապահել ամենը ու հետո հանձնել թղթին: Սակայն հավաստիացնում եմ, որ մի առանձնակի հաճույք է տեղում գրելը, գրառումներ անելը: Դա նույնն է, ինչ, ասենք, եթե նկարիչը հասնի բնության գիրկը և փոխանակ իր մոլբերտը բաց անելու ու տեղում իր տեսածն ու զգացածը կտավին հանձնելու, վերադառնա տուն և նկարի ընդամենը հիշելով: Ցանկացած նկարչի հարցրեք,

ու նա կասի, թե որքան ներշնչանք, որքան զգայականություն է պարունակում իր մեջ բնապատկերը տեղում նկարելը: Նույնը և գրելն է:

Եվ ահա, ինքնաթիռում պորտֆելիցս հանեցի թուղթ ու գրիչ և սկսեցի գրել՝ նայելով պատուհանից:

Հիշեցնեմ, որ մյուս ուղևորները քնած էին, ինքնաթիռում կատարյալ լռություն էր, լսելի էր միայն շարժիչների խուլ ձայնը:

Նայում էի երկնքին, զմայլվում այդ անձեռակերտ գեղեցկությամբ ու շարունակում գրել. «Ամպերը հանդարտ շարվում են, երկինքը կարծես արթնանում է ու արթացնում երկրին: Ներքևում հետզհետե կյանքը մտնում է իր առօրեական հունի մեջ: Իսկ այստեղ՝ վերևում, ժամանակն ասես մի պահ կանգ է առել, և մի քանի տասնյակ մարդու համար երկիրն ու երկինքն ասես միաձուլվել են»: Շարունակում էի գրել ու նայել պատուհանից. «Երկինքը աստիճանաբար գունափոխվում է, երկնագույնն ավելի է մգանում, հորիզոնին նկատելի է բաց մանուշակագույնի երանգ, որը զարդարում է ամպերի գագաթները: Երկինքն ասես թաթախվել է ամպերի մեջ: Կատարյալ ազատություն է, ասես չկա ժամանակն ու տարածությունը սահմանափակող ոչինչ: Երկնքի կապույտ ու մանուշակագույն երանգները հաջորդում են իրար՝ ասես շոյելով միմյանց: Երկնքի այս անուշ ու նրբին ներկապնակն այնքան տպավորիչ է, ասես անսահման մեղեդային մի ստեղծագործություն լինի, երկնային մի սիմֆոնիա»:

Հանկարծ լսեցի ուղևորներից մեկի խռմփոցը: Մի մահմեդական ուղևոր էր: Չէ՜, ահաբեկիչ չէր իհարկե, վրան էլ ռումբ չուներ: Ի վերջո, հո բոլոր մահմեդականները չէ, որ ահաբեկիչ են: Բացի այդ, կարծում եմ, որ

ոչ մի ահաբեկիչ իր չար մտադրությունը թողած՝ խռմփացնելով չէր քնի ինքնաթիռում: Իսկ սա քնել էր, էն էլ ոնց էր քնել:

Ես շարունակեցի գրել. «Մահմեդական ուղևորի խռմփոցից ասես շարժվում են ամպերը, սակայն, միևնույն է, երկինքն այնքան խաղաղ է ու գեղեցիկ, որ շատ ափսոս, որ այս ուղևորը և մյուսները չեն տեսնում այս գեղեցկությունը»:

Այդ ժամանակ, երբ ես կլանված և բոլորի համար աննկատելի շարունակում էի գրել, հանկարծ տեսա, որ ինքնաթիռի ուղեկցորդուհիներից (թեև այս բառը չեմ սիրում), ինքնաթիռի ստյուարդեսաներից մեկը, մի քնքուշ ու գեղանի օրիորդ միջանցքի վերջում նստած հետաքրքրությամբ ինձ է հետևում: Նրա հայացքի մեջ այնքան քնքշություն կար, որ ակամայից գրավեց իմ ուշադրությունը: Այդ գեղեցիկ օրիորդը հիացական ու զմայլված հայացքով ուշադիր զննում էր ինձ: Նրա դեմքին ասես գրած էր. «Ինչ հետաքրքիր է, ռոմանտիկ, բոլորը քնած են, իսկ այս երիտասարդը ինչ-որ բան է գրում՝ նայելով ինքնաթիռի պատուհանից»: Ստյուարդեսան ժպտաց ինձ, ես էլ՝ իրեն, ու մենք ասես հայացքներով խոսեցինք: Պահը քնքուշ ու հուզիչ էր, և այն չէր մթագնում անգամ մահմեդական ուղևորի չդադարող խռմփոցը: Ստյուարդեսան նորից ժպտաց, հետո վեր կացավ ու նստեց ինձ համար ոչ տեսանելի անկյունում: Ես մտածեցի, որ նա գործ ունի անելու: Բնականաբար, գործ կար, քանի որ պետք է արդեն պատրաստվեինք վայրէջքի: Ես մի քիչ էլ գրեցի, հետո փակեցի ու հավաքեցի թղթերս, բլոկնոտս և դրեցի պորտֆելիս մեջ:

Երբ իջնում էինք, մի զարմանալի բան տեղի ունեցավ: Ուղևորները սովորականի պես շարքով մոտենում էին ինքնաթիռի դռանը, իսկ երկու ստյուարդեսաները (որոնք մեզ հետ էին ամբողջ թռիչքի ժամանակ և որոնցից մեկն էլ այն սիրալիր ու ինձ ուշադիր հետևող օրիորդն էր) ժպտում էին ուղևորներին և, ինչպես ընդունված է, «Բարի գալուստ» էին մաղթում տվյալ քաղաք, այս դեպքում՝ Մյունխեն, ժամանողներին: Երբ ես էլ մոտեցա իրենց, այդ աղջիկը, որի հետ արդեն հասցրել էի «հայացքով մտերմանալ», ինձ մի թուղթ տվեց, ծալած փոքրիկ թուղթ: Իջնում էին արագ, և ես հասցրեցի միայն անգլերենով շնորհակալություն հայտնել: Զրուցել չստացվեց, քանի որ ժամանակ չկար: Այնպես որ, միայն հասցրեցի հաճելի զարմանք արտահայտել: Երբ իջա ինքնաթիռից ու նստեցինք ավտոբուս, ես արագ բաց արեցի թուղթը և ինչ տեսնեմ. թղթին գրիչով մի գծապատկեր էր. ինքնաթիռի նստարանների շարք, քնած ուղևորներ և ես, որ նայելով պատուհանին՝ գրում եմ: Հավանաբար, ամբողջ թռիչքի ժամանակ այդ աղջկա համար հաճելի ու տպավորիչ էր եղել տեսնել մեկին, որը ինքնաթիռի փոքրիկ պատուհանից հափշտակված նայում է երկնքին: Նա էլ, երևի, որոշել էր մի հաճելի բան անել ինձ համար, հաճելի մի անակնկալ մատուցել ինձ: Փաստորեն, ահա թե ինչով էր նա զբաղված եղել, երբ տեղափոխվել էր ինձ համար ոչ տեսանելի անկյունը: Նկարը շատ լավն էր, այնքան լավը, որ ուզում էի հետ գնալ դեպի ինքնաթիռ ու գտնել այդ հաճելի օրիորդին: Փաստորեն ինքնաթիռում ես գրում էի, իսկ ինքը՝ նկարում, գրում էի երկնքի մասին, ինքը նկարում էր ինձ: Երկնքի գեղեցկության ամեն մի մանրուքը հանկարծ բաց չթողնելու ձգտումով մտքերիս մեջ խորա-

սուզված լինելու պատճառով ես, փաստորեն, չէի տեսնում, որ այդ պահը ներշնչանքի աղբյուր էր դարձել երիտասարդ օրիորդի համար: Երևի առաջին անգամ էր նկատել, որ լուսաբացին, երբ ուղևորները քնած են, իսկ մեկն էլ լավ խռմփացնում է, կա մեկը, որ աչք չի փակել, որպեսզի բաց չթողնի երկնքի այդ գեղեցկությամբ հիանալու և այդ «գեղեցկությունը» թղթին հանձնելու հնարավորությունը: Հաճելի էր, ինչ խոսք, նման անակնկալ «նվեր», նման հիշատակ ստանալ անծանոթուհուց: Հաճելի էր գիտակցել, որ ինքնաթիռում ես միակ ստեղծագործողը չէի, և որ աշխարհը գեղեցիկ է, պետք է միայն ձգտել տեսնել կյանքի ամբողջ գեղեցկությունը և փորձել արտացոլել զգացածը: Երկուսիս համար էլ անչափ հիշարժան ու անմոռանալի դարձավ այդ մի լուսաբացը՝ ինքնաթիռի պատուհանից: Ինձ շատ լավ զգացի, որ աշխարհում կան այդ ստյուարդեսայի պես մարդիկ, որոնց համար կյանքը միայն ամենօրյա աշխատանքը չէ՝ ինքնաթիռը, ուղևորները, թռիչքներն ու վայրէջքները, «կյանքը» նաև փոքրիկ թուղթն է, որի վրա գրիչով կարելի է նկարել և մտովի թռչել շատ ավելի հեռու ու բարձր, քան նույն այդ ինքնաթիռը կարող է տանել:

26-27.01.2012

ԱՆՑՅԱԼԻՑ ԵԿՈՂ ԿՐԱԿԸ

Արդեն նոյեմբեր ամիսն էր: Մի օր մայթով անցնելիս տեսա, որ զուգահեռ մայթին տեղակայված մթերային մի խանութի կողքին վառում էին արտադրական ու կենցաղային աղբ՝ մթերքների ու այլ ապրանքների «գարդոնից» արկղեր, տոպրակներ և այլն: Ակամայից սկսեցի մտածել, ինչքա՜ն է զարգացել մարդը: Կար ժամանակ, երբ կրակից էր կախված մարդու կյանքը, կրակը նրա համար ուներ կենսական նշանակություն, իսկ այսօր… նա կրակով աղբ է վառում: Եվ իսկապես, կրակի հետ մարդն այսօր առնչվում է, թերևս, միայն մի քանի դեպքերում՝ հրդեհների ժամանակ, ինչ-որ բան այրելիս, մոմ վառելիս, ինչ-որ բան խորովելիս և այլն: Այն մեծ նշանակությունը, որն ուներ կրակը ժամանակին, մերօրյա իրականության մեջ այլևս չունի, և դա մարդու էվոլյուցիայի հետևանք է: Այլևս միայն կրակով չէ, որ մարդը որսամիս, ավար է խորովում, կրակով չէ, որ տաքանում է, խարույկը չէ, որ ծառայում է նրան որպես լույսի ու ջերմության միակ աղբյուր, վայրի գիշատիչներից պաշտպանվելու հզոր միջոց, այլևս կրակը չէ, որ ծառայում է որպես հուսալի ու անգերազանցելի զենք՝ որսի ժամանակ: Այո, մարդն այսօր շատ է զարգացել: Եթե նույնիսկ ինքը կրակ էլ է անում, ապա դա նպատակային ու կարճատև կրակ է: Հենց նույն միս խորովելիս անգամ, շատ դեպքերում, այսօր մարդը օգտվում է վառարաններից: Մի խոսքով՝ հրդեհ, որը բռնկվում է մարդու կամքից անկախ (հազվադեպ՝ միտումնավոր) և փոքրիկ խարույկ՝ ինչ-որ բան այրելու համար, ահա՝ այն հիմնական տեսքը, որն ունի կրակն այսօր, այն կրակը, որը ժամանակին այդքան կարևոր էր մարդու հա-

մար, այն կրակը, առանց որի մարդը չէր պատկերացնում իրեն, իր գոյությունը, այն կրակը, որի շնորհիվ նաև մարդն առանձնացավ կենդանիներից, հայտնվեց մի քանի աստիճան վերևում, գրավեց իշխանական ու տիրական դիրք՝ իշխելով ու վախեցնելով մյուս բոլոր արարածներին: Ահա այդ կրակը, որն իր տարբեր դրսևորումներով ժամանակին մարդու անբաժան ուղեկիցն էր՝ լուսավորում էր նրա ճանապարհը, ծառայում որպես լապտեր ու ճրագ, մոմ ու վառոդ, այսօր աղբ վառելու միջոց է դարձել, օգտագործված, դեն նետելու արկղներն ու տոպրակները վառելու հասարակ ու արագ միջոց: Ժամանակին կար կրակապաշտություն, կրակը մեծարելու, աստվածացնելու դավանանքների ու հավատալիքների մի ամբողջ համախումբ, մի ամբողջ բազմազանություն: Մարդու համար շատ բան անհասկանալի, անիմանալի, անբացատրելի էր մնում, և կրակի ուժն էլ այնքան մեծ էր, որ անկախ իրենից կրակը, դրանից ծնված հրդեհը մարդու մեջ հարգանք ու վախ էին ներշնչում:

Անցան դարեր, կրակ պաշտելու երևույթը մարեց, քանի որ այն դարձավ «ձեռնասուն», մարդը զարգացավ, գրավեց հորիզոններ, անգամ տիեզերքը նրա համար այլևս անբացատրելիի, վախի ու անիմանալիի անսահման տարածություն չէր, մարդը հասկացավ բնության երևույթները ու նրան այլևս չէր զարմացնում այն, ինչը ժամանակին ոչ միայն զարմանք, այլև վախ էր ներշնչում: Ահա այդպես, աստիճանաբար մարեց կրակի աստվածացման մղումը, սովորույթը, դավանանքը, «կուլտը»: Այն կրակը, որը ժամանակին Աստված էր, այսօր օգտագործվում է կենցաղային նպատակներով, օրինակ՝ լուցկու կամ կրակայրիչի տեսքով՝ ծխախոտ կամ գազօջախ վառելիս: Դե-

ների ինչպիսի վերադասավորում: Մի դեպքում, թերևս, մարդն առ այսօր կրակն օգտագործում է պարզապես խորհրդանշական ու վեհ գաղափարական նկատառումներով՝ ընդգծելով հիշատակ, հարգանք ու պատկառանք: Դա Անմար կրակի երևույթն է. մարդը կրակն օգտագործում է այսօր ինչ-որ բանի կամ անձի հիշատակը անմար պահելու համար, ու կրակն այդպիսով ծառայում է որպես անմահության վառ, անփոխարինելի, անկրկնելի, խոսուն խորհրդանիշ: Սակայն դա քիչ է: Իրականում այն վիթխարի դերը, որն ուներ կրակը անցյալում, այսօր չունի, և այսօր կրակ կարելի է տեսնել հազվադեպ, ինչպես ես տեսա մայթին, երբ այրում էին կենցաղային աղբը…

Ինչքան է փոխվել կյանքը: Ակամայից ուզում ես հուսալ, որ գոնե այն ներքին կրակը, որը կա մեզանից յուրաքանչյուրի մեջ, միշտ վառ է ու գոնե այնտեղ՝ մեր հոգու խորքում, այն վառվում է անմար կրակի պես, վառվում ու լուսավորում մեր հոգիները արևի պես վառ ու անցյալից եկող խարույկների լույսի պես կենսատու:

2011

ԲՈՒԼԿՈՒ ՄԻԱԿ ՉԱՄԻՉԸ

Առավոտյան սուրճի հետ բուլկի էի ուտում: Այդ պահին չէի կարծում, թե կարող է բուլկու հետ կապված նոր գրառում ծնվի: Չէ, այնպես չէ, որ բուլկին ինձ համար մի այնպիսի ներշնչանքի աղբյուր է, որ առիթ դարձավ գրելու: Ուղղակի մի այնպիսի բան նկատեցի, որից հետո

անկարող էի նույն հանգստությամբ ու ախորժակով ուտել այդ բուլկին: Ասեմ, թե ինչ եղավ: Բուլկին չամիչով էր, համենայն դեպս՝ այդպես էր նախանշված բուլկու ճակատագրով: Սակայն ես չամիչ նկատեցի միայն բուլկու վրա, բուլկու երեսին, իսկ ներսի պարունակությունը, մեղմ ասած, զերծ էր չամիչից: Զերծը ո՞րն է, չամիչի հետք էլ չկար: Ես հասկացա, որ մեր քաղաքում հացաբուլկեղեն արտադրող որոշ արտադրամասեր հավանաբար վարում են ահա թե ինչպիսի քաղաքականություն. պատրաստում են բուլկու խմորը, գնդիկները շարում են մետաղյա թիթեղի վրա և նախքան վառարանի մեջ մտցնելը՝ մեկ-երկու չամիչ են դնում բուլկիների վրա, մեջտեղում, որպեսզի արտաքնապես երևա, թե դրանք չամիչով է, իսկ իրականում ներսում ոչ մի չամիչ էլ չկա: Աչքերս կլորացրած ու ուշադրությունս գերլարած կերա նաև երկրորդ բուլկին, առավոտս մի տեսակ բուլկիաշատ էր: Սակայն այդ մեկի դեպքում էլ նույն պատկերն էր. մեկ չամիչ՝ բուլկու մակերեսին, վերևի հատվածում, իսկ ներսում՝ բուլկու «ընդերքում» կամ «հոգու խորքում», ոչ մի չամիչ: Գիտեմ, որ այս պահին իրեն հարգող ցանկացած չամիչով բուլկի հաստատ կվիրավորվեր այսպիսի վերաբերմունքից: Ճիշտ է, ես նկատեցի այս մանր խորամանկությունը բուլկու պարագայում, սակայն իրականում իմ ներքին վրդովմունքը ոչ թե կապված էր այն բանի հետ, որ բուլկին միայն մեկ չամիչ ուներ, այլ նրա հետ, ինչը մտածեցի՝ ելնելով այդ ամենից: Փաստորեն ստացվում է, որ ձեռքները հետ են պահել ու չամիչ չեն գցել՝ այդպիսով խնայելով այն ու սպառողին էլ խաբելով, թե չամիչով բուլկի է: Մանր «աֆյորա» է, բան չունեմ ասելու: Սակայն ցավն ախր այն է, որ այդպիսի մանր «մուխլյաժներ», ինչպես ընդունված է

կոչել, այդպիսի մանր խորամանկություններ արվում են մեր կյանքում գրեթե ամեն բնագավառում: Ցավոք, մեր հայրենակիցները հաճախ են դիմում այդպիսի մանր ու միջին, մեծ ու փոքր «ձեռնածությունների», մեծ ու փոքր «մուխլյաժների»: Մեր երկիրը շատ ավելի բաների կհասնի, եթե մենք, պատկերավոր ասած, չխնայենք այդ «կարևոր» մի քանի չամիչը: Սրա պատճառները շատ ավելի խորքային են: Նախ, դարեր շարունակ պետականության բացակայության հետևանքով հասարակության մեջ մի որոշակի զանգվածի մոտ ձևավորվել է արատավոր մի սովորություն. այդ զանգվածը չի ուզում արարել մեր պետության համար՝ մեր արտադրած «ազգային բուլկին» չհամարելով պետության «բուլկի»: Երկրորդ. այդ նույն զանգվածը համառորեն չի ուզում ապրել, արարել, արտադրել ոչ միայն մեր, այլև հանրության շահի ու օգուտի համար, ինչպես ասում են՝ «на благо общества»: Նույն այդ զանգվածին բնորոշ է, որ այն չի սիրում ապրել ու գործել հանրօգուտ կյանքով, սիրում է միայն իրեն լավ լինի, իր բուլկին չամիչով լինի, ջհանդամ թե մյուս սպառողների իրավունքները ոտնահարվում են: Այդպիսի մարդկիկ մտածում են՝ թող տանս դիմաց մաքուր լինի, ջհանդամ թե փողոցը կեղտի մեջ կկորչի, մեր փորը կուշտ լինի, ջհանդամ թե մյուսները աղբանոցում ուտելու հաց են ման գալիս: Հասկանո՞ւմ եք: Հարցը չամիչով բուլկին չէ, այլ մեզանից ոմանց մտածողությունը, որը խորհրդային շրջանից ենք ժառանգել՝ մի բան թռցնենք, «կռայիտ անենք», մի բան չօգտագործենք ու պահենք մեզ, մի բան խնայենք մեզ համար՝ «շնից մազ պոկելը քյար համարելով»: «Հոմո սովետիկուս»-ի այդ հիվանդագին մտածողությունը դեռ դուրս չի եկել ոմանց միջից: Չենք ուզում

հասկանալ, որ մեկ-երկու չամիչով մեզ չենք փրկվի, չենք ուզում հասկանալ, որ բուլկու մեջ չամիչ չդնելով մենք պետությանն ենք վնասում և վարկաբեկում ու հեղինա-կազրկում ենք ինքներս մեզ: Չենք ուզում հասկանալ, որ, օրինակ, դրսի հեռախոսների կրպակները վնասելով ու ջարդելով՝ մենք մեր երկրին ենք վնասում, ոչ թե հեռախոսը: Չենք ուզում հասկանալ, որ կոտրելով ծառի ճյուղը՝ մենք վնասում ենք ոչ միայն ծառին, այլև բնապահպանական վնաս ենք հասցնում պետությանը և վատ օրինակ ծառայում մատաղ սերնդի համար: Ամեն ինչում չի կարելի փորձել խորամանկել, շրջանցել, խուսա-փել: Բավական է ապրենք պետությունից մի բան խլելու հոգեբանությամբ, պետք է մտածել, թե ինչ ենք մենք տալիս պետությանը, հայրենիքին: Սրանք ակնհայտ ճշմարտություններ են, սակայն արդյո՞ք մեզանից ոմանք որդեգրել ու դավանում են այդ ճշմարտություններին: Այո, ցավոք, երևի միայն մեր ազգի ժողովրդական բանա-հյուսության մեջ կարելի է հանդիպել «Շնից մազ պոկելն էլ քյար է» ասույթը: Բակավան է այդպես ապրել: Հիշո՞ւմ եք «Մենք ենք՝ մեր սարերը» հանճարեղ ֆիլմի մեջ Պավլեի (Խորեն Աբրահամյան) խոսքերը. «Պետությունը բժշկին քիչ է վճարում, ուսուցչին քիչ է վճարում, որ այդ խնա-յողություններով երկիրը դարձնի երկիր, իսկ դու գողանում ես այդ խնայողությունները՝ սերմացու գողացող մկան պես, թուխս գողացող աղվեսի պես»:

Եվս մի կարևոր հանգամանք. խիստ ցավալին այն է, որ այդ անչամիչ բուլկիներն ուտում են նաև մեր երեխա-ները: Բացի այն, որ իրենք էլ են խաբվում, նաև ցավալի է, որ տեսնում ու սովորում են խաբել:

Հիմա կասեք, թե մի չամիչից ուր հասավ: Բայց հենց դա է հարցադրումը՝ պիտի վերջապես հասկանանք, որ ամեն մի մանրուքը, ամեն մի հատիկը, ամեն մի չամիչը, ջրի ամեն մի կաթիլը խիստ կարևոր են պետականություն կառուցելու «ծովում»: Ես չամիչի կռիվ չեմ տալիս, այդ բուլկու միակ չամիչը չի նսեմացրել իմ արժանապատվությունը և ոչ էլ բուլկիների իրավունքների պաշտպանության միջազգային միությունից եմ: Իմ կռիվը ուրի՛շ է, ես կռվում եմ նրա համար, որ մտածենք ոչ միայն մեր, այլև մեր պետությա՛ն, մեր հայրենիքի՛, մեր ժողովրդի՛ համար:

Հարգելի՛ արտադրողներ, նրանք, որոնք մեղմ ասած այդքան էլ բարեխիղճ չեն իրենց բիզնեսում, մտածեք այս ուղղությամբ: Մի՛ ոտնահարեք սպառողների իրավունքները, մի նսեմացրեք մեր երկրի արժանապատվությունը, մի՛ խեղաթյուրեք մեր պետականության ձևավորման ու կայացման հիմքերը ու նրա զարգացման ապագան, մի՛ խաթարեք մեր մատաղ սերնդի անմեղ ու ազնիվ մեծանալու իրավունքը, մի՛ փչացրեք մեր երեխաների հոգին, աշխատեք ու արարեք ազնի՛վ, արդա՛ր և օրինակ վերցրեք ոչ թե փոքրոգիներից ու խորամանկներից, այլ ազնիվ ու արդար գործող մյուս արտադրողներից: Փոքրհոգիությունն ու խորամանկությունը վայել չէ մեր ազգին: Եվ ինչո՞ւ միայն մեր ազգին: Դա վայել չէ ազնիվ, շիտակ և արժանապատիվ կյանքով ապրող և ոչ մի ազգի:

20.02.2012

ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԱՆՁՐԵՎ

Երբևէ քայլե՞լ եք դեկտեմբերյան անձրևի տակ: Ոչ թե հորդառատ, այլ թույլ, մանրակաթիլ անձրևի:

2008 թ. դեկտեմբերի 10-ի երեկոյան տուն էի վերադառնում աշխատանքից: Մութ էր արդեն: Տեղում էր թույլ անձրև, նախորդ օրը տեղացած ձյան հետքերն անհետացել էին, եղանակը սառն էր ու հաճելի, մշուշ էր: Անձրևի բույրն այնքան դուրեհաճ էր, որ կարծես ներթափանցում էր մինչև հոգու խորքը: Ինքը՝ ջուրը, բույր չունի, դա թրջված ամեն ինչի բույրն է, որը շոյում է քթանցքներդ ու քիմքդ: Անձրևի այդ բույրն ասես ձնծաղիկների թույլ բույր լինի, որն այնքան քնքուշ է ու թարմ, սառն ու հաճելի, որ ուզում ես անընդհատ ներքաշել այդ բույրը, խորը շնչել ու մեծ բավականություն ստանալ:

Քայլում էի ու խորհում: Մայթեզրին աճում էին բարձր սոսիներ ու ուռենիներ: Անձրևի անուշ բույրին, թաց հողի հոտին խառնվել էր նաև չորացած ու գետնին թափված տերևների հոտը: Շատ տերևներ էլ դեռ ծառերի ճյուղերին էին, և այդ ամենը հիշեցնում էր աշնանային անավարտ տեսարան, որը լուսավորվում էր ճամփեզրի լապտերի աղոտ ու դեղնավուն լույսով: Ես համոզվեցի, որ յուրաքանչյուր ծառի տերև յուրովի է բուրում… Որքա՜ն հրաշալի է բնությունը:

01.12.2011

«ՁՄԵՐՈՒԿՈՏ» ԳԻՇԵՐ

Երբեք չեմ մոռանա այդ գիշերը: Քունս ոչ մի կերպ չէր տանում: Մի որոշ ժամանակ անց անկողնուց վեր կացա, նստեցի տան տնտեսական պատշգամբում: Պատուհանը բաց էր: Օդը մաքուր էր, հաճելի: Քունս այնպես չէր տանում, որ անկողին վերադառնալու միտք անգամ չունեի: Զգացի, որ օրվա տպավորության տակ ուզում եմ անպայման գրել, մի տեսակ մտքերս «ջրի երես հանել», հանգստանալ այդ ամենից, այդ բոլոր հույզերից ու տպավորություններից: Անբացատրելի, անդիմադրելի մի ցանկությամբ ես ձեռքս վերցրեցի գրիչը… Ահա թե ինչ գրեցի այդ գիշեր, ժամը առավոտյան 4-ն անց 15 րոպեից մինչև 5-ն անց 33 րոպե:

«Գիշեր է…հուլիսի 23-ի, լույս 24-ի գիշերը: Մեկն է այն գիշերներից, որ մնում են որպես հուշ, մնում ամբողջ կյանքում:

Քնել չի լինում: Ակամայից ձգվում եմ դեպի թուղթն ու գրիչը, թեև իրականում գրելու բան գրեթե չկա: Սակայն, այդ մասին այս պահին ոչ ոք չգիտի, քանի որ բոլորը քնած են, աշխարհը ննջում է կարծես, և միայն ես եմ արթուն:

Նայում եմ պատուհանից: Սիրում եմ խորը շունչ քաշել և թոքերս լցնել վաղ առավոտվա թարմ օդի բույրով, որն ասես ծովի բույր լինի: Ինչ-որ խոնավ բան կա այդ բույրի մեջ, ծովային խոնավություն: Ես շարունակում եմ կենտրոնանալ կամ գոնե ջանում եմ կենտրոնանալ, որպեսզի քամեմ ուղեղս ու ինչ-որ խելացի բան գրեմ, սակայն իրականում այս պահին մտքիս գալիս է ձմերուկ վաճառող այն մարդը, որին տեսնում եմ պատուհանից: Նա,

ծածկվելով իր պիջակով, քնել է ձմերուկների կույտի կողքին, քնել է հենց փողոցում, անշուք ու այդպես էլ չկայացած մի կրպակի կողքին: Հետաքրքիր է այդ մարդու աշխարհը: Հետաքրքիր են աշխարհի, նրա ու իր ձմերուկների դերերը: Ի՞նչ է նրա համար այս աշխարհը, ձմերուկների կույտ, որը պետք է վաճառե՞լ …Նա քնած է:

Մեքենաներն արագ անցնում են փողոցով: Քաղաքի բնակիչներից ոմանք արդեն արթուն են, ճամփա են ընկել: Բայց, այնուամենայնիվ, մեծ մասը քնած է:

Հետաքրքիր է, թե ինչ է տեսնում այս պահին իր երազում այդ ձմերուկավաճառը, որը միգուցե եկել է ինչ-որ գյուղից, շրջանից ու գիշերում է իր իսկ «ապրանքի» կողքին: Ինձ հետաքրքիր է նրա երազը, ոչ թե, որ նախանձում եմ նրա քնին, այսինքն, որ նա քնած է, իսկ ես՝ արթուն, այլ այն պատճառով, որ ուղեղս քամելը սկսում է տալ իր պտուղները. ես անգամ խորասուզվում եմ ուրիշի քնի մեջ:

Խելացի մտքի փնտրտուքն ստիպեց ինձ նայել վեր՝ աստղերին: Մարդը միշտ էլ վերև է նայում, երբ փորձում է խելացի բան ասել, խելացի բան մտածել, երևակայել, հորինել և կամ… ստել:

Սակայն ես չեմ ստում, ինքս ինձ հետ միանգամայն անկեղծ եմ հիմա, հակառակ դեպքում էլ ի՞նչ իմաստ կունենար չքնելը, մնալը մինչև գիշերը ժամը 4-ը կամ 5-ը և աստղերին նայելով՝ ինքդ քեզ խաբելը:

Փողոցով անցնող ավտոմեքենայի ձայնը կտրում է իմ մտքի թելը, խաթարում փողոցի անդորրը՝ ազդարարելով, որ լուսաբացը մոտ է: Բայց դա ձմերուկ վաճառող մուշ-մուշ քնած այն մարդուն ամենևին էլ չի հուզում:

Հետաքրքիր է, նա երազո՞ւմ էլ է հաշվում վաճառված ձմերուկներից ստացված հասույթը:

Մարդկանց երազները տարբեր են լինում: Մեկի համար երազը անցյալի հուշերի վերարտադրությունն է, մյուսի համար՝ ապագայի կանխազգացումը, կանխագուշակումը, ձմերուկ վաճառողի համար, միգուցե, տնտեսական հաշվարկը: Մարդ էլ կա, որ երազ չի տեսնում և ոչ այն պատճառով, որ չունի այդ հատկությունը, այլ ուղղակի նրա համար, որ ինձ նման հիմա անքուն է: Անքուն է ու, միգուցե, ինքն էլ ձեռքը գրիչ է վերցրել ու փորձում է մի բան գրել՝ չարչարելով և՛ գրչին, և՛ իր ուղեղը:

Իսկ միգուցե ես սխալվո՞ւմ եմ: Միգուցե այդ ձմերուկավաճառն իր երազում տեսնում է իր տունը, հարազատներին, աքլորների կանչով ու աթարի հոտով լցված հայրենի գյուղը, երեխաներին, որոնք պիտի սեպտեմբերին դպրոց գնան, իսկ նա չգիտի, թե ինչպես է հոգալու դպրոցի ծախսերը: Միգուցե տան ծախսերը փակելու, երեխաներին պահելու համա՞ր է նա այստեղ ու քնած է մեր փողոցում: Քնա՞ծ: Ա՜խ, հա՜, հիմա չէ՞ որ գիշեր է: Հիմա աշխարհն է քնած: Անգամ նրա ձմերուկներն են, ասես, քնել՝ «հենվելով» մեկը մյուսին:

Մի քանի ժամ հետո փողոցը կլցվի կյանքով՝ խանութ կշտապեն փարթամ ու գեղեցիկ կրծքերով վաճառողուհիները, ժամեր հետո աղբը կհավաքի աղբատար մեքենան, երթուղային տաքսիները կշտապեն գերծանրաբեռնվել՝ որքան հնարավոր է շատ ուղևոր վերցնելով, ուսանողները կշտապեն բուհեր, կարթնանան ճնճղուկները, կարթնանա աշխարհը, կարթնանա նաև այս ձմերուկ վաճառողը:

Սակայն դեռ գիշեր է, և նա դեռ մնում է որպես մի փոքրիկ դրվագ՝ այս մեծ գիշերում ու խաղում է գլխավոր դերը իմ ֆիլմի սյուժեում, ֆիլմ, որ «բեմադրում եմ» հիմա: Ու թեև ես փորձում եմ հնարավորինս շատ իրադարձություններ զարգացնել միայնակ քնած այդ մարդու շուրջը, այնուամենայնիվ նա շարունակում է քնած մնալ՝ երազում տեսնելով այն, ինչ տեսնում է:

Հետաքրքիր գունային համադրություն է դրսում. լուսաֆորի գույները խառնվել են փողոցի բարձր լապտերներին, որոնց լույսերն էլ, իրենց հերթին, ձուլվել են խանութների գովազդների լույսերին: Եվ այս ամենը համեմվել է գիշերվա թանձր սևով: Ժամանակ առ ժամանակ գունային այս «համանվագին» են խառնվում ավտոմեքենաների լույսերը: Դրանք լուսարձակում են ու արագ անցնող ասուպներ են հիշեցնում:

Նստած եմ արդեն սենյակում, ավելի ճիշտ՝ հյուրասենյակում: Դարձյալ միացրել եմ հեռուստացույցը: Ձայնն իջեցրել եմ, որպեսզի ուղղակի էկրանի լույսը փոքր-ինչ լուսավորի մութ սենյակը, ու ես կարողանամ գրել այս կիսալույս, կիսամթի մեջ: Ինչպես ձմերուկ վաճառողն է ծածկվել իր պիջակի մեջ, այնպես էլ ես եմ փորձում ինձ «ծածկել» այդ աղոտ լույսով:

Սիրում եմ անքուն գիշերը: Դա յուրօրինակ ազատություն է կյանքի միօրինակ հերթափոխից և, ասես, ջարդելու է գալիս նույնը, կրկնվողը՝ պարգևելով նոր, արտասովոր վիճակ: Անքուն գիշերվա ընթացքում դու ասես խախտում ես ընդունված հաջորդականությունները, իսկ եթե կարողանում ես նաև մտածել, ապա կարելի է ասել, որ կարողանում ես կառավարել այդ վիճակը, կարող ես ասել. «Անքուն գիշերն իզուր չէր, արժեր չքնել»:

Այս պահին ազատ եմ, ու քանի որ բոլորը քնած են, ապա ազատորեն թղթին եմ հանձնում մտքերս: Թղթին եմ հանձնում իմ կարծիքն ամեն ինչ մասին՝ և՛ գիշերում միայնակ շրջող շան (որը կարծես չի վախենում շնաորս ծառայողներից), և՛ լուսաֆորների (որոնք հատկապես գեղեցիկ են գիշերը), և՛ ազատության (որը մի ձևի ու բովանդակության է՝ ինձ համար, իմ պատկերացմամբ, մեկ այլ ձևի՝ երկնքում հենց հիմա թռչող վիթխարի մարդատար ինքնաթիռի օդաչուի հոգում, և բոլորովին այլ ձևի՝ ձմերուկ վաճառողի երազում), և՛ հեռուստացույցի (որն այս ուշ ժամին ինձ համար, փաստորեն, լապտերի դեր է կատարում), և՛ իմ գրչի մասին (որն արդեն երրորդն է, քանի որ առաջին երկուսի թանաքը վերջացավ, երբ ես, փորձելով մտքեր հանել կիսաարթուն-կիսաքնած ուղեղիցս, սկսեցի տանջել նրանց՝ իմ գեղեցիկ ձեռագրով քսելով թղթին):

Կոպերս ձմերուկի պես ծանրանում են: Մի տեսակ «ձմերուկոտ» գիշեր է: Քունը, կարծես, ուզում է տիրել մարմնիս, քնեցնել նրան, բայց մարմինս ուժե՛ղ է, պայքարում է (մեռնեմ իրա ջանին):

Այնպես որ, ես չեմ քնի այն քնով, որով հիմա քնած է նա՝ մի քանի տասնյակ ձմերուկների «տիրակալը»: Մյուս կողմից, ես, իհարկե, ավելի հանգիստ եմ, քանի որ այդ ձմերուկներն իրացնելու խնդիր չունեմ: Սակայն, միևնույն ժամանակ, ունեմ ավելի մեծ բանի «իրացման» խնդիր, այն է՝ դուրս հանել այն ողջ էներգիան, որն իմ մեջ է, որի պատճառով անքուն եմ, որի արտահայտման ձևն այս անգամ ձմերուկ վաճառողի մասին սույն «մենախոսությունն» է:

Իսկ նա դեռ քնած է: Նրա կյանքը ո՛չ կինո է, ո՛չ էլ, ասենք, մաթեմատիկական բարդ հաշվարկ, ասել կուզի՝ ո՛չ ստեղծագործություն, ո՛չ բանաձև: Նրա համար այս պահին ամենակարևորը այդ ձմերուկներն առաջին իսկ օրերին արագ վաճառելն է, ինչը միգուցե տանջող մտքի պես հանգիստ չի տալիս նրան իր՝ հայրենի գյուղի, կովերի, ցեխոտ ավտոբուսների, վառարանների, դարուփոս ճանապարհների, կարկտահար դաշտերի ու այգիների, ցրտից փչացած մթերքի, թթից քաշված օղու, կարմրայտ կնոջ ու անհոգ երեխաների պատկերներով լցված խորը երազում: Նա քնել է բաց երկնքի տակ: Ինչո՞ւ: Գուցե և՛ քնած է, և՛ մի աչքով աչալուրջ հետևո՞ւմ է ամեն մի ձայնի ու անցորդին, որպեսզի ձմերուկները չգողանան, իսկ միգուցե նա այնքան ազատասեր է, որ սիրում է քնել այդպես, անհոգ ու հանգիստ՝ ծուլվելով լուսաֆորի գույներով զարդարված փողոցի կտավի՞ն:

Ուղեղս, ինչպես ֆուտբոլում են ասում, գործի է դրել երկրորդ շնչառությունը, ձեռքս էլ իր հերթին է արդեն ինքնավարություն ձեռք բերում ու գրո՜ւմ է, գրո՜ւմ:

Շենքերի պատուհաններում դեռ ոչ մի լույս չի վառվում: Այսպես շենքերը նման են աչքերը հանված դեմքերի, երբ աչքերի, տվյալ դեպքում՝ պատուհանների տեղը սև փոսեր են:

Տեղ-տեղ լսվում են շների հաչոցներ: Միգուցե շներից մեկն իր մտորումների մեջ է և որոշել է լուսադեմին իր կարծիքը հայտնել այս կամ այն հարցի վերաբերյալ:

…Լուսաբացը մոտենում է: Շուտով նոր օր կբացվի թե՛ այդ անվերջ հաչող շան (որը կարծես կրակում է գիշերվա անդորրի մեջ, ու որին կարծես դեռ չեն գտել շնասպանները…), թե՛ ինչ-որ տեղ արդեն շտապող վա-

որդների, թե՛ այն օդաչուի, թե՛ այս խորը քնով քնած ծմերուկավաճառի, և թե՛ ինձ համար: Հետաքրքիրն այն է, թե ինչպիսի՞ն կմնա այս գիշերը մեր բոլորի հուշերում: Մեկի համար այն ստեղծագործական պրպտումների, մտորումների, մյուսի համար՝ աշխատանքային, երրորդի համար՝ ձայնի մշակման, չորրորդի համար էլ նոր ճանապարհի գիշեր էր: Իսկ ահա հինգերորդի և, երևի թե, ամենագլխավորի համար այս գիշերն այդպես էլ ուղղակի անցավ, ճիշտ է՝ բաց երկնքի տակ, բայց միևնույն է՝ հերթական գիշերվա պես, և նա ականատեսը չեղավ գիշերվա ողջ գեղեցկության: Նա քնած անցկացրեց գիշերը ու տեսավ, հավանաբար, երազ իր համար ամենանվիրական բանի՝ հայրենի գյուղի, կովերի ու արտերի, կամ էլ ո՞վ գիտի, միգուցե, պարզապես ծմերուկների մասին»:

Տիրում էր չքնաղ խաղաղություն և գիշերվա լռության մեջ ականջ էր շոյում դաշտային ճռիկի անուշ, միալար, մեղեդային ճռռոցը: Ինչ կա ավելի հրաշալի, քան ճռիկի ձայնը գիշերվա մթին: Սիրում եմ այդ ձայնը դեռ մանկուց: Քունս արդեն տանում էր, սակայն այդպես էլ չքնեցի, իսկական անքուն գիշեր անցկացրեցի իմ մտքերի, գիշերվա պատկերների հետ: Եվ մինչ ծմերուկ վաճառող մարդը անհոգ քնած էր, ես մտովի ճանապարհորդեցի գիշերային քաղաքում, բարձրացա ու հասա թռչող ինքնաթիռին, իջա ու վայելեցի գիշերային անդորրն ու անուշաբույր օդը, հիացա գիշերային լույսերով ու խաղաղությամբ, ականջ դրեցի շների միալար հաչոցին ու մի անգամ էլ համոզվեցի, թե որքան հաճելի է պատուհանից հետևել այս ամենին, հետևել ու մտածել, թե ինչ հիասքանչ է գիշերը, թեկուզ՝ «ծմերուկոտ»:

2004

«ՔՐՏՆԱԾ» ԳՆԱՑՔԸ

2008 թվականի մարտ ամիսն էր: Վաղ առավոտյան անցնում էի Զեյթուն թաղամասի՝ դեպի Սևան տանող երկաթգծի կողքով, երբ մոտեցավ մարդատար գնացքը, կանգնեց վերջին կայարանում, որից այն կողմ ճանապարհը փակ է, ու նա նույն ճանապարհով էլ հետ պիտի դառնար մարզ: Ամպամած եղանակ էր, ու մանր կաթիլներով անձրև էր տեղում: Քայլում էի գնացքի կողքով ու նայում թրջված վագոններին: Տեսա, թե ինչպես է վագոնների կողքից կաթում ջուրը: Գնացքը ասես քրտնել էր: «Քրտնած գնացք», – մտածեցի ես: Սկսեցի ավելի ուշադիր նայել այդ «ծերուկին», որը արդեն քանի՞ տարի ծառայում էր մարդուն: Նա հանգիստ կանգնած էր: Սակավաթիվ ուղևորները սկսեցին տեղավորվել վագոններում: Այդ չորս-հինգ վագոնում այնքան ազատ տեղ կար, որ կարելի էր նստել՝ որտեղ կամենայիր: Թաց, անձրևի կաթիլների հետքերից շերտավոր դարձած փոշոտ պատուհաններից դեպի հեռուն էին նայում մի քանի ուղևորներ, մյուսները մտազբաղ նստած էին պատուհաններից հեռու գտնվող մյուս նստարաններին: Անձրևը շարունակում էր տեղալ: Թույլ էր տեղում, սակայն՝ անընդհատ: Ես ավելի դանդաղեցրի քայլերս՝ հափշտակված նայելով գնացքին: Սիրում եմ գնացքը, նրա անիվների աղմուկը, նրա տեսքը, նրա դերը, նրա «պոեզիան»: Գնացքի այդ լիրիկան ինձ հետ է միշտ, և ես մի տեսակ հարազատի պես էի քայլում այդ գնացքի կողքով: Նա լուռ սպասում էր, որ ուղևորները տեղավորվեն: Սկսեցի մտածել մարդու, նրա ստեղծածի, այդ վիթխարի երկաթյա փոխադրամիջոցի մասին, որը դեռևս շարժվում էր ժան-

գոտած գծերի վրայով: Մի կողմից անձրևն էր, որ ստիպում էր խորհել, մյուս կողմից՝ գնացքի հանդարտ տեսքը, որը հուշում էր ժամանակի, մարդու աշխատանքի, ժամանակավորի ու հավերժի մասին: Ինչ-որ տեղից եկել էր գնացքը ու հանգրվանել այդ պահին այդ կայարանում: Այդպես ամեն օր. նա գալիս է ու նույն ճանապարհով էլ հետ գնում: Սովորական, հասարակ մի իրավիճակ, առաջին հայացքից՝ նույնիսկ մի փոքր անհրապույր: Սակայն բավական էր նայել, թե ինչպես էին անձրևի կաթիլները հոսում վագոնների կողքերից, բավական էր մտածել, թե դա կարծես գնացքի քրտինքն էր, և մտքիդ գալիս էին ժամանակը, գնացքի տքնաջան աշխատանքը, ամենօրյա ճանապարհը, անցած տարիները՝ լի բազում իրադրություններով, արկածներով: Այդ ամենի մեջ իր ամենակարևոր տեղն ունի, իհարկե, ժամանակը. այն ստիպում է մարդուն զարգանալ, կատարելագործվել, այն ապրեցնում է ու առաջ մղում: Ժամանակը ստիպում է ամեն անգամ նորովի նայել բազմաթիվ հարցերի, ժամանակը դիտարկելիս անգամ մաշված գնացքն էր մի ուրույն հմայք ստանում:

Այսօր ստեղծվում են նոր, արագընթաց ու գերհզոր գնացքներ՝ ժամանակակից կահավորանքով ու բոլոր հարմարություններով: Նրանք թրատում են օդն իրենց արագ ընթացքով՝ համարձակ կերպով մարտահրավեր նետելով թե՛ ժամանակին, թե՛ մետաղին: Այդ նոր ու հզոր գնացքները նոր շունչ են հաղորդել երկաթուղուն: Իսկ քաղաքի գողտրիկ անկյունում հանգրվանած կիսաժանգոտած գնացքը դեռևս շարունակում է մնալ որպես իր ժամանակի «արգասիք», երբեմնի փառավոր անցյալի տխուր, ժանգոտած ու թաց «ներկա»:

Կաթիլները շարունակում էին հոսել ու հուշել, որ այս կյանքում մարդու ստեղծած ոչ մի բան հավերժ չէ: Մի օր շահագործումից կհանվի նաև այդ «ծերուկը», այն արդեն իր դարն ապրել է, նրա փոխարեն կգան նորերը, ավելի «խրոխտ» տեսքով գնացքներ, որոնք նոր ասելիք կունենան երևի արդեն նաև փոխված երկաթգծին: Այդ նոր գնացքների շնորհիվ կփոխվեն կայարանն ու մերձակայքը, հավանաբար կփոխվի անգամ ուղևորների վերաբերմունքը երկաթուղու նկատմամբ: Սակայն առայժմ, անձրևային այդ ուրույն ներկապնակում այս մաշված գնացքը անցյալից պոկված մի բեկոր է, մի մասնիկ, մի հուշ, որը շարունակում է ապրել, դեռ շարունակում է աշխատել, շարժվել, մարդկանց տեղափոխել ու ավելին՝ «քրտնել»: Դա աշխատանքի քրտինք է, դա անցած ճանապարհի քրտինք է, դա հարգանքը աշխատանքով վաստակելու քրտինք է, և ոչ՝ սոսկ անձրևի կաթիլներ: Երանի բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքը ապրում են այնպես, որ «քրտնում են գնացքի պես» և սիրում են՝ «գնացքի պես քրտնելով»:

Այդպես մտածելով քայլում էի հսկա գնացքի կողքով, երբ լսվեց նրա շչակի ձայնը, և այն պատրաստվեց մեկնելու: Անիվներն սկսեցին ավելի ու ավելի արագ պտտվել, ու գնացքը արդեն հեռանում էր ինձնից, նրա հետ հեռանում էին իր անցյալը, հուշերը, իր երբեմնի փառավոր ուղին, իր երբեմնի առույգությունն ու ուժը:

Գնացքի հետ հեռանում էր Խորհրդային Հայաստանի մի հատված, մի դրվագ: Հեռանում էր վաստակավոր այդ «ծերուկը», հեռանում էր անձրևի մանր կաթիլների ներքո՝ իր հետ տանելով իր անցյալը, ներկան, իր պատմությունը և իր քրտինքով վաստակած հարգանքը:

– Մի գնացքի պատմություն, – մտածեցի ես, – մի մաշված, ծեր ու անձրևից «քրտնած» գնացքի պատմություն…

Հետգրություն: 2012 թվականին գնացքը հանվեց, ավելին՝ ապամոնտաժվեցին նաև ռելսերը, այդ ճանապարհով այլևս գնացք չի գնում, երկաթգիծ էլ չկա, 2013 թվականից այնտեղ ասֆալտապատ ճանապարհ է…

15.03.2008

ԵՐԲ ՍԻՐԱՀԱՐՎԱԾ ԵՍ ԿԻՆՈՅԻՆ*

Ուզում եմ սիրո ուրույն խոստովանություն անել կինոյին: Կինոն (կինեմատոգրաֆ) կյանքի արտացոլանքն է: Այն մեզ ցույց է տալիս մեր անցյալը, ներկան և ապագան: Սակայն ինչպես կինոն է կյանքի հայելին, այնպես էլ մեր կյանքն է մի յուրօրինակ կինո: Այո, կյանքը կինո է՝ իր հերոսներով, իրադարձություններով, զարգացումներով, նվաճումներով, ուրույն «սցենարով», «բեմադրություններով», անգամ՝ «դուբլներով»: Վստահ եմ, որ դուք հիմա

* «Երբ սիրահարված ես կինոյին» էտյուդը գրել եմ աշխարհահռչակ ռեժիսոր Ֆեդերիկո Ֆելլինիի «8 1/2» հանճարեղ ֆիլմով ներշնչված, ֆիլմ, որը, իր նույնքան հանճարեղ երաժշտությամբ և փայլուն դերասանական կազմով, լավագույնս արտացոլում է կինո կոչված առեղծվածային, մոգական աշխարհի ամբողջ հմայքը, խենթ ու ստեղծարար էությունը, տոնական տրամադրությունը, հարուստ ներկապակն ու անդադար ռիթմը, հարատև ընթացքն ու մշտական զարգացումները, անսահման ընդգրկումն ու խորը ասելիքը, լայն մասսայականությունն ու անքննելի հավերժությունը, հավերժությունը ինչպես ինքը՝ կյանքը:

ժպտում եք, սակայն կյանքում էլ է, չէ՞, լինում, որ մի բանը մի քանի անգամ ես փորձում, վերապրում, մի՞թե դա «դուբլ» չէ: Այնպես որ, իսկապես, կյանքը կինո է:

Կինոն մի յուրօրինակ բեմ է, ամբիոն, որից ասված խոսքը, որից ուղարկված հույզը, որից արձակված հնչյունը երբեմն ամենաազդեցիկ կերպով են հուզում, ամենաարագ ու ամենադիպուկ կերպով են հարվածում, ցույց տալիս, դաստիարակում, կրթում, ստիպում մտածել, հետևություններ անել:

Յուրաքանչյուր մարդ իր կյանքի ընթացքում «ապրում է» իր կինոն: Այդ կինոյում կան և՛ բարի ու չար հերոսներ, և՛ հաջող ու անհաջող իրադարձություններ, և՛ ձախողումներ ու ձեռքբերումներ, և՛ սեր ու դավաճանություն, և՛ տխրություն ու ուրախություն, և՛ սկիզբ ու վերջ:

Իմ կարծիքով՝ կարևորն այն է, որ կյանքն ապրես այնպես բովանդակալից ու հետաքրքիր, երջանիկ ու սիրառատ, վառ ու լուսավոր, գրագետ ու բարի, արդար ու արժանապատիվ, օգտակար ու օրինակելի, ինքնատիպ ու անկրկնելի, որ վերջում՝ կյանքի մայրամուտին, երբ շրջապատված լինես քո սիրելիներով, մի պահ հետ նայես անցածդ ամբողջ ճանապարհին, վերապրես ամենը և մտածես քո կյանքի մասին այսպես. «Ի՜նչ լավ կինո էր, որ նայեցի…»:

23.10.2011

ՍԻՐԵԼՈՎ Է ԿՅԱՆՔԸ ՀԻԱՍՔԱՆՉ

…Նա սկսեց շատ դանդաղ համբուրել երկնային գեղեցկությամբ ու հմայքով խենթացնող կնոջ պարանոցը, հոտ քաշել նրա բուրավետ մազերից, մաշկից, հետո սկսեց համբուրել նրա անուշաբույր կուրծքը, ուսերը, ամբողջ մարմինը: Կինը պառկել և բավականություն էր ստանում իր միակ ու առնական տղամարդու, իր անգերազանցելի «արուի» հերթական սիրատածումից, նրա այրող համբույրներից: Նրանք կրքոտ ու երկար սիրեցին իրար: Առավոտյան գերագույն հաճույքից ու ստացած բավականությունից ուժասպառ կինը քաղցր թմբիրի մեջ դեռ երկար պառկած մնաց անկողնում՝ զարդարելով այն իր չքնաղ ու սպիտակամաշկ մարմնով: Քաղցր, անուշ նանրության երանելի այդ վիճակից կինը պարզապես շողում էր: Երջանկությունից լուսարձակող կնոջ գեղեցիկ դեմքը փայլում էր պատուհանից ներս թափանցած վաղորդյան արևի շոյիչ շողերի ներքո:

Իսկ առավոտն այնքան թարմ ու հաճելի էր, որ ամեն բան կարծես նպաստում էր անկողնում իրար առավելագույնը պարգևելու երկուսի տենչանքին: Արևը դանդաղ, սակայն հաստատուն ընթացքով բարձրանում էր: Երևանյան երկինքը վառ կապույտ էր, անդադար լսվում էին ձայներ՝ ավտոմեքենաների, ճնճղուկների:

Կինը թեքվեց դեպի իր տղամարդը, մեղմիկ ժպտաց նրան ու ասաց. «Բարի լույս, սիրելիս»: Արևն էլ իր հերթին ժպտաց Երկրին: Ամեն օր արևը «Բարի լույս» է ասում քաղաքին, ճնճղուկները վերսկսում են իրենց երեկվա կիսատ երգերը, ավտոմեքենաները մեկը մյուսի հետևից հայտնվում են գիշերը տեղացած անձրևից լրիվ

թաց փողոցի վրա, ցողաթաթախ ծառերը աննկատ ժպտում են անցորդներին: Մանրակաթիլ, թավ անձրևի երեկվա հետքերը նշմարելի են ծառերի տերևներին ու կանաչ խոտերին: Մեր քաղաքն սկսում է արթնանալ, ամեն ինչ սկսում է ընթանալ իր առօրեական հունով: Մարդիկ էլի շտապում են, ընդ որում, մեկը մյուսից ավելի շատ է շտապում: Մեքենաները խլացնում են ճնճղուկների անուշ ծլվլոցը իրենց ազդանշաններով: Երթուղայիններում շարունակում է հնչել տարբեր ժանրերի երաժշտություն, որոնց միախառնվում են ուղևորների բջջային հեռախոսների ռաբիս, երբեմն՝ զարմանալի, շատ անգամ՝ անհասկանալի, մեկ-մեկ էլ՝ զարհուրելի մեղեդիները: Հետո այդ ամենը միաձուլվում է մեկ ընդհանուր սիմֆոնիայի մեջ: Քաղաքը շարունակում է ժպտալ իր բարի ժպիտով: Արևը ջերմացնում է անցորդներին, մեքենաներին, համառորեն իրենցը երգող ճնճղուկներին, արդեն չորացող և վառ կանաչ հագած տերևներին: Ամեն ինչ սովորական է և արտասովոր: Շուկաներում տատիկները համոզում են, որ իրենց խառը կանաչին է ամենաթարմը, մայթեզրով անցնում է ջրատար մեքենան ու լվանում մայթերը: Խանութները բացվում են, ցուցափեղկերը փորձում են ավելի շատ մարդկանց գրավել: Իսկ մարդիկ շտապո՜ւմ են ու շտապո՜ւմ:

Եվ այս ամենամյա ու ամենօրյա համանվագում ամեն մարդ մի առանձին, անկրկնելի պատմություն է: Այո՛, մեզանից յուրաքանչյուրն այս կյանքում ոչ միայն ունի իր պատմությունը, այլև ինքն է մի ուրույն պատմություն կյանքի ու մարդկության հաստատոր գրքում, ինքն էլ մի էջ է, մաքուր էջ: Շատ ցանկալի է կյանքն ապրել այնպես, որ այդ էջը չդառնա սևագիր, ճմրթված թուղթ: Ամեն օր

մեզանից յուրաքանչյուրը՝ որպես մի առանձին պատմություն, միավորում է իր իսկ պատմությունը համամարդկայինին և այդպիսով դառնում նրա անքակտելի մասը, կյանքի մի մասնիկը: Առավոտյան անկողնում իրար սիրող և լուսաբացը միասին դիմավորած զույգն էլ երկու առանձին պատմությունների միավորում էր, և արդեն ուներ նաև իրենց՝ երկուսի պատմությունը: Այդ պատմությունը մի փոքրիկ «ներկայացում» է մեր բոլորի սիրելի քաղաքում՝ Երևանում: Բոլոր քաղաքների նման, մեր քաղաքում էլ քանի՜-քանի՜ այդպիսի պատմություններ կան, քանի՜-քանի՜ սիրահար զույգեր: Կա մի զգացմունք, որը միավորում է զույգերին, երջանկացնում, ապրեցնում, պտտում աշխարհը, ստիպում մարդկանց շարժվել առաջ, ճնճղուկներին՝ ծլվլալ, ծառերին՝ ծաղկել ու կանաչել, ամպերին՝ անձրևել: Դա սերն է՝ ամենակարող և ամենակարևոր, ամենազգայուն և ամենահուզիչ, ամենաապրեցնող և ամենամեծ զգացմունքը: Սիրենք կյանքը, սիրենք մեզ շրջապատող մարդկանց, մեր միակ սիրելիին, սիրենք մեր քաղաքը և մեր պետությունը, սիրենք բնությունը, կենդանիներին ու բույսերին, սիրենք ամբողջ աշխարհը: Սիրենք սիրել, չէ՞ որ սիրելով է կյանքը հիասքանչ:

04.02.2012

ԱՌԱՆՁԻՆ՝ ՁՄՌԱՆ ՀԵՏ

Դեկտեմբերյան գիշերվա ընթացքում անընդմեջ ձյուն էր եկել, ու երբ արթնացա, ամեն ինչ ծածկվել էր ձյունով: Ծառերի ճյուղերը ճկվել էին ձյան ծանրության տակ: Այնպիսի տպավորություն էր, ասես ծառերը նորից տերևներ էին հագել, միայն՝ սպիտակ: Ծառերի այդ սպիտակ ու փարթամ «հագուստը» անձեռակերտ գեղեցկություն է հաղորդում նրանց: Եղանակը տաք էր, ձյունը դանդաղ, սակայն անդադար գալիս էր: Ձյունը գալիս էր ասես՝ ժպտալով, ձյունը գալիս էր ու երգում սիրո մասին: Ձյունը գալիս էր և մի նոր կախարդական հեքիաթ պատմում աստղերին ու լուսնին: Փողոցների լապտերները, մայթերի «բուդկաները», խանութները, հոսանքի լարերը, ամեն ինչ ծածկվել էր առատ ձյունով: Լարերի վրա այնքան ձյուն կար, որ դրանք ծանրացած կախվել էին: Նայում էի պատուհանից, կեսգիշերն անց էր: Երկինքը մառախլապատ էր, օդը լցված էր ծխի հաճելի բույրով: Մի տեսակ անուշ նանրություն էր տիրում շուրջը: Ես նկատեցի մի բան, որը սիրում եմ երեխա ժամանակից ի վեր. մթության մեջ փողոցի մի լապտեր էր վառվում: Լույսի շիթերը, որ հազիվ լուսավորում էին թանձր մառախուղը, այնքան անուշ ու հեքիաթային տեսարան էին ստեղծել, որ քեզ ասես տեղափոխում էին մի տեսակ հին եվրոպական քաղաքի մի փողոց: Ավելին. ձյուն էր տեղում, ու հենց այդ հատվածում փաթիլները երևում էին, քանի որ լուսամփոփի լույսը լուսավորում էր նրանց: Փաթիլները երևում էին միայն այն հատվածում, որտեղ լապտերի լույսն էր: Այնքա՜ն գեղեցիկ ու մեղմ տեսարան էր, հեքիաթային ու անուշ: Ասես տեղափոխվում էի մանկություն: Այդ ամենին

նպաստում էր նաև ծխի բույրը: Առանձնատների ծխնելույզների ծխին խառնվել էր փողոցի վառած կամ էլ փտած տերևների բույրը: Այդ ամենը ձյան բույրի հետ միասին ստեղծում էր մի անուշ բույր, որը պարուրում էր հոգիդ:

Շատ եմ սիրում այդ տեսարանը, երբ ձմեռային երկինքը մթնում է, երկինքը ու, ընդհանրապես, շուրջբոլորը մի տեսակ թույլ կամ ուժեղ ծխի, մառախուղի մեջ է ու մեկ կամ երկգլխանի լապտերն էլ հազիվ է լուսավորում մայթեզրի կամ փողոցի մի հատվածը՝ ստեղծելով հեքիաթային խավարը ինչ-որ չափով ցրելու համարձակ իմիտացիա: Դա նրան հաջողվում է միայն մասամբ, քանի որ լապտերի լույսի սահմաններից այն կողմ նորից գիշեր է, նորից փաթիլները չեն երևում:

Սիրում եմ ձմեռը: Մի հետաքրքիր բանի մասին եմ ուզում գրել, որը մտքովս անցավ 2006-ի դեկտեմբերի 21-ին: Տարվա բոլոր եղանակներից միայն ձմեռն է, որ իմ մեջ պարտավորվածության զգացում է առաջացնում, պարտավորվածություն՝ նկարագրելու իր գեղեցկությունը: Օրինակ, ամռանը երբեք ինձ հետ նման բան չի կատարվում, թեև ամառն էլ ոչ պակաս հմայք ունի: Սակայն ձմեռն այդպես է, մի տեսակ պարտավորեցնում է, ու ես չեմ կարողանում անտարբեր մնալ այդ անձեռակերտ գեղեցկության նկատմամբ: Հատկապես սիրում եմ ձմռան այն օրերը, երբ օդը մառախլապատ է, դրսում հաճելի ցուրտ է, ու ծառերի ճյուղերն էլ պատված են խիտ եղյամով: Ուշադրություն դարձրե՞լ եք, թե որքան գեղեցիկ են ծառերն այդ ժամանակ: Նրանց յուրաքանչյուր ճյուղ ասես ասելիք ունի: Սիրում եմ քայլել այդպիսի եղանակին ու մտածել. շատ մտքեր, ձմեռը նկարագրելու շատ տողեր

հենց այդ ժամանակ են ծնվում: Մի տեսակ կարոտի ու ափսոսանքի զգացողություն է առաջացնում իմ մեջ ձմեռը: Կարոտ՝ մանկության օրերի նկատմամբ, քանի որ ձմռան բույրի, տեսարանների ու վառարանների ծխի հետ մեջս արթնանում են մանկության տարիների երազները, հուշառատ ակնթարթները, բույրերով, գույներով ու զգացողություններով լեցուն հիշողություններ, ծնողներիս հետ «սանկայով» զբոսանքը ձյան տակ: Եվ, վերջապես, ափսոսանք, որ ձմռան այդ գեղեցկությունը, այդ մայթերը, սպիտակ սավանի տակ ննջող տանիքներն ու ավտոտնակները, ծառերի՝ ձյան ծանրությունից տեղ-տեղ կռացած ճյուղերը, հանդարտությունն ու բնատուր մաքրությունը ժամանակավոր են, տևում են ընդամենը մի քանի ամիս:

Սիրում եմ քայլել ձմռանը, քայլել ու խորհել: Ոչ մի ուրիշ եղանակ չի բերում, մի տեսակ, թախծոտ, խորաթափանց, հասուն տրամադրություն, երբ տարիքիցդ ավելի մեծ ես զգում քեզ ու ավելի հասուն, ավելի զուսպ: Ձմռան սավանն է, որ զսպում է, այն ասես զսպաշապիկ լինի շատ զգացողությունների ու մտքերի համար: Եվ մնում են միայն ամենանուրբ, ամենանվիրական զգացողությունները:

Երբ քայլում եմ ձյունածածկ մայթերով, ես էլ ասես մի փաթիլ լինեմ, երկնքից պոկված ու Երկրի վրա իջած փաթիլ, որն ունի իր առաքելությունն ու ասելիքը: Չէ՞ որ ամեն մի փաթիլ ունի իր ասելիքը: Փաթիլները իջնում ու մեղմորեն հպվում են քեզ, ասես բարևում են, աննկատ ժպտում ու լուռ իրականացնում իրենց առաքելությունը, այն է՝ խաղաղ վերմակով ծածկում անհանգիստ մոլորակը:

Սիրում եմ ձմեռը, երբ կարելի է այսպես քայլել, խորհել կամ նստել տանն ու խորհել, նայել պատուհանից կամ հանդարտ զբոսնել ծանոթ, սակայն նոր տեսք ստացած, մի տեսակ ալեհեր դարձած հարազատ մայթերով, փողոցներով, ծառուղիներով: Այդ զբոսանքի ժամանակ հատկապես սիրում եմ զմայլվել գեղեցիկ ու նուրբ, եղյամ հագած ծառերով: Նրանցից ամեն մեկն ասես մի նկար լինի, անձեռակերտ ստեղծագործություն, քանդակ: Դու շարունակում ես քայլել, գալիս է հազիվ նշմարելի, մանր ու սառած ձյուն, որն ավելի շատ սառը փոշի է հիշեցնում, ու դու քայլում ես՝ դեմքիդ զգալով անչափ մեղմ, մի տեսակ շոյիչ սառնությունը:

Ձմեռային զբոսանքների ժամանակ հատկապես սիրում եմ ուշադիր նայել մարդկանց, իհարկե՝ իրենց համար աննկատ կերպով: Այդպիսի զբոսանքների ժամանակ ինձ մոտ՝ որպես ստեղծագործողի ամեն անգամ մի նոր միտք է ծնվում, միտք, որ արհեստական չէ, այլ «սերում է» կյանքից: Ես քայլում եմ, զբոսնում, զննում երևույթները, մարդկանց, շրջապատող աշխարհը և թղթին հանձնում իմ տպավորությունները: Ա՛յ, դա էլ հենց ստեղծագործելն է, երբ քո միջից դուրս է գալիս մի բան, որը կար, նրա համար ուղղակի հարմար առիթ, կամ միջավայր էր պետք: Հրաշալի է, երբ այդ գրված միտքը իսկապես ծագել է իրական կյանքից, ստեղծագործաբար, ունի իրական հենք: Հրաշալի է, երբ ինչ-որ մտքի համար նյութ է ծառայում իրական կյանքը, քո կյանքը, որևէ դիպված, որևէ առիթ կամ պատճառ քո կյանքում, նաև՝ ուրիշի կյանքում: «Գարնանային ռեքվիեմը» գրելիս մշտապես բավականություն եմ ստացել այն բանից, որ գրքում զետեղել եմ ոչ թե մտացածին, այլ իրական կյանքում ծնված

մտքեր: Գրում ես՝ ոչ թե հնարելով զգացողություններ, այլ այն, ինչ իսկապես զգացել ես, ապրել, գրում ես այն մտքերը, որոնք երկար ժամանակ եղել են ուղեղիդ գաղտնարաններում, ծովակշիռ ոլորաններում և մի օր ծնվել են:

Ահա այդպիսի մի օր էր, երբ գլխումս հենց ձմեռային զբոսանքի ժամանակ մի միտք ծագեց: Իջնում էի Կոմիտաս պողոտայով, «կինո «Կոմիտասի»» մայթով: Նախ ասեմ, որ անչափ սիրում եմ «Կոմիտասը»: Մի յուրահատուկ քնքշություն է այն արթնացնում, մի տեսակ մանկության երազ կա այդ փողոցում: Մի տեսակ փոշոտ ու լիրիկական շղարշով է պատված Կոմիտասն ինձ համար: Պողոտան, ասես, ունի իր բույրը, իր գույնը, իր ձայնը: Ես «Կոմիտասը» սիրում եմ հատկապես գիշերը, երբ մանուկ հասակում պատուհանից նայում էի անցնող ավտոմեքենաների լույսերին:

Եվ ահա, 2008 թվականի փետրվարի 2-ն էր, ժամը 16-17.00-ի սահմաններում: Որոշել էի ոտքով քայլել: Ես սիրում եմ «Կոմիտասով» քայլել: Ու ահա այդ ժամանակ մի միտք ծնվեց, որի համար արժեր քայլել «Կոմիտասով» մի հարյուր անգամ: Չէ՞ որ այդ ժամանակ է, որ ստեղծագործում ես, նկատում ես որևէ բան, որը մինչև այդ չէիր նկատել: Այդ պահին անսահման բավականություն ես ստանում դրանից, շրջակա աշխարհը այդպես խորը զգալու ու արտացոլելու հնարավորությունից: Ցուրտ էր, ու աչքերս երբեմն ցրտից թեթև արցունքոտվում էին, սակայն դա չէր խանգարում, որպեսզի ուշադիր նայեի մարդկանց:

Զննում էի ու հենց այդ պահին մտածեցի. երբևէ նկատե՞լ եք, որ ձմռանը մարդկանց ամբողջ էությունը արտահայտվում է նրանց դեմքերին: Պարզաբանեմ: Տաք եղանակին մարդը թեթև է հագնվում, բաց են նրա մարմնի

որոշ հատվածներ՝ թևերը, ոտքերը, ուսերը, որովայնը, մեջքը, պարանոցը: Այդ ժամանակ մարդը «ներկայանում է» իր ամբողջ մարմնով, այսինքն՝ նրա ամբողջ էությունը «տարածված է», «նկատելի է» ամբողջ մարմնով մեկ, նա խոսում է մարմնի լեզվով, դու լիարժեք չես կենտրոնանում մարդու մարմնի այս կամ այն հատվածի վրա, քանի որ քեզ համար տեսանելի են նրա մարմնի շատ մասեր ու նրա հույզերն էլ ասես «ցրված են» ամբողջ մարմնով մեկ: Մարդը քեզ է ներկայանում իր ամբողջ մարմնով, նա փակված, ծածկված չէ: Դու չես կարող կենտրոնանալ միայն նրա դեմքի վրա, քանի որ անկախ քեզանից նայում ես նրա մարմնի մյուս մասերին ևս:

Ուրիշ բան է ձմռանը: Ցուրտ եղանակին մարդը ծածկված է հագուստով, լավ է ծածկված, և իր մարմնի միակ մասը, միակ հատվածը, որը բաց է, դա նրա… դեմքն է: Եվ քանի որ մարմնի մյուս հատվածները փակ լինելու պատճառով ի զորու չեն «խոսելու», հմայելու, «արտահայտելու» մարդու էությունը, ապա այդ ամենը անում է միայն դեմքը: Նկատե՞լ եք, որ ձմռանը մարդկանց բոլոր ապրումները, հույզերը, զգացողությունները, հոգսերը ասես խտացած են նրանց դեմքերին: Ձմռանը մարդու դեմքը ասես հայելի լինի, իրականությունը արտացոլող մի ինչ-որ «խտանյութ», որում երևում են մարդու մարմնի մնացած բոլոր մասերի արտահայտությունները: Եթե, օրինակ, կինը, ամռանը շրջապատող աշխարհի ու, հատկապես՝ տղամարդկանց հետ, դրսում «խոսում» ու նրանց հմայում է իր ուսերով կամ ոտքերով, իր որովայնով կամ մեջքով, իր կրծքով կամ պարանոցով, ապա ձմռանը դրսում այդ ամենը կենտրոնանում է միայն նրա դեմքին: Եթե կինը ամռանը դրսում կարող է իր մարմնի այլ հատվածներով,

իր բարեմասնություններով արտահայտել իր ցանկությունը, ապա ձմռանը նա այդ անում է գերազանցապես դեմքով: Եվ խոսքը միայն սեռական ցանկության մասին չէ: Ուշադիր նայեք ու կտեսնեք, որ չար մարդը դեմքի ավելի չար արտահայտություն է ունենում ձմռանը, քանի որ նրա էությունն ամբողջությամբ արտացոլում է միայն դեմքը, այնտեղ են խտանում նրա չար զգացողությունները, էլ չասեմ, որ դրանց էլ գումարվում են նաև ձմռան ցուրտ եղանակից առաջացող դիմային ծամածռությունները: Կամ ասենք բարի մարդը, որը ամռանը իր «բարությունը արտահայտում է» ամբողջ մարմնով, ձմռանը աշխարհի հետ «խոսում է», աշխարհին «ժպտում է» միայն իր դեմքով: Ձմռանը մարդկանց դեմքերը, իրոք որ, ավելի զգայուն ու խոսուն են դառնում, իսկապես վերածվում են մարդու մարմնի հայելու, պատուհանի: Մարդը զգում է ամբողջ մարմնով, զգացածը արտահայտում է միայն դեմքով, մարդը ցանկանում է ամբողջ մարմնով, դա երևում է միայն դեմքին, կարոտում է ամբողջ մարմնով՝ երևում է էլի միայն դեմքին, տառապում է ամբողջ մարմնով, սակայն դա տեսանելի է նորից ու նորից միայն դեմքին, մարդը վերջապես մրսում է ամբողջ մարմնով, սակայն դա արտահայտված է միայն նրա դեմքին, քանի որ մարմնի մյուս հատվածները փակ են:

Ձմեռը փոխում է ոչ միայն մարդկանց դեմքերի արտահայտությունները: Այն փոխում է նաև վերաբերմունքը կյանքի, աշխարհի նկատմամբ: Ամեն ինչ նոր տեսք է ստանում, վերափոխվում:

Անչափ սիրում եմ տանը աշխատել, գրել, մտածել ու նայել պատուհանից, երբ ձյուն է գալիս, որպեսզի հիանամ ձյունով, որ իր ճերմակ գորգով ծածկում է ամեն բան:

Երբևէ ուշադրություն դարձրե՞լ եք ձյան փաթիլի կառուցվածքին: Մի առավոտ, աշխատանքի գնալիս ուշադիր նայեցի ինձ վրա ընկած փաթիլին՝ ուսումնասիրելու համար նրա կառուցվածքը: Այնպիսի տպավորություն էր, կարծես երկնքում փաթիլի արտադրության գործարան լինի, որը խնամքով ստեղծում է անչափ գեղեցիկ, համաչափ, նուրբ փաթիլներ ու ուղարկում դրանք Երկիր մոլորակ: Հրա՜շք է: Երբ ուշադիր նայում ես փաթիլին, զգում ես, թե որքան հիասքանչ է բնությունը, ինչ մեծ ու փոքր հրաշքներ ունի այն, որոնք երբեմն նկատում ենք, երբեմն՝ ոչ: Նայում ես ու ապշում, թե ինչ հանճարեղ է բնությունը: Այն ներքև է ուղարկում ձյան ոչ թե անկանոն, աններդաշնակ, տգեղ մի զանգված, այլ ոսկերչական ճշգրտությամբ պատրաստված ու հղկված փաթիլների ամբողջություն, փաթիլներ, որոնցից յուրաքանչյուրը բնության ստեղծագործություն է:

Փաթիլը արտացոլում է ձմեռը, մեկ փաթիլում ամբողջ ձմեռն է: Փաթիլները կամաց-կամաց իջնում են: Նրանք, ասես, ասելիք ունեն, որը պատմում են ժպտալով: Նրանցից ամեն մեկը մի առանձին խոսք ունի՝ ուղղված աշխարհին: Փաթիլները իջնում են ու զրուցում մեզ հետ: Երբ նրանք առատորեն թափվում են ցած, սիրում եմ հափշտակված նայել պատուհանից՝ աչքերով շոյելով յուրաքանչյուր փաթիլը: Դրսում ցուրտ է, համաձայն եմ, սակայն անգամ այդ ցրտի մեջ յուրօրինակ մի պոեզիա կա, անգամ այդ քար լռության մեջ, որը ստեղծում է ձյունը, կա մի յուրահատուկ մեղեդի: «Սպիտակ» անուրջների իրականացման ճանապարհին ես յուրօրինակ խնդություն եմ ապրում, երբ ձյունը կամաց-կամաց իջնում է աշխարհի վրա:

Այո՛, ձմեռը միակ եղանակն է, երբ աշխարհը կարելի է տեսնել լրիվ ուրիշ տեսքով, սավանի տակ է ամեն ինչ, ու կարծես ծածկվում են իղձերն ու սպասումները, հիասթափություններն ու ուրախությունները, մտքերն ու զգացմունքները: Սպիտակ սավանը ծածկում է այդ ամենը:

Փաթիլները շարունակում են իջնել: Նրանք ասես ինձ էլ են ժպտում, նրանք գիտեն մի բան, որը ոչ ոք չգիտի, նրանք ժպտում են ու ակնարկում, որ կյանքի հավերժության ու ժամանակի ընթացքի ամբողջ գաղտնիքը իրենց մեջ է:

Անկախ ինձանից՝ ես այդ պահին մտովի երգում եմ Ռուբեն Հախվերդյանի երգը. «Ձյունը իջնում է դանդաղ, ձյունը իր երգն է երգում»: Գիտեմ, որ հախվերդյանական շունչը հիմա պարուրեց շատերին, ու գիտեմ նաև, որ մեզանից շատերը ամեն անգամ տեսնում են այդ փաթիլները, մեզանից յուրաքանչյուրը տեսնում է իր հոգու «պատուհանից»: Ամեն մեկն ունի իր այդ «պատուհանը», ու ամեն անգամ նա կարող է նայել, տեսնել այնտեղ լիրիկական այդ պատկերը, տեսնել հոգեթով սպիտակ սավանն ու խնդություն ապրել:

Մեր հոգու այդ կարևոր «պատուհանին» պիտի անդրադառնանք գոնե ժամանակ առ ժամանակ, նայենք նրանից՝ տեսնելու աշխարհը, «տեսնելու» մյուս հոգիներին, մյուս «պատուհանները», տեսնելու ժպտացող այն փաթիլներին, որոնք պարուրում են մեր հոգիները: Այո՛, ձմեռը տարվա այն եղանակն է, երբ ավելի շոշափելի է դառնում հոգու «պատուհանի» գոյությունը, երբ նայում ես դուրս քո տաքուկ անկյունից, նայում դրսում ցուրտ եղանակին շարունակ ներքև իջնող փաթիլներին ու

հասկանում, որ կյանքը հրաշալի է, այն գեղեցիկ ու յուրահատուկ է, այն քոնն է, քո ձեռքում է, պետք է զարդարել ու հարստացնել այն ամանորյա տոնածառի պես, որպեսզի իջնող փաթիլները քեզ էլ ժպտան գոհունակությամբ:

Ես սիրում եմ ձմեռը, քանի որ հենց այդ ժամանակ, ավելի քան երբևէ, զգում եմ հոգու «պատուհանի» առկայությունը, զգում եմ, թե ինչքան բաց կարող է լինել մարդը կյանքի, բնության ու աշխարհի համար:

Փաթիլները իջնում են ու զարմացնում իրենց վերընծա հանդարտությամբ, իրենց խնդուն հոգով ու սպիտակ, անեղծ մաքրությամբ: Իջնում են ու զարդարում պատուհանից դուրս այն տեսարանը, որը գերում է ինձ, որը աշխարհն է, որը կոչվում է կյանք…

04.12.2011, 30.05.2013

ԻՄ ԱՄԵՆԱՍԻՐԵԼԻ ՏՈՆԸ

Ինչպես և ամեն տարի, հետադարձ հայացք նետելով անցնող տարուն, փորձում ենք գնահատել ձեռքբերումները, գոհունակությամբ հիշել հաջողություններն ու վերլուծել ձախողումները: Ինչպես և ամեն տարի, նոր երազներով են լցվում մեր հոգիները, և իրավամբ մեծ հույսով սպասում ենք նոր հրաշքների՝ անպայմանորեն կապելով դրանք Ամանորի լուսավոր հեքիաթի հետ: Հին տարին արդեն պատմություն է դառնում: Մեկի համար այն նոր հաջողությունների ու ձեռքբերումների, մյուսի համար՝ դժվարությունների ու կորուստների, երրորդի համար ան-

ձնական երջանկության տարի էր: Իսկ կյանքը շարունակում է ընթանալ իր սովորական հունով. համադրվում են արտասովորն ու առօրեականը, ուրախությունն ու տխրությունը, ծովակշիռ նպատակներն ու դրանց իրականացման միջոցները: Գարնանը ձնծաղիկների փնջերն են հայտնվում շուկաներում, ամռանը ջրատար մեքենան ամեն առավոտ լվանում է Երևանի փողոցները, աշնանն այգու ցողաթաթախ ծառից երերալով ընկնում է վերջին ոսկե տերևը, ձմռանն սկսվում է ջեռուցման խնդիրը: Մեզանից գրեթե յուրաքանչյուրն անընդհատ ինչ-որ բան է փնտրում ու անդադար գնում իր նպատակների հետևից:

Նպատակների իրականացման այդ մրցավազքը երբեմն մեզ կտրում է լիրիկական այն շեղումից, որը, իրականում, նոր լիցքեր է տալիս մեզ, ստեղծագործական այն տրամադրվածությունից, որն անգիտակցորեն կամ գիտակցորեն արտահայտվում է մեր յուրաքանչյուր արարքում:

Եվ այդուհանդերձ, ամեն մի մարդու հոգում, տարվա երգածոր եղանակների պես, ոչ միայն չեն մարում, այլև համառորեն իրար են հաջորդում մեկը մյուսից լուսավոր երազանքները, որոնք իրենց կիզակետին են հասնում հենց Ամանորին: Յուրաքանչյուր տարեմուտի մեծ ցանկություն եմ ունենում, որ լուսավոր այդ երազանքներն իրականանան Նոր տարում, որպեսզի արդեն հաջորդ տարում, հետադարձ հայացք նետելով, մարդիկ տեսնեն միայն հաջողություններ, ուրախություն, բարի հուշեր ու երջանկություն, որոնցով կպսակվի Նոր տարին:

Նոր տարին միշտ եղել է իմ ամենասիրելի տոնը: Դեռ մանկուց ես ամենից շատ այս տոնին եմ սպասել: Տարիներ անց շատ բաներ են փոխվել, սակայն իմ սերը

Նոր տարվա տոնի նկատմամբ չի նվազել, չի փոխվել: Հավանաբար անցյալ կյանքում Ձմեռ պապիկ եմ եղել: Ինչևէ, սիրում եմ Նոր տարվա գույները, տոնական շունչը, լույսերը, հնդկական մոմի անուշ բույրը և այլն: Սիրում եմ երկար նայել մեծ, փարթամ ու գեղեցիկ տոնածառին, լի գույնզգույն մանր լույսերով, որոք կոչվում են «Rice lights»: Նայում եմ լույսերին ու ասես հայտնվում եմ հեքիաթի մեջ: Այնպես եմ սիրում կապույտի, կանաչի, դեղինի ու կարմիրի այդ փոքրիկ «հրավառությունը», գունավոր լույսերի հերթափոխով առկայծումը, որն ինձ ասես տեղափոխում է մի ուրիշ՝ մանկության աշխարհ, երազների ու հեքիաթների գունավոր ու զարմանահրաշ մի աշխարհ: Նայելով մանր լույսերին՝ ես մանկանում եմ, մաքրվում, հանգստանում, մի տեսակ լցվում եմ կախարդական հույզերով, հոգիս խնդություն է ապրում դրանց գույներից: Երբեմն անջատում եմ մեր հյուրասենյակի լույսը, ու մթության մեջ միայն գունազարդ լույսերով տոնածառն է: Լամպերը դանդաղ հանգչում են, ծառը հայտնվում է լիակատար մթության մեջ, հետո նորից վառվում են ու պայծառանում: Այնքան անուշ են կարմիր, կանաչ, կապույտ ու դեղին լամպիկները… Ծառը անկրկնելի գեղեցիկ է դառնում: Լույսերը վառվում են իրար հետ, կամ վառվում ու մարում են իրար հետևից: Եղևնու մուգ կանաչի վրա սկսում են վառվել միայն կանաչ լամպերը, հետո կանաչին փոխարինելու է գալիս կարմիր գույնը, հետո դեղինը, կապույտը. մեկը մյուսից գեղեցիկ ու աչք շոյող: Մանր, սակայն շատ վառ ու գունեղ այդ լամպիկները այնքան եմ սիրում, որ իսկապես աչքս չեմ կարողանում կտրել դրանցից: Ինձ համար կարևորը հեքիաթն է, հույզերն են, որ հաղորդում են լույսերը:

Նոր տարին միշտ ստիպում է նոր ու լիրիկական հայացքով նայել աշխարհին, իրերին, կյանքին: Ամեն Նոր տարի իր հետ բերում է մի առանձնահատուկ զգացողություն և զգացմունքայնություն, և դա նրանից է նաև, որ մեկ տարով ավելի ես մեծանում՝ ավելի հասուն կերպով ընկալելով աշխարհը…

Թող որ յուրաքանչյուր Նոր տարի իր հետ բերի նոր հույսեր: Թող ամեն Նոր տարի լուսավոր երազների տարի լինի, և թող որ այդ երազներն անպայման իրականանան ու չանհետանան առօրեական կյանքի հորձանուտում:

04.12.2011

ԿՐԻԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՅԱՑՔԸ

Ես վայրի կենդանիներ անսահման սիրում եմ դեռ մանկուց: Երբ փոքր տղա էի, հայրս, մասնակցելով Ղարաբաղյան ազատամարտին, Ղարաբաղից ինձ համար բերեց ջրային կրիաներ: Դրանցից մեկը եվրոպական ճահճային կրիա էր, մի շատ գեղեցիկ նախշազարդ արարած, մյուսը՝ գետային կրիա: Երկուսին էլ շատ սիրեցինք մեր ամբողջ ընտանիքով: Կրիաներից առաջինին անվանեցինք Լեո, մյուսին՝ Բրունո: Այդ անունը ընտրեցինք հենց այնպես, իսկ ահա Լեո անվանումը պատահական չէր. ճահճային կրիան բծավոր մաշկ ունի, հատկապես գլխի ու պարանոցի հատվածում, իսկ լեո արմատը նույն արմատն էր, ինչ ընձառյուծի և առյուծի հունական ծագման անվանումների դեպքում՝ համապատասխանա-

բար լեոպարդ և լեո: Կրիային անվանելով Լեո՝ մենք ցանկացել էինք ընդգծել հատկապես նրա ընձառյուծին՝ լեոպարդին, նման լինելու հանգամանքը և նաև լեո՝ որպես առյուծ, առաջնորդի փաստը, քանի որ Լեոն, ի տարբերություն Բրունոյի, իրոք ավելի ակտիվ ու շարժուն էր, համարձակ, անվախ ու նախաձեռնող:

Մեկ տարի շարունակ ես խնամում էի նրանց, ժամերով դաշտերում որսում միջատներ, հատկապես՝ մորեխներ, որոնց նրանք շատ էին սիրում, հետո խնամքով կերակրում, ստեղծում բոլոր հարմարությունները, որպեսզի նրանք ապրեն հարմարության մեջ: Ձմռանը նրանց հոգ էինք տանում ընտանիքի բոլոր անդամներով, տաքացնում, անգամ ձմեռային հագուստ էինք գործել նրանց համար:

Սակայն եկավ գարունը, և մենք զգացինք, որ կրիաներն իրենց վատ են զգում: Կարծեցինք, թե հիվանդացել են: Բայց բավական էր տանել նրանց դուրս, կամ պահել գարնանային արևի լույսի տակ, և նրանք անմիջապես ակտիվանում էին, աշխուժանում: Հասկացանք, որ այդ փոքրիկ արարածներն ուղղակի ուզում են վերադառնալ վայրի բնություն, կարոտել են իրենց տունը: Եվ ահա որոշեցինք բաց թողնել նրանց: Հորս հետ միասին տարանք կրիաներին Երևանի Ավան թաղամասում մի լիճ և բաց թողեցինք ջուրը: Բրունոն, իր տափակ քար հիշեցնող զրահ-վահանակի ծանրությամբ անմիջապես սուզվեց ջրի տակ, իսկ ահա Լեոն մնաց ջրի մակերեսին ու ապշած և հափշտակված նայում էր շուրջբոլորը: Նրա երջանկությանը սահման չկար: Լեոն լայն բացել էր աչքերը՝ ասես փորձելով հասկանալ, թե ինչ է կատարվում, հասկանալ, թե այդ ինչպե՞ս ստացվեց դա, ի՞նչ հրաշքով: Նրա

աչքերից երևում էր խնդության այն անսահման զգացումը, որը պատել էր նրան: Վերջապես նա տանն էր, բնության գրկում, իր տարերքի մեջ: Կրիայի շունչը ասես արագացել էր երջանկությունից: Նա անմիջապես ու արագ սուզվեց: Ինձ թվաց, թե էլ երբեք չեմ տեսնի իմ սիրելի Լեոյին: Սակայն մի քանի րոպե հետո նա կրկին երևաց ջրի վրա, նայեց ինձ ու ես նրա աչքերում տեսա անսահման երախտագիտություն: Նա կարծես «Շնորհակալություն» էր հայտնում: Կրիան նայեց մի վերջին անգամ, կրկին սուզվեց ջրի մեջ և անհետացավ: Այդ հիշարժան ու հուզիչ տեսարանը ես երբեք չեմ մոռանա: Այդ օրվանից ես հասկացա, որ վայրի կենդանին պետք է ապրի բնության մեջ, ազատության մեջ: Չի կարելի կենդանուն կտրել իր տանից ու զվարճանալ նրանով մեր բնակարաններում: Կենդանիներին հաճախ դարձնում ենք մեր զվարճանքի առարկա, ինչը սարսափելի անարդար է նրանց հանդեպ: Այդ հրաշալի օրվանից ի վեր ես միշտ հորդորում եմ վայրի կենդանիներին ուսումնասիրել, հետազոտել միայն վայրի բնության գրկում, ազատության մեջ՝ չկտրելով նրանց իրենց կեցավայրից: Չգիտեմ, թե հետո ինչ եղավ Լեոյի և Բրունոյի հետ, սակայն ուրախ եմ, որ նրանց ազատ արձակեցինք: Կրիայի՝ մեզ ուղղված այդ վերջին, երախտագիտությամբ լի երջանիկ հայացքը երբեք չեմ մոռանա, այն շատ թանկ է ու վեհացնող: Այդ պահից ի վեր գերագույն ոգևորություն և բավականություն եմ ապրում ամեն անգամ, երբ վայրի կենդանուն ազատ եմ արձակում իր հարազատ միջավայրը:

28.08.2012

ԵՐԲ ԱՆՄՆԱՑՈՐԴ ՍԻՐՈՒՄ ԵՍ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչ ինձ հիշում եմ՝ անսպառ սեր ու նվիրում ունեմ բնության նկատմամբ: Համոզված եմ, որ մարդը կարող է ապրել խաղաղության մեջ միայն, եթե ապրում է բնության հետ խաղաղ գոյակցությամբ և չի վնասում բնությանը, հետևապես՝ նաև իրեն:

Իմ գեղարվեստական գրքերը, արձակ և չափածո գրական ստեղծագործությունները, բնապահպանական նյութերը, հոդվածները մշտապես քարոզում են բնության նկատմամբ սեր, հարգանք, գորովանք ու հոգատարություն՝ փորձելով վեր հանել մարդ–բնություն ազնիվ ու խաղաղ գոյակցության կարևորությունը: Բնության մասին գրելը, բնապահպանական խնդիրներ արծարծելը ոչ թե սոսկ հարգանք է բնության նկատմամբ, այլև ձգտում՝ նպաստելու մեր հասարակության մեջ էկոլոգիական գիտակցության ձևավորմանն ու զարգացմանը: Բնասեր լինել, ունենալ էկոլոգիական գիտակցություն և կրել այդպիսի մշակույթ՝ չի նշանակում սոսկ խնամքով վերաբերմունք ցուցաբերել կենդանական ու բուսական աշխարհի նկատմամբ, այլև բարեկամեցություն, հանդուրժողականություն շրջակա միջավայրի նկատմամբ, սեր ու ներդաշնակություն մարդ–բնություն և մարդ–մարդ հարաբերություններում: Ունենալ էկոլոգիական գիտակցություն՝ նշանակում է կարողանալ անվնաս ու խաղաղ հարաբերվել թե՛ բնության, թե՛ շրջապատող մարդկանց և թե՛ ամբողջ աշխարհի հետ:

Ցավոք, արդի աշխարհում կյանքն այնքան դժվար է ու սթրեսներով լի, որ մարդը հաճախ անտարբեր է դառնում մյուսների նկատմամբ, նա հանդուրժող չէ մեկ այլ մարդու հանդեպ: Ահա թե ինչու դժվար է ակնկալել և հուսալ, որ նա հանդուրժող ու հոգատար կլինի բնության հանդեպ: Սա գիտակցելով՝ երբեմն լինում են պահեր, երբ թվում է, թե բնասեր մարդու ջանքերն իզուր են, և որ մարդ արարածը հեռացել է բնությունից հավետ և անդառնալիորեն: Սակայն դա սխալ է: Ջանքերն ամենևին իզուր չեն, դրանք պահանջված են ու անհրաժեշտ: Այդ բոլոր ջանքերի նպատակն է՝ շատ մարդկանց հասկացնել, որ մենք պետք է փրկենք ու պահպանենք բնությունը, Երկիր մոլորակը, և որ մարդը մոլորակի ապահովության և ապագայի պատասխանատուն է:

Ես հավատում եմ մարդկային գիտակցությանը, խղճին և սրտի ձայնին, հավատում եմ, որ սերն անսահման է, և այն անպայման հաղթանակելու է: Հավատում եմ, որ մի օր մենք բոլորս ապրելու ենք խաղաղության և ներդաշնակության մեջ, բնությանը ավելի մոտ: Ահա թե ինչու չեմ հուսալքվում և շարունակում եմ իմ մշտական ջանքերը: Ահա թե ինչու շարունակում եմ մյուսների հետ կիսել բնության նկատմամբ իմ անսահման սերը՝ անելով իմ համեստ քայլը բնության պահպանության հարցում, դնելով իմ փոքրիկ քարը Երկիր մոլորակի փրկության «ճարտարապետության» մեջ:

Սերն ու հավատն են աշխարհի կործանումը կանխելու միակ ճանապարհը, դրանք են բնության պահպանության ամենազորեղ միջոցները, սերն ու հավատն են միակ ճանապարհը՝ մարդուն մարդ պահելու համար:

Երբ սիրում ես բնությունը, այն պարուրում է քեզ նույն սիրով ու հոգատարությամբ: Երբ նվիրվում ես բնությանը, այն պատասխանում է քեզ նույն նվիրումով ու ջերմությամբ: Երբ պահպանում ես բնության արարածներին, պահպանում ես նաև ինքդ քեզ: Երբ պաշտպանում ես բնությունը, պաշտպանում ես նաև քո արժանապատվությունը: Երբ մաքուր ես պահում բնությունը, մաքուր ես պահում նաև խիղճդ: Երբ մտածում ու ապրում ես այս համոզմունքներով, ապա ներսումդ անմար է մնում բնության նկատմամբ սիրո, հարգանքի, հոգածության ու մեծարանքի զգացողությունը և մարդու խոհեմության հաղթանակի հույսը:

Մաքուր պահել բնությունը՝ նշանակում է մաքրել թափածդ աղբը բառիս բուն և փոխաբերական իմաստներով: Ցավոք, մեր օրերում հաճախ կարելի է տեսնել լուսանկարներ կամ տեսաֆիլմեր, թե ինչպես է աղտոտվում վայրի բնաշխարհը, ինչպես է, օրինակ, արջը խաղում բնության մեջ դեն նետված անվադողով, ջրարջը փորձում համտեսել գարեջրի մետաղյա դատարկ տարան, ինչպես է տառապում ջրլող թռչունը նավթով թաթախված ծովում: Մարդիկ այնքան են աղտոտել շրջակա միջավայրն իրենց, այսպես կոչված, բնության գրկում հանգիստը վայելելիս կամ արդյունաբերական արտանետումներով, որ վայրի բնության բնակիչները լավ ճանաչում են մարդու առօրյան, նրա կենցաղային իրերն ու, հատկապես՝ այն ամբողջ աղբը, որ մարդկանցից շատերը, փնթիների պես, թողնում են իրենց հետևից: Ավելին, կենդանիներից շատերն արդեն «գիտեն», թե ինչ ասել է տոպրակ, պահածոյի տուփ, հյութերի զանազան տարաներ, խորոված ից հետո մնացած կիսահանգած խարույկ, էլ չեմ

ասում՝ ծխախոտի տուփեր, որոնց գծով շատ կենդանիներ ուղղակի մասնագիտացել են: Նրանք ստիպված են այս ամենը լուռ տանել՝ մարդկանց հետևից ուսումնասիրելով դրանք ու, ցավոք, երբեմն էլ համտեսելով տնտեսական, սննդային թափոնները, ինչը հղի է խիստ ծանր հետևանքներով: Հատկապես վտանգավոր են արդյունաբերական թափոնները, թունավոր նյութերի արտանետումները, որոնք ուղղակի աղետալի հետևանքներ են թողնում բնության ու դրա վերարտադրողականության վրա: Մի անգամ աչքովս ընկավ մի լուսանկար, որում սպիտակ արջը թաթով բարձրացրել էր մեքենայի անվադողը՝ կարծես հարցնելով, թե «Ո՞ւմ անվադողն է սա, ո՞վ է այն այստեղ թողել՝ հյուսիսային բևեռի մաքրամաքուր ձյան մեջ»: Փոքրիկ դրվագ, որը վառ կերպով ցույց է տալիս, թե հաճախ որքան անհարկի է մեր միջամտությունը վայրի բնաշխարհի ներկայացուցիչների կյանքում, և թե որքան վնասակար ազդեցություն է ունենում այդ միջամտությունը: Կենդանիները պարտավոր չեն սեփական բնակավայրում իրենց վրա կրել մեր կյանքի բացասական արգասիքները, պարտավոր չեն իրենց աշխարհում շնչել այն ամբողջ թունավորը, ինչը մեզնից հեռու ենք նետում: Մենք մեր կյանքին բնորոշ արգասիքներով հեղեղել ենք երբեմնի կուսական ու մաքուր բնությունը, խաթարել դրա արտաքին տեսքն ու մաքրությունը, իսկ կենդանիները ստիպված են լինում առնչվել այս ամենի հետ: Հիմա հարց. դուք ձեր տանը խնջույքից կամ ուրախությունից հետո աղբը թափո՞ւմ եք հյուրասենյակի մեջտեղում: Իհարկե՝ ոչ: Մենք մեր տներում աղբը չենք թողնում: Դե հիմա մի պահ պատկերացրեք, որ Երկիր մոլորակն էլ է տուն՝ լայն իմաստով, որտեղ ոչ միայն մենք ենք ապրում, այլև վայրի կենդա-

նիները, և մեր բոլորի ընդհանուր տունը նույնքան անհասկանալի, անընդունելի ու անթույլատրելի է աղտոտել: Հենց ունենանք այդ գիտակցումը, որ սա մեր բոլորի տունն է, այն ժամանակ կսկսենք ոչ միայն ինքներս փոխվել և ուղղվել, այլև այդպիսին կդաստիարակենք մեր երեխաներին՝ զերծ պահելով նրանց Բնությունը փչացնելուց, աղտոտելուց, սերմանելով նրանց մեջ սեր և հոգածություն բույսերի և կենդանիների, ընդհանրապես՝ վայրի բնաշխարհի նկատմամբ: Մահաթմա Գանդին ասում էր. «Ազգի մեծությունը և բարոյական առաջընթացը կարելի է չափել նրանով, թե ինչպես է այդ ազգը վերաբերվում կենդանիներին» *(Величие и моральный прогресс нации можно измерить тем, как эта нация относится к животным / The greatness of a nation and its moral progress can be judged by the way its animals are treated)*: Այս խոսքը կարելի է համարել, որպես ցանկացած ազգի, ժողովրդի, պետության որակական ու բարոյական բնութագրիչ և ուղենիշային սկզբունք՝ բնության նկատմամբ ունեցած վերաբերմունքի առումով: Ահա այսպիսի խորքային պիտի լինի բնության, մարդ–բնություն, մարդ–կենդանիներ հարաբերությունների ընկալումը:

Ցավոք, կենդանիների ու, առհասարակ, բնության նկատմամբ ոմանց մոտ հաճախ կա մի տեսակ արհամարհական, օտարական վերաբերմունք: Այնպիսի տպավորություն է, կարծես բնությունը մեզ պետք չէ: Սա խոսում է հասարակության այդ հատվածի արժեքային համակարգի ու գիտակցության մակարդակի տխուր վիճակի մասին: Բնության հանդեպ անթույլատրելի վերաբերմունքը, անտարբերությունը կամ միտումնավոր վնաս հասցնելը անպայման ունենում են անդառնալի հետևանք-

ներ: Անհրաժեշտ է ոչ թե վաղը կամ մյուս օրը, այլ հենց հիմա, հենց այս պահից սկսած մտածել բնության պահպանության մասին ու փոխվել, դադարել բնությունը դիտել որպես անշունչ, ոչ պետքական մի բան կամ էլ կարծել, թե բնությունը մի բան է, որին պետք է տիրանալ, բաժանել, դարձնել եկամտի, հասույթի աղբյուր: Հիվանդ են այն մարդիկ որոնք կարծում են, թե բնությունը միայն իրենցն է, իրենց մենաշնորհը: Բնությունը բոլորինն է, ավելին, ինքը՝ բնությունն է ստեղծել բոլորիս, նա բոլորիս տունն է ու կացարանը: Բնությունը պետք է սիրել և ոչ թե սոսկ խոսքերով, այլ գործով, պահպանել այն, քարոզել բնության պահպանություն, որպեսզի մեր չկշռադատված ու անմիտ քայլերի պատճառով մի օր չհայտնվենք ամայի, անկենդան, մեռյալ մի տափաստանում:

Ցավոք, բնության հանդեպ մարդու վերաբերմունքը, չկշռադատված ու անմիտ լինելուց բացի, հաճախ նաև սարսափելի դաժան է: Օրինակ, երբ դիտում ես կենդանիների սպանդի զարհուրելի լուսանկարներ, թե ինչպես են որոշ վայ որսորդներ աննկարագրելի դաժանությամբ ու անհագուրդ, անառողջ ազարտով սպանում բազմաթիվ կենդանիների, լուսանկարվում սպանված կենդանիների դիերի կողքին, նրան արյունը քսում ճակատներին և նման այլ արտառոց բաներ անում, ապա համոզվում ես, որ դա նույնիսկ որսորդություն չէ, այլ բարբարոսություն, անարգանք և ծաղրանք բնության հանդեպ: Այդ սպանություններն արվում են փողի, զվարճանքի, սպորտային հետաքրքրության ու ազարտի, «պրեստիժի», «հեղինակության» համար (վերջինս շատ կասկածելի և վիճելի է): Այո, մարդ արարածը հաճախ կարող է այդքան դաժան ու բարբարոս գտնվել բնության հանդեպ՝ ստորացնելով կեն-

դանիներին: Որքան հեշտորեն մարդը կարող է դադարեցնել այլ կենդանի արարածի կյանքը, կենդանու սրտի բաբախումը: Մեր հաճույքի համար հաճախ ենք սպանում կենդանիներին, չորացնում նրանց ու պահում ապակեպատ շրջանակներում, հալեցված ապակին լցնում կենդանիների վրա ու նրանցից պատրաստում տարբեր իրեր, զարդեր, զրկում նրանց կյանքից՝ կենդանի արարածից թողնելով նրա խրտվիլակը, մաշկում նրանց ու նրանց կաշվից մեզ համար գոտի, պայուսակ կամ զարդեր պատրաստում, մորթազերծ անում նրանց ու հագնում բնական մորթուց մուշտակներ: Փաստորեն մեր շահի, քմահաճույքի կամ ուղղակի կենդանիների գեղեցկությամբ հիանալու համար մենք անխնա կերպով ոչնչացնում ենք նրանց՝ դարձնելով իր, անշունչ առարկա:

Մի պահ պատկերացրեք, որ այն, ինչ անում ենք նրանց հետ, անեն մեզ հետ: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ անասելի տանջանք ու ցավ ենք պատճառում նրանց: Չենք հասկանում, որ ցավեցնելով կենդանիներին՝ մենք դառնում ենք քարսիրտ ու սառը՝ կորցնելով մարդկային որակները: Որպես հետևանք՝ հեշտորեն ու մեծ հաջողությամբ կարող ենք ցավ պատճառել նաև ինքներս մեզ՝ մարդկանց: Կենդանուն սպանելուց դեպի մարդ սպանելն ընդամենը մեկ քայլ է:

Չի կարելի չընդունել, որ դարեր շարունակ մարդը կենդանիներ է որսացել սննդի համար՝ փորձելով պահպանել իր գոյությունը: Սակայն այն, ինչին հաճախ ականատես ենք լինում՝ պայքար չէ մարդու և կենդանիների միջև սննդի կամ տարածքի համար: Սրանք անգամ ջանքեր չեն՝ կարգավորելու կենդանիների թվաքանակը (ինչը նույնպես մեր գերակայությունը կամ իրավունքը չէ): Սա

ուղղակի սպանդ է, կենդանիների արյունալի սպանդ, որը շարունակվում է մինչ օրս: Ե՞րբ մենք կհասկանանք, որ ամբողջ հասույթը կամ փողը (որը գալիս է կենդանիներին սպանելուց) մի օր վերջանալու է: Ինչքա՞ն արյուն դեռ պետք է թափվի՝ դա հասկանալու համար: Ե՞րբ ենք դադարեցնելու կենդանիների դաժան սպանությունները: Երբ դիտում եմ սպանությունների լուսանկարներ, գիտակցում եմ, որ ես, ցավոք, չեմ կարող այդ պահին լինել աշխարհի այս կամ այն կետում և կանխել կամ թույլ չտալ այդ որսագողերի կրակոցները: Սակայն ես և բոլոր նրանք, ովքեր սիրում են բնությունը, կարող են արձակել պատասխան «կրակ» բոլոր որսագողերի ուղղությամբ և անել դա բնության փրկությանն ուղղված մեր մշտական ջանքերի գործադրմամբ, բնության պահպանության ուղղված մեր գործունեությամբ, բնության նկատմամբ սերը և հետաքրքրությունը մեծացնող մեր քայլերով և արգասիքներով: Մենք պետք է գործենք մեր սեփական օրինակով, գործենք անձնվիրաբար, մեզանից յուրաքանչյուրն իր տեղում և իր միջոցներով՝ անելով հնարավորինը և, եթե պետք է, նաև անհնարինը:

Մարդն իր զարգացման ամբողջ ընթացքում նվաճում է, հաճախ՝ խլում, յուրացնում, զրկում մյուսն արարածներին այն ամենից, ինչը նրանց է պատկանում: Մենք գրավել ու զբաղեցրել ենք կենդանիների տարածքները, ոչնչացրել նրանց կենսամիջավայրները, մենք թողել ենք նրանց շատ քիչ տեղ ապրելու համար, և այս բոլոր ցավալի ու դրամատիկ իրողություններից հետո, երբեմն զարմանում ենք, որ նրանք հայտնվում են մեր քաղաքներում, գյուղերում, տներում, մեր «զարգացած քաղաքակիրթ աշխարհում», զարմանում ենք, որ հայտնվելով մեր

աշխարհում՝ կենդանիները կարող են անգամ վնասել մեզ: Մինչդեռ նրանք մեզանից ուզում են այն, ինչն իրենց է պատկանում: Իսկ մենք հաճախ ենք մոռանում, որ այս մոլորակը միայն մերը չէ, և նրանք հավասար իրավունք ունեն ապրելու Երկրի վրա: Ավելին, նրանք ապրել են այս մոլորակի վրա մեզանից առաջ և, միգուցե, ապրեն նաև մեզանից հետո: Մենք բնաջնջում ենք նրանց, թունավորում, ոչնչացնում նրանց միջավայրը՝ մոռանալով, որ չունենք աշխարհը միանձնյա տնօրինելու իրավունք, չունենք իրավունք աշխարհին վերաբերվելու որպես մեզ պատկանող ինչ-որ խաղալիքի, սեփականաշնորհված «բնակարանի» և չունենք նաև իրավունք սեփականացնելու կամ տնօրինելու այլ արարածների կյանքը: Ո՞վ ենք մենք, որ որոշենք նրանց ճակատագիրը, ո՞վ ենք մենք, որպեսզի փոխենք այդ ճակատագիրը, փոխենք մոլորակի ապագան դեպի վատթարագույնը: Մենք այս մեծ ու հրաշագեղ աշխարհի մի մասն ենք ընդամենը: Այնպես որ սա նրանց հողն էլ է, այս երկինքը միայն մեր համար չէ կապույտ, իսկ արեգակն էլ միայն մեր գոյության համար չէ, որ շողում է: Մենք՝ մարդիկ, կենդանիները և բույսերը, ի վերջո՝ ամբողջ բնությունը մեկ եզակի ու միասնական «տիեզերք է», և մենք չենք կարող ապրել առանց կենդանիների ու բույսերի, ու նաև չպիտի բնաջնջենք ու ավերենք մոլորակը անդառնալիորեն: Բնությունը մեր սիրո ու հոգածության կարիքն ունի: Մտածենք մի փոքր նախքան կենդանի սպանելը կամ որսալը, նախքան շրջակա միջավայր վերացնելը, նախքան գետ կամ անտառ աղտոտելը, նախքան մեր հոգիները աղտոտելը: Կենդանիներն ու բույսերն հաճախ այնքան զեղեցիկ են և, ցավոք, այնքան անպաշտպան ու անօգնական մեր առջև:

Ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլոր այն նվիրյալ բնասեր մարդկանց, որոնք հոգ են տանում բնության, շրջակա միջավայրի և կենդանիների հանդեպ՝ սիրելով նրանց, փրկելով նրանց կյանքը ու ազատություն տալով: Ազատությունը ամենակարևոր բաներից մեկն է բոլոր արարածների համար, ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանիների: Մենք մշտապես փորձում ենք ապրել ազատ և ապահովել մեր ազատությունը: Երբեք չենք մոռանում մեր իրավունքների մասին: Սակայն, դժբախտաբար, հաճախ մոռանում ենք կենդանիների իրավունքների, ինչպես նաև նրանց՝ ազատության, անվտանգության ու խաղաղության մեջ ապրելու անհրաժեշտության մասին: Ժամանակն է կանգ առնելու և հասկանալու, որ նրանք ունեն իրավունք ազատ ու անվտանգ ապրելու իրենց հայրենի տարերքում, իրենց կենսատարածքում՝ վայրի բնության գրկում:

Շնորհակալ եմ բնության նկատմամբ սերը կիսելու համար և այն բոլոր ջանքերի համար, որոնք ուղղված են այս աշխարհը փոխելուն, դարձնելուն այն ավելի լավ վայր ապրելու համար:

Աստված և նրա արարումը՝ բնությունը, մեզ են նայում և տեսնում են ամեն ինչ…

02.04.2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿՅԱՆՔԻ ԶԱՐԿԵՐԱԿԻ ԲԱԲԱԽՈՒՄԸ 4
ԱՅՍ ՊԱՀԻՆ 6
ՄԻ «ԲՈՒՌ» ԿՅԱՆՔ՝ ՀԵԾԱՆՎՈՐԴԻ ՄԵԶՔԻՆ... 18
ՁԵՌՔԸ ԴՆԵԼ ԵՐԵՎԱՆԻ «ՍՐՏԻՆ» 20
ՊԱՐԶ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ 39
ԾԱՂԿԱԾ ԾԻՐԱՆԵՆՈՒ ՃՅՈՒՂԵՐԻ ԱՐԱՆՔԻՑ 40
ԿԵՂՏՈՏ «ԿՐԻՄԻՆԱԼԻՑ» ՄԻՆՉԵՎ ՄԱՔՈՒՐ ՁՅՈՒՆ 46
ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՌԵՔՎԻԵՄ 51
ՃՈՌՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ԱՊՐԵՆՔ... 57
ԳՈՒՆԱՎՈՐԵՆՔ ԿՅԱՆՔԸ 64
ԳԱՐՈՒՆ, ՈՐԸ ՄԻՇՏ ՔԵԶ ՀԵՏ Է 67
ՊԼԱՍՏԻԼԻՆԵ ԱՇԽԱՐՀԻ ԲԱՐԻ «ՏԻՐԱԿԱԼԸ» 71
ԵՐԳԻ ԹՈՎԻՉ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔՈ 77
«ՍՈՒԶԱՆԱՎՈՎ՝ ՍԻՐԵԼԻ ՓՈՂՈՑՈՎ 82
ՓՐԿԵՑ ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԵՎ ՍՊԱՆՎԵՑ
ՔԱՌԱՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴԻ ՁԵՌՔՈՎ 86
ԼՈՒՍԱԲԱՑԸ՝ ԻՆՔՆԱԹԻՌԻ ՊԱՏՈՒՀԱՆԻՑ 92
ԱՆՑՅԱԼԻՑ ԵԿՈՂ ԿՐԱԿԸ 99
ԲՈՒԼԿՈՒ ՄԻԱԿ ՁԱՄԻՉԸ 101
ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԱՆՁՐԵՎ 106
«ՁՄԵՐՈՒԿՈՏ» ԳԻՇԵՐ 107
«ՔՐՏՆԱԾ» ԳՆԱՑՔԸ 114
ԵՐԲ ՍԻՐԱՀԱՐՎԱԾ ԵՍ ԿԻՆՈՅԻՆ 117
ՍԻՐԵԼՈՎ Է ԿՅԱՆՔԸ ՀԻԱՍՔԱՆՉ 119
ԱՌԱՆՁԻՆ՝ ՁՄՈԱՆ ՀԵՏ 122
ԻՄ ԱՄԵՆԱՍԻՐԵԼԻ ՏՈՆԸ 131
ԿՐԻԱՅԻ ՎԵՐՁԻՆ ՀԱՅԱՑՔԸ 134
ԵՐԲ ԱՆՄՆԱՑՈՐԴ ՍԻՐՈՒՄ ԵՍ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ 137

ԱՌԼԵՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՌԵՔՎԻԵՄ

Խմբագիր՝
Արմինե Մովսիսյան

Տեխնիկական խմբագիր՝
Վահե Խալաֆյան

Շապիկի մտահղացումը, գրքի համակարգչային ձևավորումը՝
Առլեն Շահվերդյանի

Շապիկի լուսանկարի աղբյուրը (The source of the book cover's picture)՝ http://www.goodfon.ru/wallpaper/298242.html

Հեղինակի գրական բլոգ-կայքը՝ http://arlenshah.wordpress.com

Հեղինակի էջը «Facebook»-ում՝
https://www.facebook.com/ArlenShahverdyan

«Twitter»-ում՝
http://twitter.com/#!/ashahverdyan

Էլ. փոստ՝
shahverdyan.arlen@gmail.com

Ստորագրվել է տպագրության 21.04.2016:
Տեքստ՝ 148 էջ: Տպաքանակը՝ 200:
Գրքում օգտագործված տառատեսակները՝ «Arial Unicode», «Arial Armenian», «Times New Roman», «ArTarumianHarvats», «ArTarumianHelvetica», «ArTarumianBakhum»:

LIMUSH PRINTHOUSE

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն էլեկտրոնային գիրքը պատրաստել,
խմբագրել և ձևավորել է «Զատիկ Լեոն»
տպագիր գրքի հեղինակը՝
գրող Առլեն Շահվերդյանը:

Էլեկտրոնային գրքի բոլոր իրավունքները
պաշտպանված են օրենքով և պատկանում են
գրքի հեղինակին:

***

This e-Book is Copyright protected.
The file is made, edited and designed by writer
Arlen Shahverdyan, the author of the published
book "The Ladybug Leo".

© All Rights Reserved, 2017

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ Ընթերցող,
եթե ցանկանում եք ունենալ Ձեր ստեղծագործությունների, գիտական աշխատությունների կամ այլ նյութերի նորագույն էլեկտրոնային գիրք, ապա կարող եք պատվիրել այն ստորև հասցեներով կամ էլ. փոստով.

Գրական բլոգ-կայք՝
https://arlenshah.wordpress.com/
Ֆեյսբուք՝
https://www.facebook.com/ArlenShahverdyan
Էլ. փոստ՝ shahverdyan.arlen@gmail.com

ԱՌԼԵՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՌԵՔՎԻԵՄ

Ընթերցողների ուշադրությանն է ներկայացվում գրող, բլոգեր Առլեն Շահվերդյանի «Գարնանային ռեքվիեմ» վերնագրով նոր գիրքը, որը շուրջ 11 տարվա աշխատանքի արդյունք է: Հեղինակի՝ «Զատիկ Լեոն» (Երևան, 2008), «Ամանորյա հեքիաթ» (Երևան, 2009), «Ապրելու իրավունք» (Երևան, 2011) գրքերն արդեն ճանաչվել և սիրվել են ընթերցողների կողմից: Նոր գիրքը գրական էտյուդների հեղինակային ժողովածու է, որում ներկայացված են հեղինակի դիտումները, մտորումները, հուշերը կյանքի ու տարբեր երևույթների, մարդ – բնություն և մարդ – հասարակություն հարաբերությունների, մարդկային կերպարների, ճակատագրերի ու զգացողությունների, քաղաքային մշակույթի մասին: Առանցքում Երևանն է, որտեղ էլ մեծ մասամբ զարգանում են իրադարձությունները: Ժողովածուն արծարծում է անձնային ու համամարդկային, բնապահպանական, հասարակական, խոհափիլիսոփայական նշանակություն ու ընդգրկում ունեցող երևույթներ, խնդիրներ: Էտյուդների զգալի մասը կարելի է գտնել հեղինակի բլոգ-կայքում՝ http://arlenshah.wordpress.com: Դրանք գտնելն առավել դյուրին դարձնելու նպատակով աշխատանքի վերջում նշված է տվյալ կայքէջի հասցեն: Սա հնարավորություն է տալիս գրքի ընթերցողին՝ ծանոթանալու հեղինակի ստեղծագործությունների վերաբերյալ կայքի հայ և օտարազգի բազմաթիվ այցելուների ու մշտական ընթերցողների արձագանքներին, կարդալ նրանց մեկնաբանությունները, հետևել հեղինակի ու նրա ընթերցողների միջև առկա ինտերակտիվ շփմանը:

Գիրքը հասցեագրված է ընթերցողների լայն շրջանի: